ՍԻՐԱՍ

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ

891.99
Ս-55

ՊԵՏՀՐԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ
ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

891.99 ay
U-55

-9 NOV 2011

ՍՈՒՐԱՍ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵԵՐԵՎԱՆ 1939

31 JUL 2013
55470

5005
39

СИРАС

Давид Сасунский

Гиз, Арм ССР, Ереван

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր գրական–ստեղծագործական աշխատանքների հեռանկարում մենք նկատի ունեցինք «Սասնա Ծռերի» ժողովրդական եպոսը հիմք ունենալով՝ գրել «Սասնա Տուն» դյուցազնավեպը:

Այդ աշխատանքին մենք պիտի ձեռնարկեցինք եպոսի հազարամյակի տոնակատարությունից հետո, յերբ նախատեսված բազմաթիվ գիտական արժեքավոր զեկուցումները, ինչպես նաև մեր սկսած պրպտումները ՆՈՐ և հսկայական նշանակություն ունեցող արժեքավոր նյութեր կմատակարարեն մեր եպոսի ծագման, նրա դարաշրջանի և առհասարակ մեր ժողովրդի հերոսական անցյալի մասին:

Բայց ի նկատի ունենալով այն ջերմ հետաքրքրությունը, վոր ունի մեր ընթերցող հասարակությունը դեպի «Սասունցի Դավիթը»,— մենք ընդառաջելով ընթերցողների պահանջին, առնվազն մեկ տարվա աշխատանք պահանջող գործը կատարեցինք հույժ կարն

ժամանակամիջոցում,— եպոսն ամբողջությամբ արձակ պատմելով:

Սույն աշխատությունը, ինչ խոսք, վոր հիմնականորեն այլ կերպարանք կստանա մեր «Սասնա Տուն» դյուցազնավեպում:

ՄԻՐԱՍ

25 *Հունիսի*, 1939 *թ.*
Ցերևան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՍԱՍՆԱՍԱՐ ՑԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

I

Հայոց Գագիկ թագավորն ապրում էր Կապույտ բերդում: Ոչ ծերության նա ուներ մեծ հարստություն, բայց միակ ժառանգն իր միամորիկ աղջիկ դեղեցիկ Ծովինարն էր:

Բաղդադի Խալիֆան, վոր այդ ժամանակներում ավելի զորեղ էր, հայ ժողովրդին շատ նեղություն էր պատճառել, կոտորել ու գերել էր շատ մարդկանց, Գագիկ թագավորին էլ հարկատու էր դարձրել իրեն:

Տարվա սովորական ժամանակին Խալիֆայի յերկու հարկահանները յեկան Հայաստան իրենց հարկը տանելու: Ցերբ նրանք անցնում եյին Գագիկ թագավորի ապարանքի մոտից, տեսան Ծովինարին: Ծովինարը, վոր տասնուչորս որվա լուսնյակի նման լույս կուտար՝ հարկահաններին խելքահան արեց, նրանք սուս ու փուս դարձան Բաղդադ ու ներկայացան Խալիֆային.

— Խարջը բերի՞ք,— հարցրեց Խալիֆան:

— Թագավորն ապրած կենա, ինչ խարջ, ինչ բան,— ասին հարկահանները և Ծովինարի գովքն անելով ասին, վոր Խալիֆան հարուստ է և ամենա-

լավ խարջն այն կլինի, վոր նա Ծովինարին իրեն կլին ուզի։

Խալիֆայի խելքին պառկեց այդ։ Նա մարդիկ ուղարկեց Գաղիկի մոտ, վոր Ծովինարին իրեն կնություն տան։ Սակայն Գաղիկ Թաղավորն իր աղջիկը չտվեց ասելով՝ թե յես խաչապաշտ եմ, Խալիֆան կռապաշտ, իմ աղջիկը նրան չի հասնի։

Խալիֆային շատ բարկացրեց Գաղիկ Թաղավորի մերժումը։ Նա զորք հավաքեց, յեկավ Հայոց աշխարհ և իր մարդկանց այսպիսի հրաման տվեց.— «Քար քաղեցե՛ք, ավազ մաղեցե՛ք, ինչ կա-չկա ժողվեք բերեք, Ծովինարին վողջ-առողջ բերեք իմ պալատ»։

Ու Խալիֆայի զորքերն հարձակվեցին Հայոց յերկրի վրա։ Ամեն տեղ սկսեցին ջարդ ու ավերածություն։ Սպանեցին հազարավոր ջահել-ջիվան։ Գաղիկ Թաղավորի զորքը թեև դիմադրում եր, բայց շատ եր թուլացել։

Ծովինարը ամեն որ կերթար կտեսներ Հայոց յերկրին հասած դժբախտությունը ու շատ կը տխրեր։ Մի որ Ծովինարը մտքը արեց.— «Իմ հերն ինձ պետք է տար Խալիֆային, վոր իմ վզին եսքան մեղք ու արունք չընկներ։ Ինչքա՞ն մարդ սպանվեց իմ պատճառով, քանի-քանի աղջիկ, տղա վորբ մնացին։ Ցավ ես բոլորի վերջն են է, վոր ինձ զոռով պիտի տանեն, ավելի լավ չե՞, վոր յես իմ կամքով գնամ, գուցե ես պատերազմը վերջանա»։

Ու այս մտքերով Ծովինարը գնաց հոր մոտ, համբուրեց հոր ձեռքն ու ասաց.

— Հայրիկ, ի՞նչ կմտածես։

— Քեզ համար կմտածեմ, Ծովինար, Խալիֆան մեզ նեղում է, քեզ է ուզում. բայց յես քեզ վո՞նց տամ նրան. չե՞ վոր նա կռապաշտ է։

— Հայրիկ,— ասաց Ծովինարը,— յես վոր նրան չառնեմ, նա դեռ շատ ավերածություն կանի։ Ափսոս է մեր Հայաստան յերկիր, ափսոս են մեր հազար-հազար մարդիկ։ Ավելի լավ է ինձ տուր Խալիֆային, լավ է յես մենակ կորսվեմ, քան մեր Հայաստան յերկիրն ավերվի։

Գաղիկ Թաղավորը աղջկա խոսքի վրա յելավ խորհուրդ արավ իր պալատականների ու յեպիսկոպոսի հետ։ Մի մասն ասում եր՝ կռվենք, մի մասն ասում եր, թե թուլացել ենք չենք կարող կռիվը շարունակել։ Այդ ժամանակ Քեռի Թորոսը, վոր 17–18 տարեկան եր, ասաց.

— Ծովինարը խելոք է մտածել. լավն են է վոր մի աղջիկ կորսվի քան մի աղդ։ Ծովինարին տանք Թող տանի։ Թե վոր կռիվը շարունակենք, մեր ամբողջ աղդ կկոտորվի։

Գաղիկ Թաղավոր տեսավ, վոր ուրիշ ճար չկա, համաձայնեց աղջկան տալ Խալիֆային կնություն։ Բոլորը, նաև յեպիսկոպոսն էլ համաձայնեցին, վոր խաչապաշտ աղջիկը պնա կռապաշտ Թաղավորին կնություն։

Լուրը տվին Խալիֆային։ Բայց Ծովինարն այսպիսի պայման դրեց։ Նրա քոչքն ու սարայը պետք է Թաղավորի քոչքի ու սարայից առանձին լներ և Թաղավորը պետք է մեկ տարի Ծովինարի մոտ չերթար։

Մելիքսեթ քահանան էլ պիտի ընկերանար Ծովինարին, վոր նրա համար ժամ-պատարագ աներ։

Թագավորն ասաց.

— Համաձայն եմ Ծովինարի պայմանին. իմ նպատակն են եր, վոր ասեն, թե յես, Բաղդասի Խալիֆաս, հայոց թագավորի փեսան եմ։ Թող աղջիկը մնա իր որենքով, յես իմ որենքով, չէ՞ վոր յես արաբ եմ, նա հայ աղջիկ։

Նախքան կռապաշտ թագավորի մոտ գնալը Ծովինարը հրաման առավ հորից ու իր քեռամոր և տաս աղջիկների հետ գնաց գրոսանքի։ Գնաց հասավ ծովափ, ուզեց ջուր խմել, բայց ծովի ջուրն աղի յեր։ Ծովինարը խնդիրք արավ աստծուց, վոր իրեն ջուր հասցնեն։ Այն ժամանակ ծովը ճեղքվեց, յերևաց մի մեծ քար, վորից սառնորակ ու անուշ ջուր եր բղխում։ Ցեվ քիչ հետո ջուրը բռնեց քարի չորս բոլորը։ Ծովինարը իր չորերը հանեց, մտավ ծովը հասավ քարին մեկ բուռ ջուր խմեց, ձեռքը տարավ, բայց այս անգամ հաղիվ կես բուռ ջուր լցվեց. են կես բուռն էլ խմեց ու ջուրը ցամաքեց։ Ցեվ Ծովինարն այդ բուռ ու կես ջրից հղիացավ։

Մյուս առավոտ Խալիֆայի զորքը հեռացավ Հայոց աշխարհից. Ծովինարն էլ Մելիքսեթ քահանան հետն առած Խալիֆայի հետ գնաց Բաղդադ։ Խալիֆան յոթն որ յոթը գիշեր հարսանիք արավ, ապա իր խոստման համաձայն Ծովինարին առանձին ապարանք տվեց։ Ծովինարն էլ յոթը դուռ չինեց իր ապարանքին ու սուդ եր անում։

Ժամանակ անցավ և Ծովինարն իմացավ, վոր ինքն հղի յե, նա կուահեց, վոր ծովի ջրից է հղիացել։ Խալիֆան, վոր այդ բանը չգիտեր, բարկացավ ասաց. «Իմ զաղմից չե Ծովինարի հղիությունը» և վազիրների հետ խորհուրդ անելով վորոշեց Ծովինարին սպանել։

Ցերը դահիճը ներկայացավ Ծովինարին և ասաց թագավորի հրամանը նրա վիզը կտրելու մասին, Ծովինարն ասաց.

— Ձեր թագավորին դատաստան չկա՞, չե վոր հղի կնոջ սպանել նշանակում է մի անգամից յերկու մարդ սպանել։

Այս վոր լսեց թագավորն ասաց. «Սպասեք մինչև յերեխան ծնվի»։

Ինն ամիս ինն որ ինն ժամ ինն բոպե հետո Ծովինարը ծնեց և միանգամից բերեց յերկու տղա։ Մելիքսեթ քահանան կնքեց տղաներին և մեծի անունը դրեց Սանասար, փոքրինը՝ Բաղդասար։

Թագավորն արդեն ժամանակն եր համարում Ծովինարին սպանելու, բայց այս անգամ էլ Ծովինարն ասաց.

— Հապա եդ թագավորն որենք չունի՞ ծծմորը վոր սպանեն, բա երեխեքին ո՞վ խնամի։

Թագավորը տաս տարի էլ ժամանակ տվեց Ծովինարին մինչև յերեխեքը մեծանան։

Սանասարն ու Բաղդասարը մեծացան, աշխույժ առուրդ տղաներ դարձան։ Մելիքսեթ քահանան նրանց կարդալ-գրել սովորեցրեց և յոթ տարեկան ժամանակ նրանք իրենց մորից իմացան իրենց ծննդյան գաղտնիքը, իմացան, վոր իրենք Խալիֆայի տղաները չեն և իրենց պապը մոր կողմից հայոց թագավոր Գագիկն

է։ Թաղավորը նրանցից կվախենար և կսպասեր տաս տարին լրանալուն, վոր նրանց էլ մոր հետ վերջ տա։

Ժամանակ անցավ, Սանասարն ու Բաղդասարը տեսան, վոր իրենց մոր սիրտը կոտոր է՝ հարցուցին.

— Մարե՛, ինչու քո աչքից արտասունքն անպակաս է։

Մայրն ասաց տղաներուն, վոր չուտով տաս տարին կլրանա և Թաղավորը նրանց բոլորին պիտի սպանի։ Տղաները մորը սրտապնդեցին, թե հանդիստ կաց Թաղավորի ձեռքից եղ բանը չի դա։

Մի որ էլ Սանասարն ու Բաղդասարը կից սենյակում խաղի հետ էին, իսկ Ծովինարը լալիս էր, ներս մտավ դահիճն ու ասաց Ծովինարին.

— Եսոր ձեր վիզը պիտի կտրենք. տաս տարին լրացավ։

—Մեր վիզ կտրե՞ք,—ասաց Ծովինարը,—ձեր ձեռ կերթա՞, վոր ես իմ տղաներու վիզ կտրեք։

Դահիճներն ասին՝ չատ էլ ափսոսում են իրեն ու տղաներին, բայց Թաղավորական հրաման է, պիտի կատարեն։

Մայրը խնդրեց, վոր ցածր խոսեն, վոր տղաները չիմանան, ապա նախ իրեն սպանեն, հետո տղաներին։

Սանասարն ու Բաղդասարը ձեն առան և մոր սենյակը մտնելով տեսան սրերով մարդիկ։ Հարցրին թե ինչու յեն յեկել, մայրը սկզբում չուզեց ասել, բայց յերբ Սանասարը չատ պնդեց, մայրն ասաց, վոր իրենց վերջին որն է և Թաղավորն ուզում է իրենց սպանել տալ։

—Իսկ մեր վիզը կտրողն ո՞վ է,— հարցրեց Սանասարը։

— Ա՛յ ես մարդը,— ասավ Ծովինարը և ցույց տվեց Դահիճին։

Սանասարը, վոր հսկա մարդ եր դարձել, մի ուժեղ ապտակ տվեց դահիճին։ Դահիճի մարմինը մնաց, գլուխը թռավ։

Լուր տվին Խալիֆային։ Նա բարկացավ, զորք ուղարկեց, վոր բոլորին կոտորեն, բայց Սանասարն ու Բաղդասարը զորքի կեսը վոչնչացրին։

Խալիֆան տեսավ, վոր սրանք սովորական մարդիկ չեն, հասկացավ, վոր Ծովինարն անմեղ եր, նրա տղաներն էլ դյուցազուններ եյի Ծովից ծնված, ուստի վերջ տվեց կռվին և հայտարարեց.

— Ծովինարն իմ կինն է, և Սանասարն ու Բաղդասարն իմ տղաները։

Անցավ ժամանակ, Բաղդադու Խալիֆան, վոր ուխտ էր կապել Գագիկ Թագավորի հետ, թե Ծովինարին առնելով էլ խաբջ չի վերցնի Հայոց յերկրից՝ դրժեց իր ուխտը և զորք հավաքեց ու գնաց կռվի։ Կոտորեց, թալանեց չատ գյուղեր, շրջապատեց Գագիկի Կապույտ բերդը։ Ամեն ինչ թանդեց, հացը պակասեց։ Բայց այս անգամ Գագիկ Թագավորը հավաքեց իր կտրիճ-ջահել տղաներին և կռիվ բռնեց Խալիֆայի հետ, լուսադեմին հարձակվեց զորքի վրա, թշնամու զորքը խառնվեց իրար և այլևս ընկեր-ընկերոջն էլ չեր ճանաչում ու սկսեցին մեկ-մեկու կոտորել։ Խալիֆան տեսավ, վոր նեղ տեղն է ընկել, չուտով իրեն էլ կսպա-

նեն, նստավ իր Շամա ուղտը և դևի զորությանը դիմելով, ասաց.

— Ո՛վ Մեծ Կուռք, ինձ ազատիր հայոց վրեժխնդրությունից և յես քեզ զոհ կբերեմ Սանասարին ու Բաղդասարին:

Այդ դիշեր Ծովինարն յերազում տեսավ, թե Սանասարին ու Բաղդասարին ինչ վտանգ է սպառնում և նրանց փախցրեց Հայոց յերկիր: Յերբ Խալիֆան յեկավ Ծովինարին ասավ, վոր իր կուռքերին խոստացել է զոհել տղաներին, Ծովինարն ասավ.

— Քո տուն չավրի, քիչ երինջ ու վոչխար ունես, վոր տղաներ կուզես զոհել, չե՞ վոր դու ասիր, ենոնք քու էլ տղաներն են: Բայց ինչպես դիտես ենպես էլ արա, համա ո՞ւր է Սանասա՞ր, ո՞ւր է Բաղդասա՞ր:

Սանասարն ու Բաղդասարը ձիերն հեծած ընկան ճամբա. հասան մի դետի, տեսան, վոր սարից զուլալ ջրով մի բարակ առու դալիս խփում է դետին, կտրում կես է անում, ապա նոր միանում դետին ու առաջ գնում: Բաղդասարն ասում է, թե ես ջուրը Աղնանցորդու ջուրն է, ով եղ ջուրը խմի կտրիճ կլինի:

— Ճիշտ է,— ասում է Սանասարը,—բայց ով ես ջրի ակը գտնի ու տունն ենտեղ չինի, նրա զարմն էլ զորեղ կլինի:

Յերկու յեղբայրն այս խորհրդով անցան մեծ դետը և զուլալ առվի ուղղությամբ գնալով անցան ձոր, անդունդ, քար-կապան, հանդիպեցին անտառի, արջի դաղանի, հասան մի բարձր սարի ու ենտեղ գտան զուլալ ջրի ակը: Բայց տեղն անմարդաբնակ եր,

նրանք տեղը նշան արին ու զանազան կողմեր գնալով, թե վորս եյին անում և թե քարեր բերում բերդ սարքում:

Աշխատելուց շատ հոգնեցին ու մի որ յեղբայրները խորհուրդ արին, վոր եսպես մենակ աշխատելով բան չի դառնա, ալնի միս ուտելով հոգնեցինք: Միասին գնացին Մուշ, ապա Երզրում, բայց նրանց վորևե դործի չընդունեցին, բոլորը վախենում եյին, վոր նրանց ընդունելով իրենց կթշնամացնեն Բաղդասի Խալիֆային: Այն ժամանակ յեղբայրներն իրենց ինքնությունը թաղցնելով ծառայության մտան Մանձկերտու Թեվադորոս թագավորի մոտ: Թագավորը շուտով համոզվեց, վոր սրանք կտրիճ դյուցազներ են, մանավանդ, վոր Սանասարն ու Բաղդասարը կատարում են մի քանի հանձնարարություններ, յերկուսով վոչնչացնում են ավազակների մեծ խմբեր: Բայց խաղերի ընթացքում իրենց ուժի շնորհիվ նրանք վնասեցին պալատական մի քանի տղաների, այդ պատճառով թագավորը, բողոքներ լսելով, վորոշեց նրանց քշել քաղաքից:

Յեղբայրները, թագավորի թույլտվությամբ, մի քանի մարդ իրենց ընտանիքներով վերցրին ու դարձան իրենց սարը, վորոշելով այնտեղ բնակություն հաստատել, վոր այլևս իրենց սեփական տուն ու տեղն ունենան և ազատվեն թափառական կյանքից:

Յեկան հասան սարը: Նոր բնակիչների համար տներ կառուցեցին, ապա Սանասարն ու Բաղդասարը իրենց հսկայական ուժով մեծ-մեծ քարեր բերին, տաշեցին-տաշտեցին, դիշեր-ցերեկ աշխատելով, կառուցեցին մի հսկայական բերդ:

5005

Ի՞նչ անուն դնեն այդ հսկա բերդին, ինչ անուն եվ ընտրում էին, վոչ մի անունը չեր սազում, վերջը հրավիրեցին մի ծերունու, վոր բերդին անուն դնի։ Ծերունին ման յեկավ բերդի չորս կողմն ու ասաց.

— Այ տղերք, ես ինչ տո՛ւն, ես ինչ բե՛րդ, սա սասո՛ւն է սասո՛ւն։

Ցեվ բերդի անունը դրին ՍԱՍՈՒՆ, տան անունն եվ Սասնա տուն։

Մի որ եվ Սանասարը Բաղդասարին ասաց.

— Մենք ծովու ծնունդ ենք, երթանք ծովի բերան մեզ ձի գտնենք։

Գնացին։ Բաղդասարը վախենում եր ծովից, իսկ Սանասարը համարձակորեն իրեն ծովը գցեց. ծովը բացվեց. Սանասարն իջավ հատակը, տեսավ պարտեզ, քոչք ու սարայ, Քուռկիկ Ջալալին եվ ենտեղ կապած։ Սանասարը աստծու անունը տվեց ու դնաց տիրացավ ապարանքում յեղած Խաչ Պատերազմին, Թուր Կայծակին, զրահին, զուրզին, նիզակին, նետ ու աղեղին, վահանին և դարբասի աղբյուրի ջրի մեջ լողանալով մեծացավ, զորացավ, ուժեղացավ, ապա սիրտ առնելով մոտեցավ Քուռկիկ Ջալալուն։ Տեսնելով Սանասարին Քուռկիկ Ջալալին ասաց.

— Հողածին, միտքդ ի՞նչ է։

— Քեզ պիտի հեծնեմ,—ասաց Սանասարը։

— Քեզ կտամ արեգական կայրեմ։

— Ծովային եմ, ինձ կտամ քո փորի տակ։

— Քեզ կխփեմ գետնին, կզլորեմ անդունդ։

— Ծովային եմ, ինձ կտամ քո մեջքին։

Ցեվ Սանասարը հեծավ ձին. ձին տեսավ, վոր Սանասարը բոլոր հնարքները գիտե, ասաց.—«Ցես քո ձին եմ, դու իմ տերը»։

Ցերբ Սանասարը Քուռկիկ Ջալալին նստած մոտեցավ Բաղդասարին, վերջինս լաց եր լինում, կարծելով, վոր յեղբայրը խեղդվել է. նա չեր ճանաչում զրահավորված, մեծացած Սանասարին։ Ցերբ Սանասարն ամեն ինչ պատմեց, Բաղդասար շատ ուրախացավ և յերկու յեղբայրները համբուրվեցին ու վերադարձան Սասուն։

Ցերկու յեղբայրները մի ժամանակ ապրեցին։

Մի գիշեր եվ, յերբ Բաղդասարը քնած եր, տեսնի, ի՞նչ տեսնի։ Բաղդադի Խալիֆայի Մեծ Կուռքը այծի կերպարանք առած յեկավ կանգնեց իր գլխավերև ու սկսեց մըկըկալ։ Այդպես մըկըկաց մինչև լուս, Բաղդասար ամբողջ մարմնով կսրթսրթար ու չեր կարողանում քնել։

Մի ամբողջ ամիս կուռքն այդ ձևով գալիս մըկըկում եր ու տանջում եր Բաղդասարին։ Բաղդասարի դեմքը դեղնեց, թուլացավ, հիվանդացավ։ Տեսնելով, վոր յեղբայրը ձեռքից գնում է, Սանասարը հարցրեց.

— Բաղդասա՛ր, ինչո՞ւ յես հիվանդացել. քանի կաշխատեյինք, բերդը կշինեյինք շատ ուրախ եյիր, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ յես նոթերդ կախել։

— Ե՛հ, ախպեր, դու ինչի՞ց ես խաբար։ Մեկ ամիս է Մեծ Կուռքն ինձ կտանջե, չեմ կարող քնել։ Սանասա՛ր, յես վորոշել եմ գնալ Բաղդադ, կամ թող Խալիֆան ինձ մատաղ անի Մեծ Կուռքին, մեռ-

նեմ, ազատվեմ ես ցավից, կամ էլ թե աստված հաջողեց, յես Խալիֆային մատաղ կանեմ։ Համ էլ շատ եմ կարոտցել իմ մորը, յերթանք նրան էլ ազատենք բերենք, թող մեզ հալալ մերությունանի։

— Աստծով, Խալիֆան մեզ չի կարող մորթել,—ասաց Սանասարը։

Մյուս առավոտ յերկու յեղբայրները մի քանի սասունցիների հետ ճամբա ընկան, գնացին հասան Բաղդադ։ Բաղաքից դուրս, դաշտի մեջ նրանք իրենց վրանը զարկեցին։ Բաղդասարը Սանասարի խորհրդով գնաց մորն աչքալուսանք տալու, վոր յեկել են։

Ցերը Խալիֆային լուր տվին, վոր տղաները յեկել են, նա ուրախացավ, ասաց։

— Տեսա՞ք թե ինչքան զորավոր է Մեծ Կուռքը։ Նա իր մատաղներին իրենց վոտքով քաշեց բերեց իր մոտ։

Հետևյալ որը Խալիֆան իր մոտ կանչեց Սանասարին ու Բաղդասարին և բարկացած ասաց։

— Այ շան լակոտներ, եղ ո՞ւր եյիք գնացել։ չը-գիտեյի՞ք, վոր Մեծ Կուռքն ենքան զորավոր է, վոր ուր էլ գնայիք՝ ձեզ կբերեր։

Սանասարն ու Բաղդասարը փոխնեփոխ պատասխանեցին։

— Հերիկ, մեռնինք քեզ, մենք վոր մորից ծնվել եյինք, աշխարհ չեյինք տեսել։ գնացինք աշխարհը ման յեկանք, բայց կուռքերի ձեռքից չազատվեցինք։ Նա մեզ տանջում եր։

— Լա՜վ,—ասաց Խալիֆան գոհունակությամբ,— դե պատրաստվեցեք կռատուն գնալու, հսոր ձեր վերջին որն է։

Սանասարը քիչ մտածեց, ասաց։

— Թագավորն ապրած կենա, մի բան, վոր մեզ մատաղ պիտի անես։ վայ՞լ է, վոր մեզ տանես զաղտուկ մորթես։ Լավ չի՞ լինի, վոր ժողովուրդ հավաքես, մեծ հանդեսով մեզ զոհես, վոր բոլորը տեսնեն քո կուռքերի զորությունը և ավելի մեծանա քո և քո կուռքերի վառքը։

Թագավորը տեսավ, վոր Սանասարը խելոք խոսք է ասում, համաձայնեց։ Տղաներին թույլ տվեց, գնան իրենց մորը հրաժեշտ տան իսկ ինքը մունետիկ կանչել տվեց ու մեծ բազմություն հավաքեց իր հանդիսավոր զոհերի համար։

Ծովինարը աղի արցունք կթափեր ու մեկ Սանասարին կհամբուրեր, մեկ Բաղդասարին։

Հետևյալ առավոտ բոլորը հավաքվեցին կռատուն։ Սանասարը ձին թողեց Բաղդասարի մոտ, ինքն առաջ գնաց և յեղբորը պատվիրեց։ «հենց վոր ձայն տամ, ձին ինձ կհասցնես, մնացածը յես գիտեմ»։

Ցերը Սանասարը կռատուն մտավ, թագավորը հարցրեց։

— Բա ո՞ւր է յեղբայրդ։

— Թագավորն ապրած մնա, նա փոքր է, կվախենա,առաջ ինձ զոհիր, հետո նա կգա նրան էլ կզոհես։

— Լավ, իմ Կուռքի զորությունը նրան էլ կբերի։ Դե՛ դու հիմա յերկրպագիր Մեծ Կուռքին, վոր քեզ զոհեմ։

Սանասարը կանգնեց տեղում, ենպես ցույց տվեց, վոր չգիտի յերկրպագելու ձևը, դարձավ ասաց։

— Ցերբ մենք եստեղից գնացինք փոքր էյինք, քո կուռքի զորությունը չգիտեյինք։ Ցես յերկրպագելու ձևը չգիտեմ, ցույց տո՛ւր, ի՞նչպես յերկրպագեմ։

Խալիֆան ցույց տվեց թե ինչպես պետք է յերկրպագել։

Ցերբ Սանասարը կռացավ յերկրպագելու, Խալիֆան դանակը քաշեց, վոր թրկունքից զարկի Սանասարին։ Սանասարը նկատելով այդ, վոտքով այնպես հարվածեց, վոր Խալիֆան գլդիգլոր գնաց ընկավ բազմության մեջ։ Սանասարը կանչեց.

— Բաղդասար, ձին բեր։

Բաղդասարը Քուռկիկ-Զալալուն հասցրեց յեղբորը։ Սանասարը հեծավ ձին և յերկու յեղբայրներով կռվի բռնվեցին թագավորի զորքերի հետ, վոչնչացրին բոլորին։ Ապա Սանասարը բռնելով թագավորին, բերեց տուն կապեց մի սյունի, դինի և ուտելիք պահանջեց և յեղբոր ու մոր հետ թագավորի աչքի առաջ կերան խմեցին, ուրախացան։

— Դե թագավորն ապրած մնա,—ծաղրեց Սանասարը,—ո՞ւր է քո զորավոր կուռքը, ինչո՞ւ քեզ չի ոգնում։

Թագավորը սեասրտվել ձայն չեր հանում։ Իսկ Ծովինարն իր տղաների հետ խնճույք կաներ ի պատիվ իրենց ազատության։

Լուրը հասավ Գագիկ թագավորին։ Նա ծերացել եր և կուզեր մեռնելուց առաջ տեսնել իր դյուցազուն թոռան։ Նա թուղթ գրեց և խնդրեց, վոր Սանասարը գնա իրեն մոտ։

Սանասարը պապի խոսքը չկոտրեց. պատրաստություն տեսավ գնալու և Բաղդասարին պատվիրեց։

— Խալիֆային եսպես կպահես, բաց չես թողնի մինչև յես գամ։

Սանասարի գնալուց հետո Բաղդասարն ամեն որ գնում եր վորսի։ Մի որ էլ, յերբ Բաղդասարը գնացել եր վորսի, Խալիֆան մի կերպ իր աղջկան մոտը կանչեց և իր կապերը քանդելով ազատվեց։

Նա անմիջապես գնաց քաղաք, հավաքեց իր իշխաններին և խորհուրդ արավ թե ինչպես վոչնչացնի Բաղդասարին։ Վորոշեցին Բաղդասարին տանել Ախմախու սար, վորս անել, սեղան սարքել, Բաղդասարին թթու գինով հարբեցնել, վորպեսզի նրան թուլացնեն, սպանեն։

Այսպես էլ անում են։ Ցերբ Բաղդասարն ուրդեն հարբել եր, Խալիֆայի մարդիկ դուրսերն առան և հարձակվեցին նրա վրա։ Բայց վախենում էյին և հեռվից էյին զարկում։ Աստծու հրամանով վոչ մեկ գուրզ չդիպավ Բաղդասարին։

Այդ ժամանակ Սանասարը տեսավ, վոր Բաղդասարի աստղը խավարել է։ Հասկացավ, վոր յեղբայրը նեղության մեջ է և նրան ոգնության հասնելով սպանեց թե Խալիֆային, թե իշխաններին, մորն ու յեղբորը և ամբողջ ժողովրդին ազատեց բռնավորից։ Ծովինարը գոհություն հայտնեց աստծուն իր տղաների, յերկրի ու ժողովրդի ազատության համար։

Ծովինարն իր յերկու տղաներով վերադարձավ Հայաստան Գագիկ թագավորի մոտ։ Թագավորն ուզեց Սանասարին տալ իր ժառանգությունը, բայց Սա-

նասարը հրաժարվեց, ասելով, թե ուզում է գնալ ապրել Սասուն: Նա մոր խորհրդով վերցրեց միայն Ծովասարը, Մարութիկա լեռը ու ձագաղջուրը:

Կարճ ժամանակից Սանասարի համբավը տարածվեց ամենուր, շատ-շատերն յեկան ապրելու Սասուն, ուր մարդիկ ազատ եյին, բռնակալներին հարկ չեյին վճարում և իրենց իշխանավորն ել լավ ու բարի մարդ եր: Սասունը մեծացավ, շատացավ, դարձավ մեծ քաղաք:

II

Այդ ժամանակ Պղնձե քաղաքում իշխում եր Քաջանց Թագավորը: Նրա աղջիկ Քառասուն ձյուղ-Ծամ Դեղձուն Ծամը յերազում տեսավ Սանասարին, հավանեց նրան և ուզեց, վոր Սանասարը իր ամուսինը լինի: Նա մի կուժ լիքը ջուր լցրեց—բերնին խնձոր դրեց, մեկ կուժ ել դատարկ— ելի բերնին խնձոր ու եպիսի թուղթ դրեց Սասուն.

«Քաջանց Թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամից շատ բարև Սանասարին, շատ բարև Բաղդասարին,— Սանասարին: Սանասա՛ր, յես Պղնձե քաղաքի Թագավորի աղջիկն եմ, իմ սիրտը սուրբ է քանց ես դատարկ կուժը, իմ գլուխը լիքն է, քան ես լիքը կուժը: Շատերն եկան ինձ ուզելու, բայց յես վոչ մեկին խոսք չեմ տվել, յերազով քեզ եմ տեսել, հավնել, արի ինձ առ: Թուղթս վոր առար, թե գլուխդ թրջել ես՝ ես-տեղ կնստիր, արի հասիր ինձ»:

Ցերկու աղջիկ աղավնու թև առած Դեղձուն-Ծամի

նամակը բերին Սասուն, բայց նրանք սխալմամբ նամակը փոխանակ Սանասարին նետելու, նետեցին Բաղդասարին: Բաղդասարը զարթնեց, նամակը կարդաց և շատ նեղացավ, վոր աղջիկն իրեն մեկ բարև է գրել, յեղբորը յերկու, վոր աղջիկը յեղբորն է ուզում և վոչ իրեն: Նա, վոր ծնունդ եր առել մոր խամած կես բուռ ջրից մի քիչ խենթավուն եր, նա սրտնեղեց, կարծելով թե յեղբայրն իրենից գաղտնի գործեր է բռնում և գնաց յեղբոր հետ կռիվ բռնվեց: Կռվի ընթացքում Սանասարը խղճաց յեղբորը և չեր խփում, իսկ Բաղդասարը խփում եր սրտանց, բայց չեր հաջողվում: Սանասարը յեղբոր ուժը փորձելու համար վերջը մի հարված տվեց և Բաղդասարն ուշաղնաց յեղավ: Ծովինարը, վոր դիտում եր յեղբայրների կռիվը, վրա հասավ, մյուս կողմից ել Սանասարն յեկավ և տեսան, վոր Բաղդասարը չի մեռել: Տուն դարձան և Բաղդասարը յերդվեց, վոր ել յեղբոր դեմ չի գնա, նրան հանձնեց իբրև ավագ յեղբոր: Սանասարն ուզեց գինել Դեղձուն-Ծամին յեղբորը, բայց Սանասարը չը համաձայնեց:

Սանասարը ճին հեծավ, գնաց դեպի Քաջանց յերկիր: Ճամբին հանդիպեց մի ծերունու, վորից խորհուրդ հարցրեց, թե ինչ ճամբով գնա: Ծերունին բացատրեց, թե մեկ ճամբով գնացողը կդառնա թագավոր, մյուսով գնացողը՝ վաճառական, իսկ յերրորդը տանում է Քաջանց յերկիր: Բայց ճամբան լի յե դժվարությամբ:

Սանասարն ընտրեց Քաջանց յերկրի ճամբան:

Հասնելով Քաջանց Թագավորի հովվին, Սանասարը հովվից հյուրասիրվում է մի տաշտ կաթով,

տաշտի մեջ կարող եր չորս մարդ լողանալ: Սանասարը բրդում ուտում է կաթը և հովիվը համոզվում է, վոր սա քաջ մարդ է:

Քաղաքի պարիսպների մոտ Սանասարը հանդիպեց քառասուն մարդու, վորոնք ծերացել ու մաղերը դեղնել եյին. Սանասարը տեղեկացավ վոր դրանց հմայել է աղջիկը: Սանասարը այլևս քաղաք չմտավ, մի պահ հեռացավ, ապա միայն դիշերը պարսպի վրայից իր ձիով թռավ քաղաքի ներսը և հյուրընկալվեց մի հայի պանդոկում:

Ցերեկոյան Սանասարը հարցրեց պանդոկապետին.

— Ասում են, թե ես քաղաքի թագավորը մի աղջիկ ունի, ի՞նչ հունարի տեր, ի՞նչ տեսակ աղջիկ է:

— Եհ, քեզ ինչ. քու ձեռքեն ի՞նչ կուգա,— պատասխանեց ծերունին,— չլինի՞ միտք ունես նրան առնես. չլինի եղպիսի փորձ անե՞ս, եդ աղջիկը հըմայք ունի, մեղք ես, քեզ կփչացնի:

— Չե՛, ոտար մարդ եմ, կուզեմ բան-ման իմանալ. գնալ ուզիչ տեղ պատմել. յես ի՞նչ գործ ունեմ թագավորի աղջկա հետ: Բայց հետաքրքիր է, ասա տեսնենք, ի՞նչն է եդ աղջկա հմայքը:

Պանդոկապետը Սանասարի հետ դուրս գնաց, ցույց տվեց թագավորի պալատն ու ասաց.

— Այ, կտեսնե՞ս, թագավորի պալատի առաջ, են մեծ սան վրա դրված է վոսկի խնձոր, են բուրգի գլխին եկ տե՛ս դրված է են ծանր-ծանր դուրը, ով են խնձորը ցած բերի, հետո եկ են դուրը ինչեցնի, դրանից հետո եկ գնա ծովը ենտեղի վիշապին զարկի սպանի ու բերանի ակը թոցնի բերի, առավոտյան

եկ գնա աղջկանը իր սենյակում մերկ տեսնի,—ա՛յ ես բոլորից հետո աղջկա հմայքը կվերանա ու ով որ ես բաներն անի աղջկան իրան կին կառնի:

— Եհ, ախո՛, յես ինչ եմ, վոր եդ բաներն անեմ, հարցմուք եր արի, կերթամ ուրիշ քաղաքներ կըպատմեմ, թե Պղնձե քաղաքում եսպես- եսպես բաներ կան: Դե գնանք տուն, քունս տանում է:

Գնացին տունը պառկեցին: Ցերը ծերունին քնեց, Սանասարը նստեց տեղի մեջ. նա հանդիստ չուներ. նա մտածում եր ծերունու պատմածների մասին: Քիչ հետո Սանասարը դաղտուկ դուրս յեկավ սենյակից, նստեց Քուռկիկ Ջալալին քշեց թագավորի պալատի մոտ, մի թռիչք դործեց վոսկե խնձորը սյունի վրայից ցած բերեց, դրեց ծոցը, մի թռիչք եկ դործեց՝ դուրդը բուրդի վրայից ցած բերեց և այնպես ամուր չպրտեց, վոր դետնին՝ դուրդի ընկած տեղը մեծ փոս փորվեց: Ապա Սանասարը ձին քշեց գնաց ծովը, կռվի բռնվեց վիշապի հետ, Թուր Կայծակով ջարդեց վիշապի գլուխը և ակը հանեց նրա բերնից: Վիշապը փնչաց և ծովի ջուրը բարձրացավ, անձրևի նման թափվեց քաղաքի վրա:

Սանասարը ուրախացած ձին հետ քշեց մտավ քաղաք. նա նորից անցավ թագավորի պալատի կողքից, մոտեցավ Դեղձուն-Ծամի լուսամուտին ու ի՞նչ տեսնի. մի հուր հրեղեն աղջիկ, մորե մերկ իր սենյակի մեջ կպտտի: Սանասարը հիացած Դեղձուն-Ծամի գեղեցկությամբ, հայիլ-մայիլ յեղած նայեց նրան, ապա

նորից հետ գնաց ու գաղտուկ մտավ Ծերունու տունը, պառկեց անկողնում:

Ցերը Ծերունին առավոտյան զարթնեց, տեսավ, վոր Սանասարը դեռ քնած է, Ծերունին նրան զարթեցրեց. Սանասարը նստեց տեղում ասաց.

— Պապիկ, ես գիշեր քամի փչեց, Սասնա սարեն սև ամպ յեկավ, անձրև բերեց, քաղաք թրջեց:

Առավոտը Թադավորը մունետիկ կանչել տվեց.

«Ման յեկեք, տեսեք ինչ մարդ է յեկել մեր քաղաք: Ո՞վ է ակունքը վիշապի բերանից հանել, ո՞վ է տարել իմ աղջկա վոսկե խնձորը, գտեք բերեք գլուխը կտրենք»:

Մունետիկները քաղաքը ման յեկան, վերջը գնացին Ծերունի հայի մոտ հարցնելու, թե նրա պանդոկում մարդ չի՞ իջեվանել, բայց Ծերունին, վոր Սանասարին իր խելքով բանի ընդունակ չեր համարում, ասաց. «Այստեղ ոտարական չկա»: Սանասարը լսեց և ասաց. «Ինչո՞ւ չկա, յես ոտարական չեմ հասա»: Մունետիկները տեսան ջահել լավ տղայե, ասին. «Արի քեզ պահենք, թե չե թագավորը քեզ կսպանի»: Սանասարը ձեռը տարավ ծոցը վոսկի խնձորը հանեց ու ասաց թե՝ «Գնացեք թագավորին ասեք, թե վոսկե խնձոր տանողին տեսել ենք»:

Լուրը տարան թագավորին, նա կանչեց Սանասարին ասաց.

— Դե, ինչպես վոսկե խնձորը են սան գլխից ցած ես բերել, տար դիր տեղը, տեսնեմ կարո՞ղ ես, վոր կարողացար՝ աղջիկս քեզ կտամ, թե չե՝ վիզդ զարկել կտամ:

Սանասարը ձին հեծավ, մի թռիչք գործեց ու խնձորը տեղը դրավ: Թագավորն ասաց.

— Եղ քո ձիու շնորհիվ եր, մեկել պայմանն են է, վոր ինչպես են գուրզը բուրգի գլխից քաշել ես դուրս, պետք է ելի հետ դնես բուրգի գլուխ: Վոր եդ անես, աղջիկս քեզ կտամ, թե չե վիզդ կզարկեմ:

Սանասարը գնաց, ծանր գուրզը վերցրեց, ձեռքի մեջ պտտացրեց ու գցեց բուրգի գլուխ:

— Կերեվա, վոր դու գորեղ կորիճ ես, յես ունեմ 60 փահլեվան, ամենն էլ չղթայել բանտ եմ դրել: Նրանց դուրս կթողնեմ, հետները կռիվ արա, թե հաղթեցիր աղջիկս քեզ կտամ:

Սանասարը համաձայնվեց, բայց պայման դրեց, ասավ.—«Ցես յերեք որով եմ յեկել, չեմ կարող շատ մնալ. փահլեվաններին վոչ թե մեկ-մեկ հան, այլ 60-ը միասին, վոր մի որվա մեջ կռիվս վերջացնեմ»:

Թագավորը հասկացրեց, վոր 60-ը միասին անմիջապես Սանասարին կփրթփրթեն, բայց Սանասարը չվախեցավ, ուզեց բոլորի հետ մեկտեղ կռվել:

Փահլեվանները դուրս յեկան, Դեղձուն-Ծամն էլ կանչնած կռիվը կդիտեր: Սանասարը վոգեվորվեց, ձին հեծավ, դյուցազնական զարկով մեկը մյուսի՝ հետևից ջարդեց, մինչև իրիկուն սպանեց 20-ին, հետո դիշերը 10-ին, հետո մյուս որը մինչև իրիկուն ելի 10-ին, մնաց 20-ը: Սանասարը հոգնեց, արյունով ու լեշերով շրջապատված, նա այժմ հազիվ պաշտպանում եր իրեն:

Այդ ժամանակ Բաղդասարը մթնած ամպից հասկացավ, որ Սանասարը վտանգի մեջ է, նա մոբից թուլություն առավ, ձին հեծավ ճամբա ընկավ, անցավ նույն դժվարությունները ինչ որ Սանասարը Պղնձե քաղաք գալիս և յեղբորն ոգնության հասնելով սպանեց մյուս 20 փահլեվանին ել:

Հաղթական յեղբայրները գնացին Թագավորի առաջ: Թագավորն ասաց.

— Հիմա պետք է յերթաք Կանաչ քաղաք և հետո նոր իմ աղջիկը տանեք:

Գնացին Կանաչ քաղաք, այդ քաղաքում պառավից տեղեկացան, որ մի վիշապ նստել է աղբյուրի ակին և մի քիչ ջուր բաց է թողնում միայն այն ժամանակ, յերբ նրան մի աղջիկ են տալիս ուտելու: Սանասարն ու Բաղդասարը Թագավորից իրավունք են խնդրում ու գնում վիշապի հետ կռվի: Նրանք վերցնում են ձիթհանքի յերկու ծակ քար, անց են կացնում իրենց թեվերին և աղջկա հետ գնում են վիշապի մոտ: Վիշապը տեսնելով աղջկան ու տղաներին դուրս է գալիս նրանց կուլ տալու: Սանասարի հարվածով վիշապն սպանվում է: Ջուրն առատահոս բղխում է և ամեն տեղ սիրում է կյանք ու ուրախություն: Սանասարն ու Բաղդասարը աղջկան ազատած գալիս են Կանաչ քաղաքի Թագավորի մոտ: Թագավորն ասաց.

— Ուղեք, ձեր ուղածը տամ:

— Մենք բան չենք ուզի, մեր աղատածը կուզենք,—ասաց Բաղդասարը:

Թագավորը յերեք անգամ հարցմունք արեց, թե ինչ են ուզում: Բաղդասարը բացի աղջկանից այլ բան

չուզեց: Այն ժամանակ Թագավորն ասաց. «յեկեք ձեզ պսակեմ», բայց Բաղդասարն ասավ. «Հիմի պսակվելու ժամանակ չունեմ»: Ցեվ միայն նշանվեց աղջկա հետ:

Յեղբայրները գնացին Պղնձե քաղաք Թագավորի մոտ, որ Դեղձուն-Ծամին տանեն: Թագավորն ասաց, որ աղջիկը սարի գլխին դղյակումն է և Համտոլ դեվը նրա պահապանն է. Կարո՞ղ ես գնա տար քեզ համար:

Սանասարը գնաց. Համտոլ դեվը շատ ուժեղ եր և մարդու բանի տեղ չեր դնում, բայց յերբ իր ուժը փորձեց, Սանասարը նրա մատը այնպես հուպ տվեց, որ մոր ծծի կաթը մատնեն դուրս տվեց: Եվ Համտոլը չկարողացավ դիմադրել և Սանասարը մտավ Դեղձուն-Ծամի սենյակը:

Աղջիկը տեսավ Սանասարին և զգաց, որ սա տասնապատիկ ավելի գեղեցիկ ու առույգ յերևաց քան յերազում տեսած ժամանակ, նա ջերմ սիրով փաթաթվեց Սանասարին և ասաց. «Ցես քոննեմ»: Միայն նախազգուշացրեց Սանասարին, որ յերկիրն հմայված է պետք է գիշերով փախչել, որ չվնասվեն, Սանասարը չհամաձայնեց, ասելով, թե հո ինքը զորություն չի անում և որը ցերեկով սիրած աղջկան դրեց իր ձիու գավակին ու ճամբա ընկավ: Սանասարը բոլորին՝ քարի, թփի, գազանի բարեվ եր տալիս և բոլորը նրան սիրով ճամբու եյին դնում: Մի ճիվաղի չուզեց բարեվ տալ, ճիվաղը սրանեղեց, ճչաց ու հավար գցեց թե Դեղձուն-Ծամին փախցրին:

Քար, թուփ, քաղաք քաղքի իրար լմաց ավին ու

ընկան Սանասարի յետևից, Սանասարը զորավոր ձեռքով բոլորին վոչնչացրեց, Բաղդասարն էլ, վոր հետը մնացել, վրա հասավ, մի մասին էլ նա կոտորեց: Լուրը հասավ Թաղավորին, նա յեկավ, կռվին վերջ տվեց ու Դեղձուն-Ծամին հալալ արեց Սանասարին:

Ցեղբայրները աղջկան առան յեկան այն 40 ծերունիների մոտ, վորոնք աղջկա սիրուն եյին յեկել, բայց հմայվել ծերացել եյին: Սանասարն ասաց.

— Դեղձուն-Ծամ, պրանք քեզ համար են յեկել, նրանց դարձրու այն հասակին, ինչ հասակի յեկել են:

— Ախը, վոր ջահելանան կկռվեն, ինձ կխլեն քեզնից,—ասաց Դեղձուն-Ծամը:

— Չե՛,—պնդեց մեծահոգի Սանասարը,—ջահելացրու նրանց:

Դեղձուն-Ծամը հմայքով իր հավքը կանչեց և 40-ին էլ ջահելացրեց:

Սանասարը դիմեց 40 սիրողներին ասաց.

— Ցեկեք կռվենք, դուք 40 մարդ. մենք էլ յերկու աղբերով. թե մեզ հաղթեցիք աղջիկը տարեք:

Քառասուն կտրիճները հրաժարվեցին կռվից, ասելով, թե «Դու մեր աղատողն ես և մենք ապերախտ չենք լինի, տար Դեղձուն-Ծամին և կյանք վայելիր, շնորհավոր լինի»:

Ցերբ մենակ մնացին, Սանասարն ասաց յեղբորը.

— Շատ եյիր ուզում Դեղձուն-Ծամին, ա՛ռ, ամուսնացիր հետը:

— Չե՛,—ասաց Բաղդասարը,—յես նրան չեմ առնի, նա քեզ յերկու անգամ է բարև դրել, ինձ մեկ

անգամ, կռիվն էլ դու յես արել, Դեղձունը քոնն է: Ո՞վ է տեսել, ո՞վ է լսել, վոր ախպեր ախպոր նշանածն առնի: Ցես կառնեմ իմ նշանած են աղջիկը, վորին ազատեցինք:

Շատ թե քիչ դնացին, տեսան են կողմից մի կապույտ ձիավոր է գալիս ու կանչում է.

— Հե՛յ ավազակներ, հյուրի-փերին ինձ է վայել, եդ ո՞ւր եք փախցնում:

— Բաղդասար, դու ձիու գլուխը բռնիր, յես գնամ նրան ցույց տամ, թե ով է ավազակը,—ասաց Սանասարը:

— Չե՛, Սանասա՛ր, միշտ դու կերթաս առաջ, թող ես անգամ յես երթամ:

Ու Բաղդասարը գնաց կռվեց կապույտ ձիավորի հետ: Քիչ հետո նրան տապալեց: Տապալվածը կուրծքը բացեց ու Բաղդասարը տեսավ, վոր իր հետ կռվողն աղջիկ եր: Աղջիկն ասաց.

— Բաղդասար, ահա՛, են, վոր կտանեք՝ իմ քույրն է: Ցոթ տարի յես նրա դարդից փախել եյի, վոր նա ենպես հմայք կաներ խալխի գլխին. հարամի պես ընկել եյի սարեր, վերջը գնացի Կանաչ քաղաք և վիշապի բաժին պիտի դառնայի, բայց դու ինձ փրկեցիր: Ցես քո նշանածն եմ:

Բաղդասարն ուրախացավ: Զորսով ձի հեծած յեկան Սասուն հարսանիք արին: Ծովինարը քառասուն ձեռք վող ու թմբուկ բերեց, դուսաններ կանչել տվեց, ժողովուրդ հավաքեց և Դեղձուն-Ծամին պսակեց Սանասարի վրա, նրա քրոջն էլ Բաղդասարի վրա: Քառասուն որ տեվեց հարսանիքը:

Բաղդասար իր կին առավ գնաց Բաղդադ: Նա

վորդի չունեցավ։ Սանասարը մնաց Սասուն։ Դեղձունը Ծամը նրա համար ծնեց Վերդոյին, հետո Զենով Ոհանին և ապա Մհերին։ Վերդոն բանի պետք չեր։ Զենով Ոհանն էլ ենպես ձեն ուներ, վոր գոռալիս գոմշի կաշի կհագներ, վոր չպատռեր։

Սանասարն ու Ծովինարը իրենց որը լրացնելով մեռան։

Մնացին Քեռի Թորոսը, Դեղձունը, Վերդոն, Զենով Ոհանն ու Մհերը։ Ցեկավ Մհերի ժամանակը։

ՑԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵԾ ՄՀԵՐԸ

1.

Սանասարի մահից հետո Սասունը կառավարում էր Դեղձուն-Ծամը։ Մեծ տղան Վերդոն վախկոտ ու արտավոր էր, դրա համար նա չվստահացավ կառավարիչ դառնալ։

Այդ ժամանակ Բաղդադի Խալիֆայի կուսակալներից մեկը՝ Մըսրա Մելիքը՝ իշխանավոր էր Մըսրը քաղաքում։ Ցերբ Մելիքն իմացավ, վոր Սանասարը մահացել է, զորք հավաքեց յեկավ Սասուն, նորից ահագին կոտորած ու ավեր տվեց և ազատ Սասունը դարձրեց իրեն յենթակա ու հարկատու։ Ցեվ ամեն տարի նա Սասունից տանում էր քառասուն անծին երինջ, քառասուն կոտ վոսկի, քառասուն ապակ աղջիկ։

Այդ ամենը տեսնում էր Մհերը, վորի յոթը տարին նոր էր լրացել։ Նա կարդացել էր վանքի վարժատանը ու շնորհքով լցվել էր։ Մի որ նա մորից խնդրեց թույլ տալ սարը գնալու, մարդկանց մեջ շրջելու։

— Դու դեռ փոքր ես, —ասաց Դեղձուն-Ծամը։

— Ձե մարե ջան, տեսնում եմ դևեր կուգան մեր

տուն կղարկեն, լավ է հիմիկվանից պատրաստ լինեմ, վոր իմ հայրենիքի թշնամու դեմ կայնեմ։

Մայրը թույլ տվեց, Մհերը գնաց սարեր, վոր գնաներ, բայց մարմնով ծանր եր, կիսվեր հողի մեջ ու կնեղվեր։ Քեռի Թորոսը տեսնելով տղայի վիճակը, խորհուրդ տվեց գնալ Բիթլիս Գորգիկ իշխանի հրեղեն ձիերից մեկը բերել իրեն, վոր ձիով ման դա չհողնի։

Մհերն այդպես էլ արավ. գնաց Գորգիկ իշխանի մոտ։ Իշխանը նրան լավ ընդունեց և առաջարկեց իր քառասուն ձիուց վորը կուզե ընտրե իրեն։ Բայց Մհերին քառասուն ձիուց վոչ մեկն էլ դուր չեկավ, վոչ մեկը նրա հարվածին չեր դիմանում։ Վերջը դոմից դուրս մի անպետք քուռակ եր ման դալիս, Մհերը փորձեց քուռակի ուժը, նրա դավակին դարկեց, քուռակը դիմացավ, Մհերն այդ քուռակը ընտրեց ու բերեց Սասուն։ Քեռի Թորոսն էլ հավանեց քուռակին։ Ցեվ այնուհետև Մհերն իր ձիով վորսի կերթար, ամեն տեսակ դազան կորսար ու կրաժաներ սառունցոց ու եղպիսով յոթը տարի Սասունը պահեց։

Ցեղավ մեկ որ էլ, վոր Սասնա մեջ հացը պակասեց, մեծ թանգություն ընկավ։ Ցերը Մհերը Քեռի Թորոսից հարցրեց, թե ինչ է հացի պակասության պատճառը, Քեռին բացատրեց, վոր սարում մի առյուծ է լույս ընկել, վոր չթվորին հանգիստ չի տալիս, մարդկանց - վոչնչացնում է, մարդիկ վար ու ցանք չեն կարող անել, ուրիշ քաղաք չեն կարող

գնալ դալ, դրա համար էլ նեղության մեջ է ընկել ժողովուրդը։

Մհերը առյուծ չեր տեսել. լավ չդիտեր, թե առյուծն ինչ բան է. նա հարցրեց.

— Առյուծը մարդուն հեռվից է ուտում, թե մոտից։

— Մոտից,—ասաց Քեռին։

Վոր եղպես է, յես լուսուն կերթամ ենոր հետ կռիվ։ Ասաց Մհերն ու առավոտը մարդիկ հավաքեց գնաց սար. կարդադրեց, վոր վոչ վոք թրով չդարկե առյուծին, ինքը իջավ ձիուց, թեվերը քշտեց, կռվի բռնվեց առյուծի հետ ու նրա վերի ու ներքի ծոտից բաժանելով 2 մաս արեց, մի մասը դրեց ճամբի այս կողմ, մյուսն այն կողմ։

Ժողովուրդը ուրախացավ, նրան տվեց Առյուծաձև Մհեր անունը և բոլորը միաբերան ասին.

— Սրանից հետո մեր տերը դուն ես։

Դեղձուն-Ծամը տեսավ, վոր ժողովուրդը սիրով Մհերին իրեն կառավարիչ ընտրեց, վերցրեց, Մհերին տվեց Քուռկիկ Ջալալին, Թուր Կայծակին, դլխազարդը, մեջքազոտիկը ու կապան։

Մհերը զինված-զրահավորված շրջեց հոր հողերն ու բոլոր թշնամիներին ու հարկահաններին կորագլուխ քշեց իր հայրենիքի սահմաններից։

Մհերը դարձավ կարդելու. Ջենով-Ոհանը Դեղձուն-Ծամի հետ խորհուրդ արավ, վերցրեց իշխան մարդիկ, ապա գնաց Մելքոն Թագավորին էլ վերցրեց ու գնացին Մանազկերտ Թեվաթորոս Թագավորի աղջկան՝ Արմազանին Մհերին կին ուղելու։

Թեվաթորսն ասաց, վոր Արմաղանին Խլաթի տեր Սպիտակ դեվը գերի յե տարել—թե Մհերը Արմաղանին կարող ե ազատել, իրեն հալալ լինի:

Սպիտակ դեվը, վոր Մհերի համբավը լսել եր և դիտեր, վոր նրանից կարող եր իրեն վնաս դալ, Զարբահար Քամի փայլեվանի միջոցով թուղթ ե ուղարկում Մհերին ու կանչում ե իր հետ կռվելու:

Մհերը գնում ե, հենց մտնում ե դեվի հողը թե չե, դեվի մարդիկ արդելում են նրան իր ծարավն հաղեցնել, աղբյուրից ջուր խմել: Մհերը մեկ դեվին սպանում ե, մյուսին վիրավորում ե, վորը և փախչում ե: Մհերը ծարավը հաղեցնելով գնում ե փախած դեվի արյան հետքով. գնում ե գնում ու ի՞նչ տեսնի մի հուր հրեղեն աղջիկ ծառին կապած են վիրավոր դեվի արյուն կսրբի: Մհերը վրա հասավ, դեվի ձեռ ու վոտը կապեց, դրեց քարի տակ ու աղջկան ազատեց:

Աղջիկն ազատություն ստանալով անչափ ուրախացավ, բայց յերբ տեսավ դյուցազնական Մհերին, քիչ եր մնում խելագնաց լինի ու ընկավ Մհերի գիրկը:

— Ցերաղ եյի տեսել ,—ասավ,—վոր եդպիսի մի կորիճ պիտի դա ու ազատի ինձ անիրավ Սպիտակ դեվից: Եդ դեվն ինձ փախցրեց իմ հորանց տանից, բայց յես ատծու կամքով մինչ հիմա դիմադրել եմ նրան ու կույս եմ մնացել: Դու իմ ազատարարն ես, բայց ղդույշ, Սպիտակ դեվը շատ խորամանկն ե:

Մհերը գնաց Սեվ սար, ուր Սպիտակ դեվն ուխտ եր գնացել ու հանդիպեց Սպիտակ դեվին: Դեվը տեսնելով Մհերին լեղաճաք յեղավ, թուլացավ, ուզեց խորամանկություն բանեցնել, ասաց.

— Մհեր, բարով յեկար, յերթանք իմ վրանի տակ հանդստացիր, թող լուսանա, տեսնենք աստված վոր մեկիս կտա:

— Չե՛,—ասաց Մհերը,— իմ պապերի խրատն ե ինձ, վոր թշնամուն հանդիպենք կռվենք, վոչնչացնենք նրան:

Ցելան կռվի, յերեք որ տեվեց կռիվը և յերեք որից հետո Մհերն սպանեց Դեվին ու Արմաղանին հաղթականորեն բերեց Սասուն:

Թեվաթորոս թագավորը լսելով աղջկա ազատությունը, շատ ուրախացավ: Հավաքվեցին՝ Մհերին ու Արմաղանին պսակեցին:

Իսկ Խլաթի ժողովուրդը, վոր տառապում եր Սպիտակ դեվի լծի տակ, յեկավ խնդրեց, վոր Մհերն իրենց կառավարի ու թշնամիներից ազատ պահի: Մհերը գնաց Խլաթի ժողովրդի մյուս թշնամիներին ել ջարդեց ու հաղթական դարձավ Սասուն:

II

Մհերը իշխելով Սասունին այլևս Մսրա Մելիքին հարկ չեր ուղարկում: Մելիքը կատաղեց և ուղարկեց իր փահլեվաններին, վոր հարկ բերեն: Մհերը հետ ուղարկեց փահլեվաններին: Այն ժամանակ Մսրա Մելիքը սպառնաց, վոր զորով կհպատակեցնի: Մհերը ընդունեց կռվի հրավերը և Ջենով Ոհանի խորհրդով գնաց Մսրը:

Ցերբ Քուռկիկ Զալալին նստած հասավ Մսրը, բոլորին ահը պատեց: Մսրա Մելիքն ու Մհերը կռվի բռնվեցին և յերեք որվա մեջ մեկ մեկու չկարողացան հաղթել, թեև Մհերը շատ ուժով եր, բայց Մելիքն ել խորամանկ եր:

Մելիքը տեսավ, վոր Մհերին չի կարելի հաղթել, ասաց.

— Ցես կարծում եյի, թե աշխարհում ինձ ից ուժեղ մարդ չկա, բայց մենք իրար չհաղթեցինք: Ձեր խարջը բաշխեցի, Սասունն ել ինձ հարկատու չի: Հողն ել, ջուրն ել ձե՛զ, կերը, խմե՛ք, վայելեցեք: Մենակ արի պայման կնքենք, վոր կռվի ժամանակ իրար ողնենք:

Մսրա Մելիքը ես բաները մաքուր սրտով չեր, վոր ասում եր: Մհերից վախենալով նա կեղծավորություն եր անում:

— Թե յես մեռնեմ,— ավելացրեց Մելիքը,— իմ ընտանիքն առ քո խնամքին, թե դու մեռար քո ընտանիքը հանձնիր իմ խնամքին:

Մհերը համաձայնեց: Նրանք մատները կտրեցին իրենց արյունը խառնեցին իրար, ախպերացան:

Մհերը դարձավ Սասուն:

— Մի բան արի՞ր, մեր խարջը պակասեցրի՞ր,— հարցրեց Ոհանը:

— Ի՞նչ կասես, հորոխպեր, Մսրա Մելիքը լավ մարդ է, մեր խարջը մեզի բաշխեց, բացի այդ ախպերացանք:

Ցեվ Մհերն ավելի չենացրեց Սասունը:

Այդ ժամանակ Մսրա Մելիքը մեռավ:

Մելիքի մահից հետո նրա կինը Իսմիլ Խաթունը տեսնելով, վոր իրենց իշխաններն ապիկար են և ուզում են իրեն կործանել, իր իշխանությունը չեն ճանաչում, դրություն դրեց Մհերին, հետն ել իր դոտիկ-լաչակն ուղարկեց ու կանչեց նրան իր մոտ:

Մհերը կարդաց Իսմիլի թուղթը. «Մհեր, դոտիկ-լաչակն ուղարկում եմ քեզ, արի ինձ առ, ես վոր Սասուն քո ձեռն է, թող Մսրն ել քո ձեռ լինի, թե չզաս կնկնից ել վատ ես: Ձե՞ վոր դու Մելիքի հետ ուխտ ունես, նրա ընտանիքը պիտի պահես»:

Մհերը մտահոգվեց, գնաց Արմաղանի մոտ խորհրդի:

— Արմաղան,—ասաց նա,—Իսմիլ խաթունն ինձ կկանչե, պիտի յերթամ:

— Մհեր, մի յերթա,— ասաց Արմաղանը,—Իսմիլ քեզի կխաբի. նա քո կորիճությանը խլիթությանն է հավանել, տղա չունի, կուզե քեզնից տղա ունենալ: Մի՛ գնա:

— Այ կնիկ,— ասաց Մհերը,—թե չերթամ, յես ել նրա պես կնիկ եմ, ուխտ եմ արի պիտի գնամ:

— Մի գնա՛:

— Պիտի գնա՛մ:

— Դե իմ դուռ քո վրեն չի անցնի, գնում ես գնա, յես ուխտ կանեմ, եսորվանից դու ինձ հեր ու ախպեր ես, քառասուն տարի ել իմ ծոցը չես մտնի:

Մհերը խորհուրդ արավ իշխանների հետ ու գնաց Մսրը:

Իսմիլ խաթունը ճամբեքին խալիչաներ եր փռել, դահլիճներում մոմեր եր վառել, ինքն ել խուրնկի-

խրեղեն աչքերը դեղել նստել լուսամուտ՝ Մհերին կսպասեր։

Տեսավ դեմից փոթորկալի արշավով ձիավոր է գալիս։

— Կա չկա ես Մհերն է,— ասաց Իսմիլ Խաթունը։

Մհերը յեկավ կանգնեց լուսամուտի դիմաց, նայեց Իսմիլին, ասաց.

— Իսմիլ խաթուն, յեկա, դե քո ասելիքն ասա։

— Հոգիս, Մհեր,—ասաց Իսմիլը,—հապա եղպես հյո՞ւր կլինի, ձիուց իջիր, արի սենյակ, նոր ասելիքս ասեմ։

— Չե, ուխտ եմ արել, վոտս զանգուեն չեմ հանի, ասա՛։

— Ճիշտ է, վոր ասում են հաստակող սասունցի, հո ձեր յերկիր չի քանդվել, կրակ հո չի՞ պակասել, յեկել ես կրա՞կ տանես, ճրագ վառես, իջիր, հոգիս, իջիր իմ հյուրասիրությունն ընդունիր, հետո դնա։

— Չե՛, չե՛, եղ խոսքերը իմ գլուխը չեն մտնի, ասա, քո ասելիքն ասա։

Իսմիլ խաթունը տեսավ, վոր Մհերը կարող է իրոք հետ դառնալ, դարձավ ծառաներին՝ ասաց.

— Շուտ դնացեք յոթ տարվա դինին բերեք, դոնե մի բանով հյուրասիրենք։

Իսմիլի միտքն ուրիշ եր։ Ցերբ Մհերը դինին խմեց, գլուխը տաքացավ, այն ժամանակ Իսմիլը հրամայեց.

— Զին բռնեցեք, թող իջնի։

Մհերն իջավ, մտավ պալատ։ Իսմիլը նորից վողջունեց նրան իր պալատում։

— Ինչի՞ ես կանչե,— հարցուց Մհերը։

— Կանչեր եմ,—ասաց Իսմիլը,—կանչե՛ր եմ, վոր մեր յոթ իշխանները չեն ուզի ինձ, կուզեն ինձ սպանել։

— Լավ, դե հիմի հայ բեր ուտենք, առավոտ եղ իշխանների հաշիվը կտեսնենք։

— Մհե՛ր,— խոսեց Իսմիլը,— ախր յես քեզ իմ լաչակն ու դոտիկն եմ գրիկ, կանչեր եմ, վոր դու ինձ մոտ լինես, վոր յես ել ժառանգ ունենամ,— ու ցույց տվեց իր անկողինը։

— Պա՛հ, եղ չեղած բան է, յես ի՞նչպես կարող եմ եղ բանն անել. դու անորեն, յես քրիստոնյա. չի՛, եղ լինելիք բան չե։

— Մհե՛ր,— ասաց Իսմիլը վճռական,— դու ինձ երիկ պիտի լինես, իմ թագավորություն քոնը պետք է լինի, իմ թշնամիների դեմ դու պիտի կանգնես։ Մհեր, յես քեզ սիրել եմ, խաթրով լինի թե զոռով, դու իմը պիտի լինես։

Ցեվ Իսմիլ խաթունը խոսեց նուրբ ու քնքույշ խոսքերով, խոսեց սիրուց, ցուցահանեց իր դեղը, Մհերին պատվեց, հյուրասիրեց և Մհերը վերջիվերջո տեղի տվեց և գիշերը մնաց Իսմիլի ննջարանում։

Առավոտը Մհերը յոթը ապստամբ իշխաններին հպատակեցրեց Իսմիլին, և իր գործ կատարած համարելով ուզեց վերադառնալ, բայց Իսմիլը նորից թողեց նրան և Մհերը մնաց։ Ինն ամիս ինն որն անցավ Իսմիլը տղա ծնեց ու իր մեռած ամուսնու հիշատակին ա-

նունը Մսրա Մելիք դրավ։ Մհերն ելի ուղեց դնալ, բայց Իսմիլն իր հրամայրով Մհերին յոթը տարի իր մոտ պահեց։

Մեկ որ ել, յերբ Մհերը տուն յեկավ, լսեց Իսմիլի ձայնը, վոր իր աղջեն մեծացած յերեխային խաղացնելով ասում եր.

— Մերդ քեզ ղուրբան, Մելիք, մեծացիր, բալաս, մեծացի՛ր Մըսրա ոջախ կանգնեցրու, Սասունի ոջախը քանդիր։

Մհերը նոր ուշքի յեկավ, վրդովվեց. «Ես ի՞նչ եմ արել, Սասնա ճրագն եմ հանգցրել, Մսըրա ճրագն եմ վառել»։ Ներս մտավ ասաց Իսմիլին.

— Եդ ինչ խրատ կտաս յերեխին. դու նրան ինձնից բերիր իմ դե՞մ կհանես. հիմիկվանից դու նրան չարությո՞ւն խրատ կտաս. յերեխին կուզես թախտ դնել, վոր իմ հայրենիքը քանդի՞։

— Ի հարկե, ուրախանում եմ. իմ տղան հոր պես պիտի կտրիճ լինի ու աշխարհը դավթի։

— Լա՛վ, ուրեմն դու ուզում ես իմ աղջը կոլծանել տաս, ա՛յ ապերախտ. լա՛վ, ել հարամ ե ինձ ես տեղ մնալը։

— Ցես իմ արածն արի, կուզես դնա, կուզես մնա։

Մհերի արբեցությունն անցավ, նա պախարակեց իրեն, ասաց—«Ճիշտ եր ասում Արմաղանս, թող իմ լուսը քոռանար, վոր յես յոթը տարի ոտարի արտը ջրի, իմ արտը ծարավ թողի, վա՛յ, ի՞նչ եմ արել, ի՞նչ»։

Ցեվ հուսահատ վերադարձավ Սասուն։

Արմաղանը բարկացել եր, Մհերին տեսավ թե չե, դռան հետեվից ասաց.

— Ցես դռները փակել եմ քո առաջ, դու իմ մարդը չես։

— Դուռը բաց,—ասաց Մհերը։

— Ցես յերդում եմ արել, մինչև քառասուն տարի դու իմ մահիճը չպիտի դաս, դու իմ հերն ես, իմ ախպերը։ Դու Մսրա ոջախը չինեցիր, ժառանգ թողիր ենոնց, Սասունը փչացրիր։ Գնա մեղքերդ քավիր, քառասուն տարի քառասունք պահիր։

— Եհ—հե՛, քառասուն տարուց յետև ել ինչ կըմնա ինձնից ու քեզնից, Մելիք կմեծնա մեր տուն կքանդի։

Բայց Արմաղանը չհամոզվեց։ Ցեկավ Զենով Ոհանը, յեկան իշխանները, վարդապետները, խորհուրդ արին, վոր Մհերին ու Արմաղանին հաշտեցնեն։ Մեկն ասաց.

— Որհնած լինես, Արմաղան, ախր ի՞նչ անենք, մարդը սխալական ե. մարդ ե՝ սխալվել ե, խաբվել ե։ Հաշվենք, թե Մհերը դնացել սիրեկան ե բռնել, հիմի ղղջացեր քո դուռն ե յեկեր, ի՞նչ անենք։ Քո յերդումը քանի՞ տարվա վրա յե, Արմաղան։

— Քառասուն։

— Որհնած,—ասացին իշխաններն ու վարդապետները,—որենք դնողը մենք չե՞նք,—քառասուն տարին բերենք անենք քառասուն ամիս, քառասուն ամիսը՝ քառասուն շաբաթ, քառասուն շաբաթը՝ քառասուն որ, քառասուն որն ել բերենք անենք քառասուն ժամ։

— Քառասուն ժամն ել անենք հենց հիմա,—բացականչեց մի խենթավուն քահանա։

Եդպես եվ արին։ Վարդապետը պահպանիչ կարդաց ու ապա դիմելով Մհերին ու Արմաղանին ասաց.

— Դե՛, յելեք գնացեք, նորից յեղեք երիկ-կնիկ, հնպես արեք, վոր այլևս իրար խոսքից դուրս չգաք։

Ցերը առանձնացան, Մհերն ասաց.

— Արմաղան, մեկտեղվինք. դուցե մի տղա եվ մենք ունենանք, վոր Սասնա ճրագը վառ պահի։

— Դե տղամարդն որ կա գլուխ ե, կնիկն որ կա վոտ ե,— ասաց Արմաղանը,— բայց լավ իմացի՛ր, աստված մեզ տղա կտա, բայց մենք յերդմնակոտոր ենք լինում և յերկուսս եվ կմեռնենք հենց են որը, վոր մեր տղան ծնվի։

— Թող աստված տղա տա, ինքն եվ կպահի, աստծու պահած դառը դայլը չի ուտի։

Հանդիստ սրտով քնեցին։ Արմաղանը հղիացավ։ Մհերը գնաց Սասնա սարեր, ամեն բան կարգի դրեց, վորսացուներ չատացրեց, լցրեց՝ Ծովասարը, շուրջը պարիսպ կապեց, վանք չինեց՝ կոչեց Մարութա Բարձր Աստվածածին և տեսնելով, վոր ամեն ինչ լավ ե, իջավ Սասուն։

Ինն ամիս ինն որ ինն ժամ լրացավ՝ Արմաղանը տղա ծնեց, անունը դրին Դավիթ։

Նույն որը Մհերն ու Արմաղանը մեռան։

Մհերի մայրը, Դեղձուն-Ծամը սուգ մտավ, փակվեց մի սենյակի մեջ և ուխտ արավ ենտեղից դուրս չգալ մինչև նորածինը մեծանար Մհերի տեղը բռներ։

Սասունն եվ Մհերի մահվան համար մեծ սուգ արավ։

ՑԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱՎԻԹ

I

Դավիթը մնաց վորբ։ Հորեղբայրներից Վերդոն չուզեց դավթին իր մոտ վերցնել, ասելով թե յերեխա ունի։ Դավիթը մնաց Զենով Ոհանի խնամքին։ Ոհանը հավաքեց բազմաթիվ ծծմայրեր, բայց յերեխան վոչ մեկի ծիծը չընդունեց։ Տեսավ տղան կարող է մեռնել, խորհուրդ արին, թե լավ է ուղարկել Մսըր, վորովհետև Մհերն ենտեղ ուխտ է արել, վոր իր ընտանիքն իր մահից հետո Մելիքը պահի, Իսմիլն ել վոր Դավթին մերացու յե նրան հարմար ծծմայր կլինի։

Ոհանը Դավթին կապեց Քուռկիկ Ջալալի մեջքին, ձին Դավթին տարավ Մսըր Իսմիլ խաթունի մոտ։ Խաթունը վերցրեց ձիուն կապած Դավթին ու հետն ել մի թուղթ, ուր Ոհանը գրել եր.

«Իմ աղբերակին, իմ հարս, Մհերն յեկավ Սասուն ունեցավ ես Դավթին։ Մհերն ու իր կինը մեռան, Դավիթը մնացել է վորբ։ Մհերի խաթրուն վերցրու Դավթին քո տղի պես խնամիր մինչև վոր մի քիչ մեծանա։ Թե չե յերեխան չի հանդուրժում։ Վոր մի քիչ մեծացավ, յես կառնեմ իմ խնամքին»։

Իսմիլն ինքն իրեն ասաց.

«Մահերն ինձ լավություն է արել. նրա խաթրուն յես Դավթին կպահեմ, իմ ծծերում դեռ կաթ կա։ Թող մեծանա Մելիքին ախպեր ու ոգնական լինի։ Նրանք յերկուսով աշխարհ կդավթեն։ Դեռ թող մեծանա եվ ո՞վ կթողնի, վոր նա Սասուն յերթա»։

Մինչ Քուռկիկ Ջալալին հետ գնաց Ոհանի մոտ, վորից Ոհանն իմացավ, թե Դավթին անվտանգ տեղ է հասել, Իսմիլ խաթունը կուրծք տվեց Դավթին, Դավթը կաթը ծծեց զորացավ։ Ցերը տարին լրացավ, եվ Իսմիլի ծիծը չընդունեց։ Ցերեք որ այդպես անցավ, Դավթին ուրիշ բան չեր ուտում, Իսմիլն ասաց իր տղային, Մելիքին.

— Այս տղան յերեք որ է այլևս իմ ծիծը չի վերցնում, ի՞նչ անենք նրա հետ։

— Դրա աղքը արդեն հաստակող է,—ասաց Մելիքը,—վերջը մեր գլխին ցավ է լինելու։ Նա հայ է, մենք արաբ, բոլ է ինչ քո ծիծը կերավ։

—Բայց եսպես թողնել չի կարելի, տղան կմեռնի, մենք ամոթով կմնանք, կասեն մի ծծկեր չկարողացան պահել։

— Դե վոր եդպես է, նրա հոր մալը շատ է, ուղարկիր մեղր ու կարագ բերեն դուցե դրանով ապրի։

Իսմիլ խաթունն այդպես եվ արեց, ուղարկեց Բաթմանա Բուղային Սասունից մեղր ու կարագ բերեց։ Դավթը հարազատ յերկրի մեղրն ու կարագը կերավ և թե ուրիշը տարով կմեծանար, Դավթը սկսեց որ է որ մեծանալ։ Ու այնքան մեծացավ, վոր Դավթի որոցքին եվ պարան չեր դիմանում, Իսմիլը դութանի

չղթայով եր կապում ծծկերին, Դավթին եդ չղթան եվ կը կտրեր։

Իսկ այդ ժամանակ Մըսրա Մելիքն իմանալով, վոր Մահերը մեռել է, մեծ զորքով գնաց Սասուն շատ մարդ սրի քաշեց, շատ բան ավար առավ բերեց, Սասունը նորից Մսըրին հպատակ դարձրեց, դեռ Զեռով Ոհանին ու Վերդոյին եվ գերի բերեց։ Բայց վորոշ ժամանակից հետո Ոհանն ու Վերդոն հպատակության խոստում տվին և վերադարձան Սասուն։ Նրանք ուղեցին Դավթին եվ հետները տանել, բայց Մելիքը չտվեց, և քանի վոր Դավթին արդեն մեծանում եր, կարգադրեց յերեխային պահել փակ ողայում։

Դավթը առավոտ յելավ, տեսավ դուռը փակ է ջարդեց, բացեց ու գնաց տեսավ մի այգում տղաները տրնգոզի կխաղան։ Դավթը մի բարդի ծառ կռացրեց ու տղաներին ասաց՝ նստեք, բոլորը նստեցին, քիչ հետո Դավթին ասավ,—ձեռքս հոդնեց, ցա՛ծ իջեք։ Տղաները բանի տեղ չդրին, չուզեցին իջնել, այն ժամանակ Դավթը ծառի կառարը թողեց, տղաները վար թափվեցին, վորը մեռավ, վորը խեղվեց։ Տղաների ծնողներն այս արարքի համար բողոքեցին Մելիքին և պահանջեցին Դավթին հեռացնել։

Մելիքը կատաղեց ու կարգադրեց Դավթին դնել մի մութ սենյակ, դռներն ավելի պինդ փակել տվեց ու պատվիրեց.

— Դավթին թե ուտելիք տանեք—յեթե միս կլինի վոսկորները հանեք, չեր կլինի կորիզը հանեք։

Դավթին հաց տանող մարդուն մի որ իշխաններն ու չարաճճիները շատ նեղացրին, նա եվ ինքն իրեն

ասաց.—«Լա՛վ, այսոր Դավթին միս կտանեմ, վոսկորը չեմ հանի, թող վոսկորը դեմ առնի, ելնի ձեղ սպանի»:

Այդպես էլ արավ, Դավիթը, յերբ միսը կերավ, վոսկորն ընկավ ատամի տակ, տեսավ չի ծամվում, հանեց բերանից շպրտեց դեպի լուսամուտը: Լուսամուտը փլվեց ու արեվի շողերը ներս ընկան: Դավիթը, վոր նոր նոր եր խելքի դալիս ու յերկար ժամանակ մութ տեղ եր, չիմացավ թե եդ շողն ինչ բան է ու սկսավ շողի հետ խաղալ, կոխվ անել, բայց բան դուրս չեկավ: Շողն ելի շողք եր, ելի իր տեղում մնում եր սիրված:

Վարպետը, վոր Դավթին դաս եր տալիս, ներս մտավ, տեսավ Դավիթը քամի քրտինքի մեջ է. ասաց.

— Եդ ինչ հալի յես, այ տղա, ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ յես դեմինը ծեծում:

— Եսիկ մտել է սենյակ դուրս չի դալիս,—ասաց Դավիթը:

— Աչքերդ մի քիչ խփիր,—ասաց վարպետը ու յերբ Դավիթը աչքերը փակեց, վարպետը թաշկինակով շողի անցքը բռնեց, շողը կտրավ, Դավիթն ասաց.

— Ցես եսքան չարչարվում եմ չես դարողանում դրան դուրս հանել, դու ինձնից ուժե՞ղ եյիր, վո՞նց հանեցիր:

Վարպետը նոր բացատրեց, վոր յեղածն արևի շողք եր:

Դավիթը զարմացավ:

— Հապա,—ասաց,—վոր աշխարհում եղպես լավ բան կա, ինձի ինչի ես մութ տեղն եք փակել:

Վարպետն ասաց, վոր աշխարհում ուրիշ շատ լավ բան կա և դնաց թաղավորին խնդրեց, վոր Դավթին թույլ տա դուրս դալու: Թաղավորը համաձայնեց Դավթին դուրս թողնելու:

Դավիթը վարպետի հետ դնաց դաշտ, ուր Մելիքը ջիրիդ եր խաղում: Դավիթը ջիրիդը ոդի մեջ բռնեց ու ենպես հետ շպրտեց, վոր տասը դաղ Մելիքի գլխից դեն թռավ: Այս վոր տեսավ Մելիքը կատաղեց, ուղեց Դավթին սպանել, բայց մարդիկ մեջ ընկան և ասին, վոր յերեխա յե, կարիք չկա սպանելու:

Դավիթն ուղում եր դնալ Մելիքի խաղերին մասնակցել, բայց Մելիքը չեր տանում, վերջը մոր թախանձանքով Մելիքը Դավթին տարավ հոլի խաղին: Մեծ դուրդերով իշխանները խփում եյին հոլին. յերբ հերթը յեկավ Մելիքին, Դավիթը նստած եր նրա դիմաց, յեթե դուրդը խփեր, պիտի դիպչեր Դավթին. ուստի նա նախազգուշացրեց, վոր Դավիթը փախչի հեռու: Բայց Դավիթը բանի տեղ չդրեց: Մելիքը բարկացած 366 լիտրանոց դուրդը նետեց, Դավիթը բռնեց դուրդն ոդի մեջ ու արհամարանքով ասաց.

—Ես ինչ թեթև՛ է:

Մելիքը նորից կատաղեց, ասաց.

— Հե՛յ-վախ, Դավիթն իմ թաղավորությունն իմ ձեռքից պիտի առնի:

Ցեվ նորից ուղեց Դավթին սպանել, բայց մարդիկ մեջ ընկան չթողին: Դավիթը դնաց Իսմիլ խաթունի մոտ ու յեղածը պատմելով ասաց, վոր Մելիքն ուղում է իր վիզը կտրի: Մելիքը տուն դալով, նույնպես մորը պատմեց յեղելությունը և ասաց, վոր Դավիթն լցեն

խայտառակել ե հատարակության առջև իր դուրը բռնելով, իրեն ավելի դերադանց ցույց տալով քան Մելիքն ե, ուստի ուզում ե սպանել։

Բայց Իսմիլն ասաց.

— Մելիք, քո մերը մեռնի քեզ, Դավթի ուժը քո ուժն ե. նրան քեզ մեջքի թուր դարձուր, նա մեծանա քեզ ոգնական դարձուր, ինչո՞ւ կուզես սպանել։

Մելիքը համառեց, ասելով, վոր Դավիթը վտանգավոր մարդ ե իր տպագայի համար, ուստի և պետք ե նրա վիրը կտրել։ Բայց քանի վոր մայ՝ը չեր թողնում, Մելիքը մարդկանց խորհրդի հրավիրեց։ Մի բարեխիղճ մարդ ասաց.

— Դավիթը դեռ յերեխա յե, խելքը դեռ ջուր ե, բան չի կարում։ Կուզես փորձի համար մի ման վոսկի դնենք, մի ման կրակ, տեսնենք յերեխան դեպի վո՞րը կերթա, թե դեպի կրակը գնաց՝ յերեխա յե, խելքը բան չի կարի, թե դեպի վոսկին՝ խելքով ե, զատկ վիրը կարի։

Մելիքը համաձայնեց, դրին վոսկին ու կրակը։

Դավիթը գնաց դեպի վոսկին, բայց վերին զորությամբ խսկույն շուռ յեկավ դեպի կրակը, մատն յերկարեց կպավ կրակին, մատը տարավ բերանը, լեզուն ել այրվեց։ Դավիթը լացեց։

Իսմիլ խաթունը գրկեց Դավթին ասաց.

— Տեսա՞ր Մելիք, վոր նա յերեխա յե, չի կարելի սպանել։ Դեռ խեղճ յերեխին ել թլատ դարձուցինք։

Մելիքը համոզվեց, վոր յերեխա յե ու չսպանեց Դավթին։

Մյուս որը Դավիթը տանից դուրս գնաց և Մելիքի զինանոցը բաց տեսնելով մտավ այնտեղ, սկսեց խաղալ Մելիքի մեծ դուրզի հետ։ Դուրզն այնքան ծանր եր, վոր ամեն դեսին խլելիս քաղաքը դղրդում եր։ Շփոթություն ընկավ չորս կողմ։ Վեզիրն այս լմանալով Դավթին համոզեց, փախցրեց Իսմիլի մոտ։ Բայց Մելիքը, վոր նորից բարկացել եր սարսափելով Դավթի ուժից, նորից յեկավ մոր մոտն ասաց.

— Այ մեր, Դավիթը ոճի ճաղ ե, պիտի խեղդեմ նրան։

—Իմ ծծերի կաթը քեզ հարամ լինի թե սպանես,— ասաց Իսմիլը։

— Լավ, բայց ինձ թե վնաս դա, դրանից կդա,— ասաց Մելիքը։

Մելիքն ու մերը միշտ կռվում եյին Դավթի համար։ Դրա համար ել վեզիրի խորհրդով վորոշեցին Դավթին ուղարկել Սասուն։

Դավիթը շատ ուրախացավ և կշտամբեց Իսմիլին, վոր մինչ այդ իրեն չեր հայտնել, թե ինքը սասունցի յե, յերկիր ունի, հորեղբայրներ ունի։

Մելիքը յերբ Դավթին ճամբու յեր դնում, ուղեց, վոր նա դա իր թրի տակովն անցնի, բայց Դավիթը հրաժարվեց. այս բանը նորից ու նորից կատաղեցրեց Մելիքին և նա Դավթի հետ դնելով իր յերկու ուժեղ փահլեվաններ Բաթմանա Բուղային ու Զարբահար Քամուն պատվիրեց ճամբին սպանել և նրա շորը թաթախել արյան մեջ ու բերել իրեն, իբրև ապացույց Դավթի մահվան։ Դավիթը փահլեվանների հետ ճամբա ընկավ։

Մինչ այդ, Սասունը դեռ Մհերի մահվան պատ-

ճառով սդի մեջ եր։ Սդի յոթ տարին լրացավ։ Ժողովուրդը, իշխանները, քահանաները յեկան Քեռի Թորոսի մոտ, թե բավական չի՞ սուդ անեք, հո եկ Մհերը չի՞ կենդանանա, ախր մեր տղերք, աղջկերք մեծացել են, պիտի կարդենք։

Քեռի Թորոսը թույլ տվեց տղաներ, աղջիկներ կարդել։

Խնջույք սարքեցին, տերտերը Մհերին հոդոց հանդուցելոց ասեց. դինի լցրին տվին Թորոսին, վոր խմի։ Բայց Քեռի Թորոսը չխմեց, վոտքի յելավ ասաց.

— Ցես դինի չեմ խմի, մինչև մեր դերին, մեր Դավիթը չաղատենք Մըսրից, բերենք։

Մսըրում մի քանի ջահելներ կային. նշանք լսել էին, վոր Մելիքն ուղում է Դավթին սպանել և դրա համար Քեռի Թորոսին թուղթ եին դրել, թե, «Քեռի Թորոս, ինչ կենես երա, չուտ հասի քանի Դավթին չեն վնասած, աղատիր տար Սասուն»։ Քեռի Թորոսն այս պատճառով եր մտահոգված և նա ձի հեծավ գնաց Մսըր ներկայացավ Մելիքին ասաց, վոր դերին դին ելնի տիրոջ կհասնի, Դավթին տուր տանենք։ Մելիքը հայտնեց, վոր Դավիթը յերեք որ առաջ մեռել է։ Քեռի Թորոսը չտապում եր Սասուն դուժը հայտնելու։

Իսկ Դավիթը վեց որ եր, վոր վահլեվանների հետ ճամբա յեր ընկել։ Փահլեվանները մտածում եին Դավթին սպանելու մասին, բայց հնար չեին գտնում։ Դավիթն ել հանդիստ չեր մնում. մեկ սար կբարձրանար, մեկ վորսի յետեվ կընկներ։ Փահլեվանները նրան ուտելիք չեին տալիս։ Դավիթն ել կերակրվում եր

ճամբին պատահած պտուղներով, բանջարեղենով։ Հինգ որվա վրա հասան Բաթմանա կամուրջին։ Այդտեղ արդեն ուղում եին Դավթին սպանել, ուստի վահլեվանները հացի նստան, Դավթին ել կանչեցին։

— Եդ ինչո՞ւ մինչև հիմա չեյիք կանչում հացի, հիմա կանչում եք,— ասաց Դավիթը։

— Մինչև հիմա Մելիքի հող ու ջրով կանցնեյինք, հիմա հասանք քո հոր հողն ու ջուրը դրա համար ել կանչեցինք։

Դավիթն ասաց.

— Ցես վոր իմ հոր հողն ու ջուրը ընկա, ել ձեր հացն ինձ պետք չի։

Փահլեվանները դնացին կանգնեցին կամուրջի մեջտեղ, Դավիթը հասավ նրանց։

— Ի՞նչու յեք կանգնել։

— Քեզ ենք սպասում. Մելիքն ասաց, վոր կամուրջից անցնելիս մեկս մեջտեղից դնա, մեկն ել հետեվից, իսկ Դավիթը մեջտեղից, վոր չվախենա դեպից։

— Թող ձեր խոսքը լինի,— ասաց Դավիթը, բայց միտքը կասկած ընկավ, վոր վահլեվանները հետին միտք ունեն։

Ցեվ իրոք կամուրջի կեսին վահլեհանները մեկն առաջից, մյուսը հետեվից հարձակվեցին Դավթի վրա։ Դավիթը նախապատրաստված եր այդ բանին, չուտ յեկավ բռնեց մեկ ձեռքով մեկին, մյուսով մեկելին ու ասաց.

— Ա՛, դուք ինձ կուզեք ջուրը դցել, լա՛վ, բայց դուք մարդ ջուր դցել չգիտեք, այ ե՛սպես կդցեն։ Ու

յերկուսի ճակատ բերեց զարկեց իրար, ապա կախեց դեպի գետը. փահլեվանները նեղն ընկան և խնդրեցին, վոր իրենց կյանքը բաշխե: Դավիթն ասաց.

— Ձիշտ ասեք ինչո՞ւ յեք ուզում ինձ սպանել, թե չե գետը կգցեմ ձեզ:

Նոր Զարբահար Քամին պատմեց Մելիքի պատվերը և ապա ասաց, վոր իրենք յենթակ յեն բռնակալին և Մելիքը հարկադրել է իրենց այդ ստոր քայլն անելու:

Դավիթը խղճաց Բաթմանա Բուղային աղատթողեց: Մի նապաստակ բռնեց մորթեց, արյունը լցրեց կժի մեջ տվեց Բաթմանա Բուղային, վոր իրը ապացույց տանի Մելիքին. Բաթմանա Բուղան գնաց Մըսըր, իսկ Զարբահար Քամին ասավ.

— Ցես քո հոր սուփրի հացն եմ կերել: Մելիքն ինձ զոռով դերի յե տարել Մըսըր: Ցես հալալ ծառայել եմ քո հորը, սրանից հետո էլ քեզ կծառայեմ:

Ցեվ յերկուսով մեկ-մեկու դլուխ համբուրեցին յեկան Սասնա յերկիր:

Այդ դիշեր Զենով Ոհանը յերազ տեսավ, վոր Սասնա պարիսպն ելի կանգնել եր, այդիները կանաչել եյին, բլբուլները յերգում եյին ու նա կնոջն ասաց.

— Սառե, Սառե, վեր յել, մեր վորբ Դավիթը մեր հողն է հասել:

Ցերբ Սառեն անտարբեր մնաց, Ոհանը բարկացավ ասաց.

— Դու ոտար զարմից ես, քո սիրտը չի ուրախանա, բայց յերազս ճիշտ է, Դավիթն յեկել է:

II

Դավիթը քաղցից ճամբին ամեն տեսակ խոտ կերել եր ու մի քիչ ծուռ եր դարձել:

Զարբահար Քամու հետ, յերբ մտավ Սասուն, հորթարածները, տավարածները հոտերները տեսան Դավթին ու նրա կերպից յեղրակացրին:

—Կա, չկա ես Ջոջանց տնից է:

Գնացին Զենով Ոհանին լմաց տվին, Ոհանը հավաքեց մարդիկ ու ամբողջ Սասունը մեծ ուրախությամբ դիմավորեց Դավթին. Ոհանը մոտեցավ Դավթին հարցրեց.

— Տղա, վորտեղի՞ց ես:

— Սասնա քաղաքից. իմ մերն ասաց, վոր յես եստեղ հորեղբայրներ ունեմ մեծի անունը՝ Վերդո, փոքրինը՝ Զենով Ոհան:

— Վայ Դավիթ, յես քո հորեղբայրն եմ,—ասաց Ոհանը և գրկելով համբուրելով Դավթին տուն տարավ:

Առավոտյան Զենով Ոհանը նորից աղոթք արեց Դավթի աղատության համար, Դավթի դրպանները միրգ լցրեց ու ուղարկեց դուրս, վոր յերեխաների հետ խաղա: Դավիթը գնաց, բավական խաղաց յերեխաների հետ, բայց յերբ մի յերեխա շատ բարկացրեց Դավթին, նա մի ապտակ տվեց և յերեխայի վիզը ծռվեց:

Ցերեկոյան յերեխայի հայրը յեկավ բողոքեց Ոհանին: Ոհանը Դավթին խրատեց վոր այլևս նման բան չանի: Բայց հետեվյալ որը Դավթին ավելի բարկացը-

ին և այս անգամ նա յերեք տղայի ապտակեց, յերեքի վիզն էլ ծռեց:

Այս անգամ բողոքավորներն ավելի շատացան և սպառնացին, վոր Դավթին կսպանեն, յեթե Ոհանը միջոցներ ձեռք չառնի: Ոհանը խորհուրդ արեց, վորոշեց Դավթին դառնարած դարձնել, վոր քաղաքից հեռու մնա, մարդու չվնասի: Նա Դավթին բացատրեց թե իրենք աղքատացել են և Դավթը ամեն մի դառան ղլխի համար մեկ կոտ կորեկ, մեկ կոտ ցորեն վարձ կստանա, յեթե դառնարած դառնա: Դավթը համաձայնեց և Ոհանը Դավթի համար պողպատի սոլ և պողպատի կոռ պատրաստել տվեց ու պատվիրեց.

— Վորդի, եկիր դառները քշիր Սասնա սարի հեռուի արոտատեղը, կեսորին դառներին հավաքիր աղբյուրի մոտ, յես քեզ համար հաց կբերեմ:

Դավթը պողպատե սոլերը հագավ և սատունցոց դառներն, ուլերն առավ սարը գնաց. մի բարձր սարի վրա բոլորին արածացրեց կշատացրեց, հետո կեսորին քշեց քարայրն ու ինքը քնեց, բայց քիչ հետո դառները, ուլերը յելան քարայրից ու չորս կողմ ցրվեցին: Դավթը զարթնեց, տեսավ դառ, ուլ չկա, դոռումդոչումով ընկավ նրանց վնտռելու, նրա ձայնից ու դրդմփոցից նապաստակներ ու աղվեսներ թողեցին իրենց բները, սարից, քարից փախան: Դավթը տեսավ նապաստակներին ու աղվեսներին ընկավ նրանց հետևից և զարմանալով ասում եր—«Ի՞նչ չար արադավաղ ուլեր են»: Վերջը յերբ զաղանները հոգնեցին կանգնեցին, Դավթը բոլորին քշեց, խառնեց իր դառներին և ուլերին: Յերկաթե սոլերը մաշվեցին:

Կեսորին Ոհանը գնաց Դավթի մոտ, տեսնի ի՞նչ տեսնի, նապաստակ, աղվես դառ, ուլ խառնել է իրար: Ոհանի անզգուշությունից նապաստակներն ու աղվեսները փախան: Բայց Դավթը ընկավ նրանց հետևից, եկի բերեց խառնեց իր հոտին ու հասցրեց քաղաք:

Քաղաքացիք ամեն մեկն իր դառի, ուլի հետ իր բաժին նապաստակ ու աղվեսն էլ ստացավ: Մորթեցին կերան, մորթին էլ քուրք արին, բայց դառներն ու ուլերը հալից ընկել եյին:

Վորոշեցին Դավթին տավարած դարձնել: Բայց Դավթը մյուս որը տավարների հետ հավաքեց սարերում ինչքան արջ, գայլ, վագր, առյուծ կար բերեց քաղաք ու կանչեց.

— Հեյ ժողովո՛ւրդ, յեկեք ձեր տավարը տարեք, ով կով չուներ կով եմ բերել, ով յեզ չուներ յեզ եմ բերել, բաց արեք գոները, ով մեկն ուներ արել եմ յերկու, ում յերկուսն եր արել եմ տաս, ում տասն եր արել եմ քսան, ում քսան եր՝ արել եմ քառասուն:

Տեսավ վոչ վոք տանից դուրս չի գալիս, պառկեց մինչև լույս քնեց հրապարակում:

Իշխան մարդիկ գնացին Ոհանին բողոքեցին, թե եդ տեսակ տավարած չենք ուզում, նա քաղաքը գայլերին, արջերին բաժին կդարձնի: Ոհանը գնաց Դավթի մոտ և ասաց.

— Դավիթ, հորեղբայրդ մեռնի քեզ, ասա—հալալ մնացեք, հարամ գնացեք:

Դավիթը կանչեց—«հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք»:

Գաղանները վախան գնացին սարերը, մնացին տավարները։

Քաղաքացիք իրենց տավարները տուն տարան, ապա Ոհանին ասացին.

— Եղ քո Դավիթը հեչ շնորհք չունի, խակական ծուռ է։

Դավիթն այս լսեց, բարկացավ ասաց.

— Ձեր դլուխն ուտի, ել ձեզ նախրորդ չեմ լինի։

Ոհանն ել բարկացավ ասաց.

— Դու վոր եդպես ես անում, ել յես քեզ հետ չեմ կարող դլուխ դնել, ուր կուդես դնա։

Դավիթը գնաց մի կողմի վրա ու հենց դրսում քնեց։

Քեռի Թորոսը մյուս որը յեկավ հարցրեց, թե Դավիթն ո՞ւր է։ Բոլորը սկսեցին հայհոյել Դավիթին։ Թորոսը գնաց գտավ Դավիթին խմացավ, թե ինչ է պատահել ու տուն տարավ։ Վորոշ ժամանակ Քեռու հաշվին Դավիթն ապրեց, վերջն ասաց, վոր ուզում է աշխատել, իր աշխատանքով ապրել ու ազնել Քեռուն։

Քեռի Թորոսը նրան տարավ Դաշտու-Պաղրիալու նշանակեց նախրորդ, և խրատեց թե ինչպես պիտի անի այսուհետև նախրորդությունը, վոր թյուրիմացություններ չլինեն։ Դավիթը Դաշտու-Պաղրիալի նախիրը քշեց դեպի արոտատեղ, ապա Սպիտակ քար աղբյուրի մոտ տեսավ, վոր այնտեղ հավաքվել եր յոթ գյուղի նախիրը, նա նախրորդներին ախպերացավ։

Գարնանը յերբ նախիրը դուրս եյին հանում շատ տավարներ խրվում եյին ցեխի մեջ, Դավիթը նրանց հանում եր վոտքեր կապում, իր կոռն անց եր կաց-

նում նրանց վոտքերի արանքը, գնում ուսին և տանում հանձնում եր տերերին։ Տավարի տերերը շատ գոհ եյին Դավթից և նրան սիրում եյին։

— Շատ դատես, շատ ուտես, քիչ դատես շատ ուտես։ Աստված քո արև պահի, վոր դու չլինեյիր ես տարի մեր կովերը բոլոր պիտի սատկեյին։

Ու Դավթին կպատվեյին հաց ու ձվաձեղ կտային։

Մի որ ել Աստվածածնու կիրակի գյուղացիք ուխտ եյին գնում։ Նրանք մեծ մատաղ եյին արել։ Հովիվներից մեկն ասաց. «ինչ լավ կլիներ մեզ ել մի քիչ հարիսա բերեյինք ուտեյինք»։ բայց վոչ մի հովիվ սիրտ չարեց գնալ։

Դավթը գնաց հասավ ուխտատեղին ու տեսավ, վոր մի կին չորս կանթանի պղինձով հարիսա յե յեփում. Դավիթն ասաց.

— Նանե քո հոր խերին հովիվների համար մի քիչ հարիսա տուր։

Կինը բարկացավ, ասաց.

— Դուրս կորի սատանա ծուռ, դեռ ժամից դուրս չն յեկել, դեռ կա՛ց, տերտերը գա, հարիսեն որհնի նոր կտանք տարեք։

— Ախար նանե տավար թողեր, եկեր եմ, անտեր կմնա կկորչի, տերերը մեղք են։

— Ձե մինչև տերտերը չորհնի հարիսան չեմ տա, դեռ ժամավորն ել պիտի գա ուտի, նոր մնացողը կտամ ձեզ։

—Նանե՛, մնացողը չանն են տալիս։

Նանեն բարկացավ, Դավթին հայհոյեց. Դավիթը տեսավ, վոր ճար չկա, պղինձը թոնրից հանեց, իր

փայտե անցուց պղնձի ունկերը, պղինձը չալկեց, հետո հաց, յուղի ամանն ու յոթ հատ ել չերեսի վերցրեց ու դուրս գնալով, ասաց.

— Ստված թող ձեր մատաղը ընդունելի անի:

— Անիծեմ եսպես մատաղ. ել ինչ մնաց, վոր ինչ ընդունելի լինի,— ասաց պառավը և վազեց ժամը հավար տվեց, թե հարիսեն տարան:

Ժամավորները ուղեցին գնալ Դավիթի հետևից, բայց քահանայի խորհրդով հետ կանգնեցին, քանի վոր հասկացան, վոր Դավիթը Մհերի զորքից եր և նրան դեմ գնել չեր լինի:

Դավիթը հասավ Սպիտակ քար պղինձը դրեց դեռնին ու նախորդներին ասաց.

— Դե յեկեք հարիսա կերեք: Ց՛ա, ինչի՞ չեք գա:

Նախորդները ահուց լեղաճաք եյին յեղել: Նրանք ասին, վոր 40 ավազակ յեկել նախիրը քշել տարել են:

Դավիթը հարցրեց թե վոր ուղղությամբ են տարել և գնաց ավազակների յետևից. Գնաց հասավ մի սարի լանջ, քարայրի մոտ, տեսավ 40 ավազակները 40 կովեր մորթել լցրել են 40 կանթանոց պղինձի մեջ, կեփեն: Դավիթը ներս մտավ քարայր. տեսավ ավազակներին վորը պառկել, վորը խաչ կանի, վորը քնել է:

Դավիթը քարայրի դուռը մի մեծ քարով ծածկեց: Դեվերը ուղեցին քծնել, ծառայություն անել Դավթին, վոր իրենց չսպանե, բայց Դավիթը բանի տեղ չդրեց ու բոլորի վիզն սլորեց, քարայրից դուրս չպրծտեց: Հետո նկատեց, վոր քարայրը լիքն է Սասունից

թալանած բերած վոսկով ու արծաթով, վորը ավազակները բերել եյին Սասունից Մհերի մահից հետո:

Դավիթն իր հավգան լցրեց վոսկով: 40 մոզթած մալի կաշին ու գլուխները լցրեց 40 կանթանի պղնձի մեջ, դցեց ուսին ու յեկավ հարիսատեղ մի ջիչ հարիսա ուղեց կերավ. ապա դիմելով ռամիկներին, ասաց.

— Ձեզի բան ունեմ ասելու,—և հանելով յեզներու կաշին, վոտն ու գլուխը թափեց դուրս, դյուղացիք յեկան ամեն մեկն իր տավարի կաշին վոտն ու գլուխը ճանաչեց: Դավիթն ասաց.— Ձեր մալերու վոտն ու գլուխն են հարիսի փոխ, վոր ձեզնից տարա, ես մեծ պղինձն ել ձեր պստիկ պղնձի փոխ, ես վոսկին ել տարեք բաժին արեք ձեր տավարի մսի փոխարեն, բայց իմացած յեղեք իմ ախպեր հոտաղների հախը չկտրեք:

Ցեվ նոր միայն Դավիթը գնաց հոտաղների մոտ պատմեց յեղածը, հետո հարիսան կերան:

Այդտեղից Դավիթը գնաց Սասուն քեռի Թորոսի մոտ: Պատմեց թե ինչպես է սպանել 40 ավազակ դեվերին: Սկզբում չհավատացին, բայց յերբ Դավիթը յերդվեց, վեր կացան գնացին և քարայրում յեղած ահագին հարստությունը բերին Սասուն, լցրին ամբարները, Սասունը չենացավ: Այդ ամբողջ ավարից Դավիթը միայն մի ձի վերցրեց իրեն:

III

Դավիթը յերբ կատարեց իր այդ քաջագործությունը բոլորի սիրելին դարձավ: Մի բազե ճարեց ու

կաքավի, ճնճղուկի վորս կաներ։ Մի որ գնաց մի պառավի արտ վորսի (այդ պառավը ժամանակին Մհերի յարն եր յեղել), պառավը բարկացավ, ասաց.

— Դավիթ քու արեվը լամ, իմ կորեկի արտը կը վչացնե՞ս, գնա սարեր վորս արա՝ ենտեղ վայրի այծ կա նրանց վորսա։

— Լավ, վոր սար յերթամ ինչով զարկեմ։

— Քո հոր նետ ու աղեղով,—և հայտնեց, վոր Ոհանի կին Սառեն կարող է ասել Մհերի նետ ու աղեղի տեղը։

Դավիթը գնաց Սառեյի մոտ, ուզեց հոր նետն ու աղեղը, բայց Սառեն չտվեց, այն ժամանակ Դավիթը պառավի խորհրդով քարից աղանձ արեց և սպառնաց Սառեյին ուտացնել յեթե նա իր հոր նետ ու աղեղի տեղը չասի։ Սառեն հարկադրված Դավթին հանձնեց Մհերի նետն ու աղեղը և այնուհետև Դավիթը դրանցով գնում եր վորսի։

Մի որ եկ Դավիթը վորսի գնալիս մտավ պառավի արտը և այնտեղ սպանեց 20 ագռավ, բայց այնպես յեղավ, վոր կորեկի արտը վչացավ, պառավը յեկավ խիստ բարկացավ, անիծեց Դավթին, ասաց.

— Քո հերը Մհերը, խեղճին ապավեն եր, դու ես ի՞նչ ե կանես, վորս ես անում գնա Ծովասար, ի՞նչ ես թողել, Մսրա Մելիքն յեկել զավթել ե։ Ծովասարի չորս բոլոր պարիսպ ե քանդած ու բոլոր վորսը ներսումն ե։ Ինչքան կուզես վորսա։

Դավիթը գնաց հորյեղբոր մոտ պահանջեց, վոր Ծովասարի տեղն ասի։ Ոհանն ասաց, վոր Մսրա Մելիքը գավթել ե և իրենք իրավունք չունեն այնտեղ գնալու։

Բայց Դավիթը չլսեց, պահանջեց գնալ և Ոհանն ստիպված իր իշխաններով ընկերացավ Դավթին։ Դավիթը գնաց հասավ Ծովասար, տեսավ բարձր պարիսպ և դուռ չկա։ Իր դուրզով պարիսպը փլցրեց ներս մտավ։ Մտավ ու ինչ տեսավ, ինչպեսի՞ ծառեր, ինչպիսի՞ բաղ ու բանչա, ինչպիսի՞ զուլալ աղբյուրներ, վոր մենակ դրախտում կարող է լինել և ամեն տեղ եկ լիքը զանազան գազաններ։ Եդ բոլորը Մհերն եր ստեղծել։ Դավիթը չթողեց գազաններին սպանեն, ասաց.—Նրանց պետք է նաև աղատություն տալ, չե՞ վոր այդ գազանները պարսպի ներսում ապրում են ինչպես գերի, իսկ մի թե գերուն կարելի յե սպանել։ Յեվ նա Ծովասարի պարիսպն ամբողջովին քանդեց ու գազաններին բաց թողեց, ապա նոր միայն վորսաց յերկու վայրի վոչխար և խորոված արեց։

Յեղեկոյան իշխանները վերադարձան Սասուն։ Դավիթն ասաց Ոհանին, թե ուզում է մնալ այնտեղ։ Գիշերը քնեցին, Դավիթը զարթնեց ու ինչ տեսնի, այնտեղ յեղած գերեզմանին լույս է իջել ու քարը ճրխկտում է գիշերվա խավարում։ Դավիթը գնաց, նշան արավ այնտեղ ու յեկավ հորեղբոր կանչեց, ասաց.

— Հորեղբայր վեր եկի քո անուշ քնից, տեր չունեմ ինձ տերություն արա, հեր, մեր, ախպեր չունեմ, դու ինձ հեր, մեր ու ախպեր յեղիր։

Հորյեղբայրը զարթնեց հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

Դավիթը պատմեց գիշերվա տեսածը և ապա հորեղբոյրից իմացավ, որ յեղած դերեզմանը իր հոր Մհերի դերեզմանն է, իսկ այն ավերակը որ կա, դա յել Մարուքա բարձր Աստվածածինն է, որ Մելիքը քար ու քանդ է արել:

Դավիթն ես որ լսում է, յցվում է սրբազան յեռանդով—ցանկանալով որ առաջ վերականգնել վանքը, նա անմիջապես մարմար քարի շուրջն իր նետ ու աղեղով գիծ է քաշում, խորանի ու սեղանատան տեղը վորոշում և Ոհանից պահանջում է հաղար-հաղար քար կտրող, քար տաշող, խիճ բերող, ջուր բերող, պատ շարող:

Հորեղբայրն ասում է գնանք քաղաք բերենք:

— Չե՛, ասաց Դավիթը,—յես էլ եստեղից չեմ հեռանա, մինչև վանք չշինեմ:

Զենով Ոհանը խոսք տվեց, որ իր բարձր ձենով կկանչի բոլորին և յելավ գնաց քաղաք, իսկ Դավիթը Նրա հետ առատ վորսացու դրեց:

Ոհանը գնաց և մյուս որը պահանջված բոլոր վարպետները բերեց: Դավիթը վարպետների, բանվորների հետ հավասար աշխատում եր վանքի կառուցման համար: Շատ մեծ քարեր, որ տասնյակ մարդիկ տեղից չեյին կարող շարժել Դավիթը շալկում բերում եր, վանքի պատերը շարում: Բայց վանքի կառուցումը գլուխ չեր գալիս: Ցերազում Աստվածածինը Դավթին ասաց. «Քո թուրը մեջքիցդ քաշի, վանքի հիմքը քո թրի վրա դցի, մեկ որվա մեջ վանքը կավարտես, պատարագ կմատուցես և յես հիմքիս վրա հաստատ կկանգնեմ»: Դավիթն այդպես էլ արավ, վանքի

կառուցումն ավարտեց քառասունական եպիսկոպոս, վարդապետ, սարգավագ, լուսարար կանչեց և պատարագ մատուցեցին: Վանքը շենացրին:

Դավիթը Զարբահար Քամուն վանքին պահապան կանգնեցրեց և պատվիրեց.

— Ավեր, ավազակ մարդիկ, որ դան, դուռը չես բանա, բայց ուխտավորների, մոլորվածների, խեղճ մարդկանց առաջ դուռը միշտ բացեք, կերակրեք, խնամեցեք:

Մյուս որն էլ Դավիթը Սասունի և վանքի միջև անցնող գետի վրա մի մեծ կամուրջ կառուցեց, որ մարդիկ ազատ անց ու դարձ անեն:

Խաբարը հասավ Մսրա Մելիքին, թե «Դավիթը Ծովասարը գրավել է, բոլոր բռնավոր զաղաններին աղատել է, պարիսպը քանդել ու Մարուքա վանքը շինել է»:

Մսրա Մելիքը կատաղեց կանչեց Խոլբաշուն, որ նա գնա վանքն ավերի, Թալանի բերի: Խոլբաշին ասաց, «յես հինգ հարյուր մարդով կերթամ, ու վերցրեց իր մարդիկ յեկան վանքի վրա: Զարբահար Քամին սկզբից յենթադրում եր թե յեկողները ուխտավորներ են, բայց նրանց շենքից—շնորքից քիչ հետո հասկացավ, որ չար նպատակով են գալիս, ուստի վանքի դուռն ամուր պահեց: Խոլբաշին վանքը շրջապատեց սպառնաց Զարբահարին, բայց Զարբահար Քամին դուռը չեր բացում: Վերջը Խոլբաշին մի շոր ներկեց արյան մեջ, ցցեց նիզակի վրա մոցրեց վանքի պարիսպից ներս, ասաց.

— Ձեր Դավթին սպանել եմ, ես նրա արյունոտ շորն է, հանձնվեք, թե չե ձեզ էլ կսպանեմ:

Վարդապետները, վոր արյունոտ չապիկը տեսան շատ վախեցան. նրանք կարծեցին, վոր իբրև Դավիթն սպանված է, ուստի դիմադրությունն ավելորդ համարեցին և յերբ Զարբահար Քամին քնած եր դուռը բացին Թշնամու առաջ:

Ղոլբաշին իր ավազակախմբով ներս մտավ. քառասուն վարդապետին, քառասուն տերտերին, քառասուն սարգավագին սպանեց, միայն մի սարկավագ, վոր սպանված եր ձևացել դիշերը դիակների մեջից փախավ Սասուն և վանքի ավերման ու կոտորածի լուրը տարավ Դավթին:

Այդ ժամանակ Դավիթը աղաղ տղաների ու աղջիկների հետ նռան դինի եր խմում ու քեֆ եր անում:

Յերբ Դավիթը Ղոլբաշու կատարած ավերածության լուրը լսեց, անհուն ցասումով լցվեց ընդդեմ Մըսրա բռնակալի և դուրս վազելով՝ պառավից խորխուրդ հարցրեց, թե վո՞ր ճամբով գնա, վոր Ղոլբաշու ավազակների առջևը կտրի:

Պառավի խորհրդով Դավիթը մի բարդի կտրեց ու կանգնեց Բաթմանա կամուրջին: Հաղթական Ղոլբաշին իր հինգ հարյուր մարդով վանքի ավարն առած վերադառնում եր Մըսրը: Դավիթը բարդին ձեռքին հարձակվեց ավազակների վրա, վորին սպանեց, վորին եկ շպրտեց գետը խեղդեց: Քիչ հետո նայեց տեսավ Ղոլբաշին փախել հասել է գետի մյուս ափը, Դավիթը դիմեց նրան, ասաց.

— Ով ձիավոր, վոր ուղենամ քեզ եկ կսպանեմ, բայց չեմ սպանի, դու գնա Մելիքին բարով ասա, ասա, թե Սասունը չի մոռել: Սասունը իր ազատությունը դիտե պաշտպանել: Թող Մելիքը մեկ եկ Սասունի բան չանի: Ավեր-ավազակությունով բան չի դառնա: Թող թողնի մենք մեր հալալ աշխատանքով ապրենք:

Ղոլբաշին չհամարձակվեց ձայն հանել, շուռ տվեց ձիու գլուխը ու քշեց դեպի Մըսրը:

IV

Ղոլբաշու 500 մարդու վոչնչացման լուրը հասավ Մըսրա Մելիքին: Մելիքը մեջլիս հավաքեց իր անելիքը վորոշելու՝ Դավթին ու Սասունցոց պատժելու համար: Մելիքն ինքն եր ուզում կռիվ գնալ: Այն ժամանակ Կողբադինն ասաց.

— Մեր թագավորն ապրած մնա, յես վայել չեմ տեսնում, վոր դու գյավուրի վրա կռիվ գնաս, դու ինձ հազար կռվող տուր, յես յերթամ Սասունը թալանեմ, յոթը տարվա հարկը հավաքեմ բերեմ:

Քառասուն երկեն կնիկ բերեմ ուղտեր բառնան,
Քառասուն կոլտա կնիկ բերեմ յերկանք աղան,
Քառասուն ազաղ աղջիկ բերեմ քեզ արմաղան,
Քառասուն արջառ, քառասուն յերինջ,
Քառասուն ուղտի բեռով արծաթ,
Քառասուն ուղտի բեռով վոսկի բերեմ քեզ խարջ,
Սասունն անեմ առ ու թալան, Դավթին եկ սպանեմ չապիկը բերեմ քեզ:

Մելիքն ուրախացավ, ասաց.

— Քաջ Կողբադին, եղ իրավունքը քեզ եմ տալիս, յել գնա Սասունի վրա:

— Մելի՛ք, ինչ կտաս ինձ, թե ասածս արի:

— Իմ թագավորության կեսը,—խոստացավ Մելիքը։

Կողբադինը, Բաղինի, Սուդինի ու Զարխադինի հետ ղենքով զորքով ճամբա ընկավ։ Մըսրա քաղաքի կանայք այս տեսնելով, ասին։

— Բարով Բաղին ու Զարխադին,
Եղ ո՞ւր կերթաք եղպես վազան,
Ե՛, Կողբադին, ե, դու Սուդին,
Վոր դարձեր եք եղպես դազան»։

Կողբադինը ասավ կանանց։

— Կերթանք Սասուն առ ու թալան,
Կարմիր յեղներ բերենք լծան,
Սիրուն կովեր բերենք կթան»։
Վոր դուք անեք յեղ ու չորթան»։

Կանանցից մեկն ասաց,— Թե յես Սասնու ծռերին ճանաչում եմ, նրանք եդ բաները չեն տա։

Իսկ մի ծերունի, վոր յոթը տղա ուներ, ասաց։

— Ինչի Սասունցիք ապրել չեն՞ ուզի, վոր Կողբադին ամեն բան կուզի թալանի բերի։

Կողբադինը եկ ականջ չդրեց, քշեց հասավ Սասուն վրանը զարկեց դաշտում, ապա քառասուն մարդ ու քառասուն ուղտ վերցրեց, դնաց Ոհանի մոտ խարջը ստանալու։ Ոհանը վախենալով վոր Դավիթը նորից կարող ե կռիվ անել և դրանով Մելիքի բարկությունը սաստկացնել, նրան խարեց ուղարկեց սարը վորսի։

Կողբադինի զորքը ազատ մտավ Սասուն, ամեն տեղ մահ ու ավեր սփռեց։ Զենով Ոհանն ու վախկոտ Վերգոն ընդունեցին Կողբադինի բոլոր պահանջները։ Վերգոն ընկերացավ Կողբադինին ու միասին ընտրեցին քառասունական հատ յերիկարահասակ, կարճահասակ, գեղեցիկ աղջիկներ, բոլորին բերին լցրին մարաղները, վոր հետո Կողբադինը տանի Մըսրը։ Են պառավը, վոր Դավիթին խորհուրդներ կտար նրա աղջիկն ել տարան։ Սուդն ու Չիվանն ընկավ ժողովրդի մեջ։ Մի քանի մարաղ ել լցրին արջառներ ու երինջներ։

Կողբադինը ուրախացած եր հեշտ հաղթանակով. գնաց Ոհանի մոտ, վոր վոսկին ու արծաթն ել չափի տանի Մելիքին։

Այդ ժամանակ Դավիթը սարում վորս արավ և. մի վայրի այծ ուսին դցած իջավ քաղաք, ճամբին մտավ պառավի արտը չաղկամ քաղեց և ուտելով մըտավ Սասուն։ Մտավ ու ինչ տեսնի, ամեն տեղ ծիծաղ և ուրախություն լռել է. դրա փոխարեն սուգ ու չիվանե, մի քիչ հետո Դավիթին հանդիպեց պառավը, նա ձայն վերցուց անիծեց, ասաց։

— Այ՛, Սասնա ծուռ, չաղկամակեր. ես ի՞նչ որ ե մենք կը քաշենք. մի աղջիկ ունեյի տանջանքով պահեցի մեծացրի, վոր եսոր դան տանե՛ն։ Տես՛ հլա քանի-քանիսին են տարել։ Մի քանի կով արջառ մեզ ապրուստ ունեյինք, եսոր տես բոլորը թալան են տարել։ Վերգոն թե աղջիկ, թե կնիկ, թե կով ու արջառ լցրել է մարաղներ, վոր տա Մըսրա Մելիքին։

— Ովքե՞ր են, ինչ մարդիկ են յեկողները,— հարցրեց Դավիթը։

— Կողբադինն է յեկել, տե՛ս հիմի ել դնացել է քոհոր վոսկին է չափում, վոր տանի Մըսրը։

— Պառավ թե ցույց տուր տեսնե՞մ, ուր են աղջիկներ, ո՞ւր է Կողմադին։

Պառավը Դավթին ցույց տվեց դոմերը, ուր Կողբադինը զետեղել էր իր ավարը:

Դավիթն անմիջապես կոտրեց առաջին յերեք դոմի դռները, կանայք ու աղջիկները դուրս թափվեցին և տեսնելով Դավթին, նրա կյանքն որհնեցին. Դավիթն ասաց.

— Իմ մայրեր, իմ քույրեր, գնացեք ձեր տները, ձեզ համար աշխատեք, աղոթք արեք, յես կերթամ չար թշնամու դատաստանը կտեսնեմ:

Ապա Դավիթը արջառներն ու կովերն ել հանեց դոմերից, ասաց.

—Աստծու անասուններ, գնացեք ձեր տերերի դուռ:

Այնուհետև Դավիթը մտավ վոսկու ամբարը և տեսավ, վոր Ոհանն ու Վերգոն քավ-քրտինքի մեջ մտած վոսկի յեն չափում Կողբադնի համար և ինչքան Ոհանը չափելով կասեր «յերկո՛ւ, Կողբադինը սպառնալից կասեր «մե՛կ»: Դավիթն առաջ անցավ, ասավ՝ հորեղբայրներս հոգնել են, յես պետք է չափեմ վոսկին: Վերգոյի ձեռքից կոտն առավ, շուռ տվեց հակառակ կողմը և հորյեղբորն ասաց՝— լից. Վերգոն մի թիակ վոսկի լցրեց կոտի յետևի մասին, Դավիթը վոսկին իր տեղը թափեց, դատարկ կոտը ձեռքն առավ, շուռ տվեց ջվալի մեջ ու ասաց.—սա «մե՛կ,—յերկո՛ւ»:

Կողբադին բարկացավ, ձեռով Ոհանի վրա և պահանջեց վերջ տալ Դավթի կատակին:

Դավիթը Մարուքա Աստվածածնի անունը տվեց ու կոտը չպրտեց Կողբադինին, բայց Կողբադինը դլուխը թեքեց և կոտը նրան չդիպավ, թե չի գլուխը կթռներ:

Կողբադինը փախավ, Դավիթն ընկավ նրա յետևից, բռնեց, նրա հաստ շրթունքները կտրեց, ատամները քաշեց շարեց ճակատին, դրեց ձիուն, վոտքերը ձիու վորի տակից կապեց ու ասաց.

— Դե գնա թագավորիդ բարեվ արա, ասա ես ամենը Մհերի տղա Դավիթն արեց: Եվ ասա թող չգա Սասուն, թող մեր կանանց, աղջիկներին հանգիստ թողնի, Սասնա տունը չավիրի: Մենք դեռ վողջ ենք, Սասնա ճրագը դեռ չի մարե: Մըսրն իրեն, Սասունը մեզ, թող իր տեղը խելոք նստի:

— Կողբադինը ջարդված, ծեծկված դարձավ Մըսրը, հազիվ մի քանի մարդ փրկվեցին:

Դավիթը բոլոր դերիներին ազատ արձակեց, ալան-թալանը հետ դարձրեց, կանչեց Սասնա Ժողովրդին, ասաց.

— Թող ամեն մարդ դա իր ապրանք ջոկի տանի: Ով վոր իր ապրանքից մեկ կորեկ ավել վերցնի, նրա դլուխը կը կտրեմ:

Յեվ Ժողովուրդը ցնծաց, ուրախացավ, որհնեց Դավթի կյանքը:

Կողբադին, Զարխադին ու մյուսները հասան Մըսրը:

Հեռվից կանայք նկատելով Կողբադինի բաց բերանը կարծեցին թե ծիծաղում է, բայց յերբ Կողբադինը մոտեցավ և տեսան նրա վողորմելի վիճակը ամեն կողմից հեղնանքով խոսեցին.

— Այ մեծաբերան Կողբադին, հապա ուր են քո

բերած քառասուն-քառասուն կին ու աղջիկը, ո՞ւր են վոսկին ու արծաթը, ո՞ւր են կովերն ու արջառները:

— Եղ ինչե դու եղպես կուդաս լերան-լերան, ատամներդ էլ ճակտիդ վրա շարան-շարան:

— Ա՛յ դու ցեխով կոկված մեծաբերան գոռալ մեզ վրա կանցնե՞ր, հա,— բացականչեց մի ուրիշ կին:

— Եստեղից գնացիր քանց գել-գաղան, ենտեղից կուդաս քանց չուն վաղան:

— Տեսե՛ք, տեսեք վսլինքն էլ են հոտած քթից-բերնից կերթա՝ քանց տոպրակի թան:

Կողբաղին այդ խայտառակությանը չդիմանալով գլուխը կախեց, ուղեց ուրիշ ճամբով գնա:

Բայց կանայք քիչ հետո տխրեցին: Տեսան, որ շատերի ամուսինները չեն վերադարձել. մեկն ասաց.

— Հապա ուր են մեր երիկները, ուր թողիր եանոնց:

— Աշխարհ աշխարհ յեղնի, հաշտ ու հանգիստ ապրի, եսպես չխայտառակվի,— ասաց մյուս կողմից յոթ տղայի տեր Մըսըրցի Ծերունին:

— Այ դաղան, ինչի տարար մարդիս գլուխը կերար,— գոչեց մի ջահել կին:

Կողբաղին այս անգամ պատասխանեց.

— Ե՛յ, յես գիտեյի թե Սասունը դաշտ ու դուրան է, մարդիկն էլ խեղճ-վողորմելի, համա Սասունը քար ու կապան է, մարդիկն էլ ծուռ ու կռվից չեն վախենում: Ձեր մարդկանց ասանեցին. Սասնա դարնանային հեղեղը ձեր մարդկանց քիթ ու ականջները կը քշի բերի: Կերթաք կը հավաքեք յեղ ու չորթան կանեք:

Կողբաղինը ամոթու գնաց իր տունը և չեր ուզում յերևալ Մըսրա Մելիքի աչքին: Բայց Մելիքը նրան կանչել տվեց ու ամեն ինչ իմացավ. նրա զայրույթին չափ ու սահման չկար, շատ եր կատաղել Դավթի վրա:

— Ա՛յ մեր, ախր դու իզուր չթողեցիր յես նրան սպանեյի:

Մայրը խորհուրդ տվեց Մելիքին, վոր նա այլևս Դավթի հետ կռիվ չանի,— դաշն կնքի. խոստացավ նույնիսկ, վոր ինքը բարեկամական թուղթ կը գրի Դավթին:

Բայց Մելիքը մոր վրա բարկացավ ասաց.

— Մերի՛կ, ինչքան քեզ լսել եմ վնասվել եմ, պիտի Դավթի վրա կռիվ գնամ, պիտի նրան էլ Սասունն էլ վոչնչացնեմ:

Այնուհետև Մելիքը մեջլիս հրավիրեց և հայտնեց իր մտադրությունը Դավթի վրա կռվի գնալու մասին:

Մեջլիսի մի անդամ ասաց.

— Մելիք թե կռիվն անելու ես, հենց հիմա արա, քանի Դավիթը ջահել 20 տարեկան է, անփորձ է, կռվել չգիտե, թե չե, նա վոր դարձավ 30 տարեկան, էլ նրա հետ կռվել չի լինի:

Բայց քաղաքի մի քանի մարդիկ էլ Մելիքին խորհուրդ տվին կռիվ չանել, հաշտվել. նրանք ասին, վոր Դավիթը Մըսրին վնաս չի տվել, նա իր տանը նստել

բերած քառասուն-քառասուն կին ու աղջիկը, ո՞ւր են վոսկին ու արծաթը, ո՞ւր են կովերն ու արջառները:

— Եղ ինչե դու եղպես կուդաս լերան-լերան, ատամներդ ել ճակտիդ վրա շարան-շարան:

— Ա՛յ դու ցեխով կոկված մեծաբերան զուլ մեզ վրա կանցնե՞ր, հա,— բացականչեց մի ուրիշ կին:

— Եստեղից գնացիր քանց դել-դաղան, ենտեղից կուդաս քանց շուն վաղան:

— Տեսե՛ք, տեսեք փսլինքն ել են հոտած քթից-բերնից կերթա՝ քանց տոպրակի թան:

Կողբաղին այդ խայտառակությանը չդիմանալով գլուխը կախեց, ուղեց ուրիշ ճամբով գնա:

Բայց կանայք քիչ հետո ախրեցին: Տեսան, վոր շատերի ամուսինները չեն վերադարձել. մեկն ասաց.

— Հապա ուր են մեր երիկները, ուր թողիր եկոնց:

— Աչխարհ աչխարհ յեղնի, հաչտ ու հանգիստ ապրի, եսպես չխայտառակվի,— ասաց մյուս կողմից յոթ տղայի տեր Մըսըրցի Ծերունին:

— Ա՛յ դաղան, ինչի տարար մարդիս գլուխը կերար,— գոչեց մի ջահել կին:

Կողբաղին այս անդամ պատասխանեց.

— Ե՛յ, յես գիտեյի թե Սասունը դաչտ ու դուրան է, մարդիկն ել խեղճ-վողորմելի, համա Սասունը քար ու կապան է, մարդիկն ել ծուռ ու կռվից չեն վախենում: Ձեր մարդկանց սպանեցին. Սասնա զարնանային հեղեղը ձեր մարդկանց քիթ ու ականջները կը քչի բերի: Կերթաք կը հավաքեք յեղ ու չորթան կանեք:

Կողբաղինը ամոթու գնաց իր տունը և չեր ուզում յերևալ Մըսրա Մելիքի աչքին: Բայց Մելիքը նրան կանչել տվեց ու ամեն ինչ իմացավ. նրա զայրույթին չափ ու սահման չկար, շատ եր կատաղել Դավթի վրա:

— Ա՛յ մեր, ախր դու իզուր չթողեցիր յես նրան սպանեյի:

Մայրը խորհուրդ տվեց Մելիքին, վոր նա այլևս Դավթի հետ կռիվ չանի,— դաշն կնքի. խոստացավ նույնիսկ, վոր ինքը բարեկամական թուղթ կը գրի Դավթին:

Բայց Մելիքը մոր վրա բարկացավ ասաց.

— Մերի՛կ, ինչքան քեզ լսել եմ վնասվել եմ, պիտի Դավթի վրա կռիվ գնամ, պիտի նրան ել Սասունն ել վոչնչացնեմ:

Այնուհետև Մելիքը մեջլիս հրավիրեց և հայտնեց իր մտադրությունը Դավթի վրա կռվի գնալու մասին:

Մեջլիսի մի անդամ ասաց.

— Մելիք թե կռիվն անելու ես, հենց հիմա արա, քանի Դավիթը ջահել 20 տարեկան է, անփորձ է, կռվել չգիտե, թե չե, նա վոր դարձավ 30 տարեկան, ել նրա հետ կռվել չի լինի:

Բայց քաղաքի մի քանի մարդիկ ել Մելիքին խորհուրդ տվին կռիվ չանել, հաշտվել. նրանք ասին, վոր Դավիթը Մըսրին վնաս չի տվել, նա իր տանը նստել

և Մըսըրցիք են գնացել նրա հորական տունը քանդել։

Մելիքն այդ մարդկանց վրա բարկացավ ասաց.

— Կերթամ, Սասունը կը քանդեմ, ժողովուրդը տեղահան կանեմ, վոր էլ աշխարհի վրա Սասնա անունը չլինի։

V

Մըսրա Մելիքը իրեն հպատակեցրել էր իր յերկրի յերեք կողմերի ժողովուրդներին։ Մենակ Դավթի հայրենիքն էր ազատ Մելիքի տիրակալությունից։

Մելիքն իր ճակատից արյուն հանեց ու գրություն գրեց իր յերկրի զանազան կողմերը, իր բոլոր վասալներին, վոր հազար-հազար զորք ուղարկեն իր մեծ կռվի համար։ Մի քանի որվա մեջ այնքան զորք հավաքվեց, վոր Մըսրա գետի ջուրը խմելով՝ ցամաքեցրին։

Յերբ Մելիքը պատրաստվում էր Սասուն արշավելու, այդ գիշեր Իսմիլ Խաթունը իրար վրա յերեք վատ յերազ տեսավ, էլ չկարողացավ քնել, գնաց Մելիքի մոտ ասաց.

— Մելիք, վորդի, մեկ էլ եմ ասում քեզ, դու Դավթի հետ կռվի մի բռնվի։ Յես գիշեր յերազ եմ տեսել. Մըսրա աստղը մութ ու խավար էր, Սասնա աստղը լուս ու պայծառ, մեկ էլ յերազ տեսա Մըսրա ձին փախչում էր, իսկ Սասնա ձին նրան հասնելով էր, մեկ էլ յերազ տեսա՝ Սասնա յերկիրը արև ու լուս էր, Մըսրը մութ, ամպոտ, անձրև կուգար,

հեղեղ յելավ ու իր հետ գիակներ կքշեր տաներ։ Արի Դավթի վրա կռիվ մի գնա։

— Բավական է,— բարկացավ Մելիքը,— ի՞նչ է, քեզ համար կքնես, ուրիշի համար յերազ կտեսնե՞ս, պիտի կռվի գնամ։

— Դե վոր կերթաս, ինձ էլ քեզ հետ տար։

— Դու կնիկ ես, ինչ գործ ունես պատերազմի դաշտում։

— Հանդիստ չեմ կարող մնալ, պիտի գամ,— ասաց Իսմիլը և քառասուն կնիկ, աղջիկ վերցրեց հետը, զուռնաչիներ նույնպես վերցրեց, վոր աղջիկների համար պարի յեղանակ նվագեն և Մելիքի հետ գնաց Սասուն։

Մելիքն իր բանակը դրեց Սասնա դաշտ և այսպիսի թուղթ գրեց Դավթին. «Դավիթ, թե կռիվ կուզես, արի իմ դեմ, թե չե իմ զորքով կհարձակվեմ քաղքի վրա, ինչքան ուղամարդ կա կսպանեմ, Սասունը կայրեմ, ջրհեղեղ կը հանեմ ու Սասնա քար ու հողն էլ քամուն կտամ»։

Թուղթը բերին, տվին Ոհանին. Ոհանը թուղթը թաղցրեց Դավթից ու ինքն իրեն ասաց. «Ի՞նչ պիտի անենք եղքան մարդու դիմաց, վոչ կռվող ունենք, վոչ զորք»։ Նա լալով գնաց Վերգոյի մոտ խորհուրդ անելու։ Վերգոն կարդալով թուղթը, ասաց.

— Ես թուղթը պիտի Դավթից թաղցնել, ավելի լավ է Դավիթին հարբեցնենք, վոր նա վոչ մի բանի չիառնվի, Մելիքին ավելի չբարկացնի, իսկ մենք հավաքենք հարկը, հավաքենք կին, աղջիկ, գնանք Մելիքի թրի տակով անցնենք, դուցե մեզ խղճա։

Ոհանը համաձայնեց ու Դավթին հարբեցրին, Դավիթը կողքի ընկավ ու խոր քնեց։

Բայց Քեռի Թորոսը թմբուկ զարկեց, մարդիկ հավաքեց, գնաց Լոռաստրի գլուխ 39 վրան խփեց։ Նա կողմնակից էր կռվի, ուստի իր մարդկանց ասեց. «Շատից շատ կերթա, քչից քիչ, Աստված կամ Մելիքին կտա, կամ մեզ»։

Ցերը Քեռի Թորոսը կռվի գնաց, նրա կինը շատ անհանդստացավ, ասաց. «Քեռի Թորոսին ու բոլորին կսպանեն, կդան մեզ էլ կսպանեն ու մեր ազգն ամբողջ կվոչնչացնեն»։ Նա նստավ Դավթի մոտ, լաց յեղավ, արտասունքները թափվեցին Դավթի դեմքին, Դավիթը զարթնեց.

— Ց'ա, նանե, աստված խերն անի, ինչո՞ւ կուլաս։

Ա'յ Դավիթ,— ասաց Սանդուղտը,— գրողը քեզ տանի, Կողբադինին ջարդեցիր, բայց հիմի Մըսրա Մելիքն է անթիվ զորքով յեկել, վոր մեր վերջը բերի։

Դավիթը զայրացավ վեր յելավ, գինովությունն անցավ. նետ աղեղն առավ, ասաց.

— Նանե', մի անհանդստանա, յես կերթամ Մելիքի պատասխանը կտամ։

Ցեվ Դավիթը գնաց Զենով-Ոհանի մոտ զենք ու ձի ուզեց, վոր կռվի գնա։ Ոհանը նրան տվեց գոմի ձիերից մեկն ու մի սովորական ժանգոտ թուր։ Դավիթը ձին հեծավ, ժանգոտ թուրը կապեց քշեց առաջ. Վախկոտ Վերգոն Դավթին տեսնելով հեղնեց.

— Թե Մելիքին սպանես, ականջը բեր ինձ նվեր։ բայց Դավիթը չլսելու դրեց, առաջ գնաց։

Ճամբին նրան հանդիպեց պառավը։

— Ո՞ւր ես գնում Դավի՛թ, ի՞նչ պիտի անես։

— Մսրա Մելիքի վրա կռիվ եմ գնում։

Պառավը ծիծաղեց, ասաց.

— Դավի՛թ, խենթ ես, վոր եդ ժանգոտ թրով, եդ քոսոտ ձիով կռիվ կերթաս, հապա դու Մհերի տղեն չե՞ս։

— Պառավ թե բան գիտես ասա', հապա ինչպես՞ գնամ կռիվ։

— Ախ Դավիթ,— ասաց պառավը,—մի՞թե չգիտես վոր կա քո հոր Թուր Կայծակին, մի՞թե չգիտես, վոր կա քո հոր Քուռկիկ Ջալալին, մի՞թե չգիտես, վոր կա քո հոր Խաչ Պատերազմին վոր կը կապի իր աչ թևին։

— Պառավ, դե ասա', շուտ ասա եդ բոլորը վորտեղ են։

— Քո հորեղբոր Ոհանի մոտ է։ Գնա ուզի, թե խաթրով տվեց, տվեց, թե չտվեց զոռով առ։

Դավիթը քշեց գնաց հորեղբոր մոտ, ասաց.

— Ա՛յ անաստված հորողդեր ինչու ինձնից թաքցրել ես իմ հոր Թուր Կայծակին, Քուռկիկ Ջալալին, Խաչ Պատերազմին, վոր կըկապեր իր աչ թևին։ Շուտ հանիր բոլորը տուր ինձ, թե չե հոգիդ կը հանեմ, գլուխդ կառնեմ։ Թշնամին Սասուն առ ու թալան է անում, էլ վո՞ր որվա համար ես պահում հորս զենքն ու զրահը։

Զենով Ոհանը էլ բան չկարողացավ ասել, գնաց բոլոր զենք ու զրահ թաղստոցներից հանեց բերեց

տվեց Դավթին։ Ոհանը ցույց տվեց նաև Քուռկիկ Ջալալու տեղն, ասաց.

—Գնա՛, թե կարող ես հեծիր։

Դավիթը մտավ դոմը։ Ձին տեսավ, վոր յեկողը Մհերը չեր, բարկացավ վոտքը այնպես զարկեց քարին, վոր քարը կայծկլտաց։

Բայց Դավիթը մոտեցավ, չոյեց ձիուն ու ձին հասկացավ, վոր Դավիթը Սանասարի Մհերի զարմից եր՝ հպատակվեց Դավթին։

Դավիթը հագավ հոր զենք ու զրահը, կապեց թուր Կայծակին, աջ թևին կպցրեց Խաչ Պատերազմին, հեծավ Քուռկիկ Ջալալին ու այնքան հոյակապ դյուցազնական տեսք առավ, վոր Սասնա ժողովուրդը, վոր յեկել եր նրան ճամբու դնելու, վոգեվորվեց, հանձին Դավթի տեսնելով Մհերի արժանի ժառանգին՝ իր աղատարարին։ Տեղն ու տեղը աղջիկներն ու հարսները յերգ կապեցին, յերգեցին.

— Դավիթ գնալդ չլինի,
Դառնալդ լինի,
Դառնալդ լինի մեր յեղբայր Դավիթ.
Մինչ հիմի քեզ հարսնություն չենք արել,
Նոր պիտի հարսնություն անենք, մեր յեղբայր Դավիթ,
Նոր պիտի քո ձեռներին ջուր լցնենք,
Քո վոտքերին սոլ պիտի դնենք, մեր յեղբայր Դավիթ.

Դավիթը հուզվեց, բոլորի խաթրն առավ ու պատասխանեց.

— Յեղբայրներ, քույրեր, դուք միք վախենա, յես կերթամ, մնացե՛ք բարով մնացե՛ք բարով, բոլորդ ինձ քուր ու մեր եք յեղել, իմ ավել պակաս հալալ արեք, մնացե՛ք, բարով։

Դավթի տատը՝ Դեղձուն-Ծամը, վոր մինչ այդ Մհերի մահվան պատճառով սուգի մեջ եր, իր սուգից յելավ, իմացավ Դավթի արարքները, Մհերի ձիու ձենն առավ, յեկավ Դավթին որհնեց ու Քուռկիկ Ջալալուն խրատ տվեց, վոր Դավթին լավ ընկերություն անի։

Դավիթը Քուռկիկ Ջալալին քշեց դնաց Ծովասար։ Ճամբան մուժ ու դուման եր, բայց Քուռկիկ Ջալալին ամեն ճամբան լավ գիտել, Դավթին տարավ կաթնաբյուրի վրա կանգնեցրեց։ Դավիթն իջավ կաթնաբյուրի ջուրը խմեց—ավելի ուժեղացավ, հոր զենք ու զրահն վրան ավելի լավ նստեց։

Դավիթը թուր Կայծակին փորձեց. ըստ պայմանի նա պիտի մի պողպատե սյուն միջից կտրեր։ Հարվածեց, այնպես հարմարին կտրեց, վոր սյունը թեև մի-ջից կիսվեց, բայց մնաց իր տեղում կանգնած. Դավիթը մի պահ հուսահատվեց, կարծելով, թե չի կարողացել կտրել, բայց այդ պահին քամին յելավ և կտրած տեղից սյունը տապալվեց, Դավիթն ուրախացավ, քշեց Մըսրա Մելիքի բանակի վրա, բայց յերբ տեսավ նրա բանակի այդքան մեծությունը, ինքն իրեն ասաց. «Տե՛ր աստված, եսքանի դեմ վո՞նց կռվեմ, նրանք լինեն զարնան մատղաշ դառ, յես սոված գայլ—չեմ կարող նրանց խեղդել. եդ վրանները լինեն դեղեր, յես կրակ, չեմ կարող նրանց վառել։ Նրանք լինեն մոխիր, յես լինեմ քամի, չեմ կարող նրանց ցրել»։

Քուռկիկ Զալալին իմացավ Դավթի յերկմտություն, ասաց.

— Եյ անիրավ, ինչո՞ւ յես վախենում, ինչքան դու թրով կտրես, ենքան յես իմ շնչով կկտրեմ, ինչքան քո թուրը կտրի, ենքան եվ յես վոտքով կը ջարդեմ, Դավիթ մի յերկմտի, մենակ չլինի խաբվես, իմ քամակից իջնես:

Դավիթը սրտապնդվեց, առաջ գնաց ձին, բայց վոտքոշեց, վոր թշնամու դեմ պիտի գնա բաց ճակատով, դյուցազնորեն, ուստի և կանչեց.

«Եհե՛յ, ով քնած ե՝ արթուն կացեք,
Ով արթուն ե՝ ձիեր թամբեք,
Ով թամբել ե՝ զենքեր կապեք,
Ով կապել ե՝ յելեք, հեծեք,

Զասեք Դավիթ դող-դող յեկավ, դող-դող գնաց:

Ասաց ու ընկավ Մըսրա Մելիքի զորքի մեջ և կանչելով՝ «վազե քուռկիկ, վազե, կտրե, թրիկ, կըտրե», արյան հեղեղ հանեց ու դիակ դիակի եռևից գետին փռեց:

Բեռի Թորոսն եվ, վոր սարի գլխին եր, այդ տեսնելով, վոգեվորվեց, ինքն եվ սկսեց մյուս կողմից ջարդել:

Ցերը Դավիթը չատ մարդ կոտորեց, Մըսրա Մելիքի զորքի մեջից այն ալևոր մարդը, վոր յոթ տղա ուներ և յոթն եվ հոր հետ Մելիքը զոռով կռվի յեր բերել, առանց զենքի, գլխաբաց, զորքի մեջից իր համար ճամբա բանալով մոտեցավ, կանչեց Դավթի առաջ ու ասաց.

— Դավիթ, մեռնեմ քեզի, ականջ արա, ձիդ հանդարտեցրու, խոսք ունեմ քեզ ասելու:

— Ի՞նչ պիտի ասես, հալևոր:

— Դավի՛թ, ախր չե՞ վոր սրանք եվ մարդ են, յերեխաների ու կանանց տեր են. դրանց վոր սպանում ես չե՞ վոր դրանց յերեխաների մեղքը քո վիզն ե ընկնելու: Վորը մինուճար ե, վորը նորապսակ, վորը ոջախի միակ սյունը, տան ճրագը:

— Բա վոր եղպես ե, ինչի՞ յեն յեկել իմ յերկրի վրա կռիվ:

— Ախր մենք մեղք չունենք, Մելիքն ե բոլորիս զոռով հավաքել բերել, կռիվ ունե՛ս, գնա իր հետ արա:

— Ապա ցույց տվեք, ո՞ւր ե Մելիքը:

Հալևորը ցույց տվեց Մելիքի վրանը և Դավիթը ձին քշեց այն կողմը: Մելիքը վրանի մեջ քնած եր: Իսմիլ խաթունն եվ նստած եր նրա գլխավերև:

Դավիթը յերկու ծառաների վրա գոռաց.

— Վեր հանեք ձեր աղային, թող դուրս գա:

— Մենք չենք կարող զարթեցնել,— ասին ծառաները,— նա յոթ որ պետք ե քնի, յերեք որ ե անցել, դեռ չորսն եվ կա:

— Բնել-բան չեմ հասկանում, զարթեցրեք, թե քնել կուզի, այնպես քնեցնեմ, վոր եվ չզարթնի:

Ստիպված չամփուր կարմրացրին, դրին Մելիքի վոտքերի տակ, Մելիքը կարծեց լու յե կծում, չուռ յեկավ մյուս կողքին: Բերին դուխանի խոփ կարմրացրին, դրին վոտների տակ:

— Ոֆ,—ասաց Մելիքը, ինչքա՛ն լու կա,—ու ելի չուռ յեկավ մյուս կողքին:

Դավիթը չհամբերեց ու նիզակը քաշելով դարկեց Մելիքի կրունկին, կրունկը ծակեց և ապա ասաց.

— Մելիք, բավ է քնես:

— Ոֆ, ոֆ,—ասաց Մելիքը,—չթողիք հանդստանամ ու նստեց տեղի մեջ, աչքերը սրբեց ու նայեց տեսավ Դավիթը կանգնած, ձին էլ արյան մեջ կորած: Մի անդամ փչեց, վոր տեղից թռցնի, բայց Դավիթն անշարժ մնաց. Մելիքի սիրտըն ահ առավ և դիմեց խորամանկության:

— Սատանան տանի քեզ, թլոր Դավիթ, եղ յե՞բր դու դարձար ձիավոր, դե ձիուց ցած իջի, ուտենք, խմենք, նոր կռիվն սկսենք:

— Չե՛, չեմ իջնի, դուրս արի կռվենք...

Այն ժամանակ Իսմիլ Խաթուն առաջ յեկավ, ասաց.

— Դավիթ, ճամբա ես յեկել, հոգնել ես, դու էլ իմ տղեն ես, ձիուց իջի, հանդստացի նոր կանենք կռիվը:

Իսմիլը, վոր շատ խնդրեց, Դավիթն ուզեց ձիուց իջնել, բայց ձին փախավ չեր ուզում, վոր Դավիթն իջնի, բայց վերջը Դավիթն համոզվեց, ձիուց իջավ, իսկ Քուռկիկ Զալալին խռովեց, փախավ գնաց սարը:

Մելիքը մի հոր եր փորել, վրան խալիչայով ծածկել, Դավիթը վրանը մտավ թե չէ, վուտքը կոխեց խալիչային ու ընկավ հորը, հորի մեջ Մելիքը յերկաթե ցանց եր դրել, Դավիթն ընկավ այդ ցանցի մեջ ու չկարողացավ դուրս գալ: Մելիքը բերեց ջաղացի քարեր, շարեց հորի բերանն ու ասաց.

— Հա՛յ-հա՛յ, թլոր Դավիթ Սասունից յեկ՝ լինա՞ հետ կուզե կռիվ անել, դե թող գնա հորը մինչև վոսկորները փթթեն:

Ու Մելիքը նորից պառկեց, վոր կիսատ թողած քունը լրացնի:

Նույն այդ գիշեր Զենով Ոհանը յերազ տեսավ, վոր Մըսրա աստղը չող կուտար, Սասնա աստղը կիսավարեր. Ոհանն անհանգստացավ, կնոջը՝ Սառային այդ մասին պատմեց, բայց կինը բանի տեղ չդրեց. նորից Ոհանը յերազ տեսավ Մըսրա աստղը շատ եր պայծառացել, Սասնա աստղը հանդչելու վրա յեր: Նորից զարթնեց, բայց այս անդամ էլ կինը չթողեց վեր կենա: Ցերրորդ անդամ Ոհանը տեսավ, վոր Մըսրա աստղը յեկավ Սասնա աստղը կուլ տվավ. Ոհանը ըղձացած ասավ.

— Կնի՛կ, վեր, Դավթին սպանեցին:

— Ինչի՞ չես քնի, ա՛յ մարդ, ո՞վ գիտի Դավիթն հիմի վոր կնկա ծոցն է պառկել, քեֆ կանի:

Ոհանը բարկացավ, կնոջը մի քացի տվեց, յելավ գնաց դոմը: Սպիտակ ու կարմիր ձիուն փորձեց, տեսավ՝ նրանք չեն կարող իրեն շուտ տեղ հասցնել, սև ձին հեծավ ու շտապեց, հասավ Լոռա սարի դլուխ: Տեսավ Քուռկիկ Զալալին անտեր անտիրական է մնացել ու խրինջալով իր մոտ յեկավ: Ոհանը տրտմեց. յենթադրեց, թե Դավիթն արդեն սպանված է, բայց վորոշեց կանչել.

Դավի՛թ, ո՞ւր ես, հիշիր Մարութա բարձր Աստվածածին, հիշիր Խաչ Պատերազմին, վոր քո աջ թևի վրա է ու թաթի տուր քեզ:

Ոհանի ահեղ ձայնը գնաց հասավ Դավիթին։ Հիշեց Աստվածածին, Խաչ Պատերազմին, վոր իր աջ թևին եր, իրեն ուժդին թափահարեց, յերկաթե ողերն ու շղթաները քանդվեցին ու Դավիթն ազատվելով թռավ յելավ կանգնեց հորի բերան ու դիմելով Մելիքին, ասաց.

— Մըսրա Մելի՛ք, եկ քո վոչ մի խորամանկությունը չի անցնի, առավոտը պիտի կռվենք։

Դավիթն այնուհետև գնաց սարը հորեղբոր մոտ, բայց Քուռկիկ Ջալալին խռովել եր, չեր մոտենում Դավիթին։ Շոյելով, համոզելով վերջը հաշտվեց ձիու հետ, թռավ նստավ մեջքին ու պատրաստվեց վաղվա կռվին։

Հայրենիքի ազատության կարոտով վառված, անհուն առելությամբ լցված դեպի նենգ թշնամին, Դավիթն այլևս Մելիքի վոչ մի խոսքին չհավատաց և խոսեց միայն կռվի պայմանների մասին։ Մելիքը չըհամաձայնեց միմյանց դեմ դուրս գալ մենամարտի։

Վորոշեցին, վոր հերթով զարկեն. ամեն մեկը պետք է զարկեր յերեք անգամ։ Առաջին զարկողը պետք է Մըսրա Մելիքն լիներ։ Դավիթն համաձայնեց։

Մըսրա Մելիքը հեծավ իր ձին, դուրսն առավ ու քշեց գնաց յերեք որվա ճամբա, մինչև Ֆարկեն ու են տեղից թափով յեկավ զարկեց Դավիթին։ Նրա զարկից գետինն այնպես քանդվեց, կարծես քառասուն լուծ գոմեշով վար եյին արել, հող ու փոշին բըռնեց ամեն կողմ։

— Ե՛ Դավիթ, հող եյիր, հող դարձար,— ասաց Մելիքը։

— Կենդանի յեմ, մեկ ել արի,—գոռաց Դավիթը։

—Ախոռս, մոտիկ տեղից եմ յեկել,— ասաց Մելիքը,— գուրգես թափը թույլ եր։ Ու այս անգամ քշեց գնաց մինչև Դիարբեքիր և ենտեղից ավելի ուժեղ թափով յեկավ ու գուրզը նետեց Դավթի վրա։

Գետինն այս անգամ այնպես քանդվեց, կարծես հեղեղներն եյին ավերել, բարձրացած փոշուց արեգակը ծածկվեց յերեք որ, յերեք գիշեր։

—Դավիթ, հող եյիր, նորից քեզ հող դարձուցի,— ասաց Մելիքը։

— Կենդանի՛ յեմ։ Արի՛, վերջին զարկդ ել զարկ,— վորոտաց Դավիթը։

— Ախո՜ռ ելի մոտիկ տեղից յեկա, ձիուս ասպարեզը քիչ եր, գուրգես թափը կոտրվեց,— ասաց Մելիքն ու այս անգամ ձին քշեց, հասավ մինչև Մըսրը ու ենտեղից յեկավ զարկեց Դավթին։ Թվաց թե զարնան ամպն ե գոռում, կամ յերկրաշարժ յեղավ, այնքան ահեղ եր Մելիքի թափը։ Նորից փոշին արեգակը ծածկեց, այդպես մնաց յերեք որ, Մելիքն հրճվանքով ասաց.

— Այս անգամ Դավիթը մեռավ, հող եր, հող դարձրի։

Բայց յերբ փոշին իջավ, Դավիթը հսկայի նման վոտքի, անվնաս, ի սարսափ Մելիքի կանգնեց ու ասաց.

— Քո զարկերը վերջացան, հերթը հիմա իմն ե։

— Ե՛հ,—ասաց Մելիքը,—թող մե՛կել գնամ դամ զարկեմ։

— Չե՛, չե, ո՞ւր յերթաս, յերեք անգամ զարկիր, միշտ հո չի կարելի զոռ բանեցնել, պայման ենք կնքել, հերթն իմն է։

Այն ժամանակ Իսմիլ Խաթունն առաջ յեկավ ասաց.

— Դավիթ, Մելիքը քո յեղբայրն է ապերախտություն չանես։

— Ինչ ապերախտություն պիտի անեմ, յերեք անգամ նա է զարկել, յերեք անգամ ել յես կը զարկեմ։

Այդ ժամանակ Մելիքը Դավթից յոթ ժամ ժամանակ խնդրեց, վոր ինքն իր պատրաստությունը տեսնի։

— Լավ,—ասավ վեհանձնորեն Դավիթը,— գնա՝ պատրաստվիր, ես ել ասա՛, դուրզով զարկե՞մ թե թրով։

Մելիքը նայեց դուրզին ու թրին՝ մտածեց, վոր դուրզը շատ ավելի ահեղ ու սարսափելի յեր, ասաց.

— Թրով զարկի։

Մելիքը սարսափն ի սիրտ վրան մտավ, խորհրդակցեց մոր հետ, թե ինչպես անի, վոր Դավթի զարկից չվնասվի։

Շատ մտածեց, վերջը մտավ հորը, քառասուն գոմշի կաշի քաշեց վրան, քառասուն ջաղացի քար դրին հորի բերանին վրան ել վերմակ փռեցին։ Մելիքն մտածեց, թե Դավիթը կը կարծի թե նա վերմակի տակն է, մայրն ել ենտեղ կանգնած է, այլևս չի ստուգի, թե նա վորտեղ է թաքնված։

Դավիթն այդ պահին Բուռկիկ Զալալու մեջքին

բարձրացել եր Ծովասար։ Մի կողմից նրա հայրենիքն եր, մյուս կողմից Թշնամու զորքն ու վրանները։ Պետք եր ժամ առաջ վերջացներ այդ պատերազմի չար հեղինակին՝ Մելիքին, ուստի նա վրեժով լցված քաշեց Թուր Կայծակին ու հասավ Մելիքի վրանին, բայց հենց այդ րոպեին Իսմիլ խաթունը կուրծքը բացեց Դավթի առաջ, ասաց.

— Դավիթ, ես կրծքով կաթ եմ ավել քեզ ու Մելիքին, իմ կաթի խաթրու եղ զարկն ինձ բաշխի։

— Այ մեր, ինչի մինչև հիմա քանի Մելիքն եր զարկում, չեյիր ասում, վոր նա մի զարկ բաշխի։

Ասաց, բայց վեհանձնորեն կանգ առավ, թուրը բարձրացրեց, դրեց իր ճակատին՝ համբուրեց՝ ասաց.

— Ես մեկ զարկը, ա՛յ մեր, քեզ բաշխեցի։

Գնաց Դավիթը, թափով հետ յեկավ և այն է՝ պիտի զարկեր, այս անգամ Մելիքի քույրն առաջ յեկավ, ասաց.

— Դավիթ, դու վոր փոքր եյիր, յես քեզ շատ եմ գրկել ու խաղացրել, եղ մեկ զարկն ել ինձ բաշխի։

Դավիթը թուրը շարժեց, դրեց իր ճակատին, համբուրեց, ասաց.

— Լավ, քույրիկ, եղ մեկ զարկն ել բաշխում եմ քո քուրության խաթեր։ Մնաց մեկ զարկ, մեկ աստված, մեկ յես, կամ կսպանեմ, կամ թշնամիս ելի պիտի ապրի։

Դավիթը դարձավ գնաց, վոր գա իր վերջին զարկը զարկի։ Այդ ժամանակ Իսմիլ Խաթունը մտա-

ծեց, վոր էլ Դավիթը զարկ չի բաշխի, ուրեմն ուրիշ բան պիտի անել, նա կանչեց իր հետ յեկած կանանց ու աղջիկներին, փողեր զարկել տվեց ու աղջիկները սկսեցին նազանքներով պարել վրանի շուրջը, Իսմիլը մտածում եր, վոր Դավիթը աղապ, անփորձ տղա յե, կտեսնի աղջիկներին, կը տարվի նրանց հմայքով ու զարկը կթուլանա:

Դավիթը հեռվից նկատելով պարող աղջիկներին, հասկացավ, վոր այդ ամենը իր զարկը թուլացնելու համար է, բայց նրա մեջ հայրենիքն ազատելու դյուցազնական ձգտումը հաղթահարեց ամեն ինչ, դա հիշելով Մարութա բարձր Ասավածածինը, իր Թեւի Խաչ Պատերազմինը. յեկավ ու թուր կայծակով զարկեց: Թուրը կտրեց քառասուն ջաղացի քարը, կտրեց քառասուն դոմշի կաշին, կտրեց հրեշ Մըսրա Մելիքին ու դեռ յոթ զաղ էլ դենը գնաց:

— Եստեղ եմ,—կանչեց Մելիքը,—մե՛կ էլ զարկի:

Դավիթը զարմացավ. նա իր թրի, իր զարկի թափը գիտեր, ուստի ասավ.

— Մելիք, դեռ մի թափ տուր քեզ:

Մելիքը թափ տվեց իրեն և յերկու կտոր յեղած՝ ընկավ այս ու այն կողմ:

Դավիթն այն ժամանակ գնաց վրանը և ասաց.

— Մարե, վերմակը բացեք, տեսնեմ Մելիքին:

Ձե՛, դու գնա, մենք կը բացենք,— ասաց Իսմիլը:

Դավիթը չհամաձայնեց, յեկավ ինքը վերմակը բացեց և ի՞նչ տեսնի: Բայց վոչինչ չասեց. վերցրեց կես յեղած ջաղացի քարերն ու դոմշի կաշիները մի կողմ շպրտեց:

Մելիքի մայրն ընկավ հորի վրա, կանչեց.

— Մելի՛ք, Մելի՛ք:

Բայց Մելիքը ձայն չտվեց: Քիչ հետո հանեցին Մելիքի յերկու կտոր յեղած մարմինը: Ցեվ մայր ու քույր նստան ու վողբացին մեռած Մելիքի վրա: Ցեվ յերբ Իսմիլը իրեն դատավ, դարձավ Դավթին, ասաց.

— Դավիթ, դու սպանեցիր իմ տղային. ի՞նչ անենք, կռիվ եր, կռվի որենքն եդ է: Բայց յես քեզ իմ տղան եմ համարել, մեկ տարի իմ կաթն ես կերել, արի ամուսնացիր Մելիքի կնոջ հետ ու Մըսրին թագավոր դարձիր: Իսկ Սասունը խո քոնն է ու քոնը:

Դավիթը պատասխանեց.

— Ցես գոհ եմ իմ ունեցածով, իմ հարազատ յերկրով, ուրիշի հողը, զոռով զավթած հողը, ինձ պետք չէ. յես իմ մորից անարատ եմ ծնվել, յես փրկեցի յերկիրը, ինձ այլևս ուրիշ բան պետք չէ. կուզե՞ս, արի քեզ տանեմ Սասուն, իմ մոր նման, դլխիս վրա պահեմ:

— Ձե,—ասաց Իսմիլը,— յես Սասուն չեմ գա, յես Մըսրցի եմ, Մսրը կուզեմ մնալ:

— Դե վոր այդպես է, ինձ Մըսրի մեկ չոփն էլ հարկավոր չէ, դարձիր Մսրը, իշխիր ու կառավարիր, յես քեզ, քո իշխանությանը ձեռք չեմ տա:

Ապա Դավիթը գնաց, շրջեց առանց զորավարի մնացած Մըսրա զորքի մեջ, հրաման տվեց, բոլորին իր շուրջը կանչեց ու ասաց.

— Դուք աշխատավոր մարդիկ եք, ձեզ զոռով

բերել են մեր դեմ կռվի։ Մենք ել աշխատավոր մարդիկ ենք, մենք ձեր դեմ թշնամություն չունենք։ Մի՛ք վախենա, ձեզնից վոչ մեկին ինձնից վնաս չի հասնի։ Դնացեք ձեր յերկիր, դնացեք ձեր վար ու ցանքին, դնացեք ձեր տուն տեղի վրա ու իմ հորն ու մորն ել ողորմի տվեք։ Բայց լավ իմացե՛ք, մեկ ել չխաբվեք ու չդաք Սասունի վրա։ Թե մեկ ել դենք եք առել ու յեկել, քառասուն դաղ հորի մեջ ել լինեք, քառասուն ջրաղացի քարի տակ ել թաղնվեք, ելի Սասնա Դավիթը իր Թուր Կայծակով կելնի ձեր դեմ։ Ով մեր հողին վոտ կդնի իբրև թշնամի, մենք նրա հետ իբրև թշնամու ել կվարվենք։ Ով կդա իբրև բարեկամ՝ մեր գլխուն, մեր յերեսին թող դա։

Զորքը, վոր դեռ դժվար եր հավատում, թե Մելիքը սպանվել է, լսելով Դավթի հաղթական խոսքերը, համոզվեց այդ բանում, բոլորը միաբերան որհնեցին Դավթին, գովեցին նրա մեծահոգությունը ու դնացին աշխարհի չորս կողմը և պատմեցին Դավթի քաջության ու վեհանձնության մասին։

Ցերբ Քեռի Թորոսը իմացավ, վոր Դավիթը Մելիքին սպանել է, ինքը նույնպես կռվից հետ դարձավ, վոչ մի ավար չվերցրեց, մենակ դնաց Մելիքի ականջը կտրեց, անցկացրեց նիզակի ծայրին ու բերեց տվեց Վախկոտ Վերդոյին նվեր։

Սասնա ժողովուրդը, ինչպես նաև Զենով-Ոհանը և մյուս իշխանները, սարսափի մեջ եյին և ամեն պահ սպասում եյին, թե ուր վոր է Դավիթի սպանության դուժը կլսեն։ Բայց յերբ լրաբերները հաղորդեցին, վոր Դավիթը հաղթական հետ է դառնում, վոր թշնամին ջարդված, ծեծված թողել է Սասունը՝ ամբողջ Սասունը տոնական կերպարանք առավ, բոլորը՝ կին աղջիկ, յերեխա, ծեր, ջահել, ինչ վոր ունեյին պահած, հանեցին, զուգվեցին, զարդարվեցին, յերգերով ու պարերով դնացին Դավթին դիմավորելու։

Մի կողմից ժողովուրդն եր դնում, մի կողմից հաղթական Դավիթն եր դալիս։

— Եդ ինչո՞ւ եդքան կին է դալիս,— հարցրեց Դավիթը։

— Դալիս են քո արևը խնդան Դավիթ,—պատասխանեց Ոհանը,— մինչև հիմա բոլորը սուգ ու չիվանի մեջ եյին, վախենում եյին, թե Մելիքը կդա բոլորին կը կոտորի կամ գերի կտանի։ Հիմա դու նրանց աղատողն ես, քու արևով է կը խնդան։

— Դավիթն առաջ անցավ ու դիմելով ժողովրդին, ասաց։

— Դե դարձեք ամենքդ ձեր տուն տեղին, ձեր հալալ աշխատանքին։

Զենով Ոհանը Դավթի ճակատը համբուրեց, տարավ Մհերի մինչ այդ փակ մնացած սենյակը բացեց ու Դավթին առոք-փառոք տեղավորելով այնտեղ, ասաց։

— Դու քո հոր հալալ վորդին ես։ Դու Սասնա ճրագ նորից վառեցիր, ամեն ինչ քեզ հալալ է։

Դավիթը շատ ուրախացավ, պառավին կանչեց մոտը և գոհունակություն հայտնեց նրան իր տված խորհուրդների համար և ասաց, վոր իրեն մայր լինի։ պառավը ասաց։

— Ցեռ յեղել եմ ու կլինեմ քո մերը: Ցեռ կերթամ իմ տուն, իսկ ինչ բան քեզ պետք լինի կկամ կասեմ: Վոչ մի բանից մի վախենա, ծլիր ծաղկիր, արդար գործի համար բաղուկդ միշտ զալար մնա:

Ցեվ յոթն որ, յոթ գիշեր Սասունը խնդաց և ուրախացավ իր ազատության համար:

VI

Մըսրա Մելիքին հաղթելուց հետո Դավթի համբավը տարածվեց յերկրի չորս կողմը: Նա արդեն 20 տարեկան տղամարդ եր: Առույգ, կայտառ, այնպիսի աչքեր ուներ, դեմքի այնպիսի արտահայտություն, վոր ամեն տեսնող հենց առաջին րոպեյից խելքահան եր լինում:

Մեկ որ Դավիթը քնած եր իր սենյակում. դուռը ծեծեցին Դավիթը մոտեցավ դռանը, հարցրեց.

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում:

Քո հորեղբոր կին սառեն եմ,— լսվեց դրսից:

Դավիթը դուռը բացեց, նեռս մտավ Սառեն, նա հագել եր իր ամենալավ զգեստները. թարթիչներին սև ներկ եր քսել և հրապուրիչ տեսք ընդունելով, նա Դավիթի համար բերել եր մեղր ու կարագ, խաշած հավ և յոթ տարվա նռան գինի: Նա նստեց Դավթի կողքին ու ասաց.

— Դավի՛թ, յես շատ վաղուց քո կարոտն եյի քաշում. չեմ կարողացել շատ բան սարքել քեզ համար, ինչ բերել եմ հսոր դրանով զոհացիր:

Ապա հացն ու գինին դրեց. Դավիթը կերավ, խմեց ու մտածեց. «Ի՞նչ լավ է, յես մեր չունեմ. սա ինձ մերություն կանե». Սառեն ասաց.

— Դավիթ, քեզ մատաղ, Սասնա մեջ քեզ պես կարիճ վոչ յեղել է, վոչ կլինի, քեզ ամեն ինչ հալալ է:

Դավիթը վոգեվորվեց ենքան խմեց յոթը տարվա գինին, վոր գլուխը բռնեց ու ընկավ քնեց:

Հենց վոր Դավիթը քնեց Սառեն մոտեցավ համբուրեց Դավթին, սիրեց, գուրգուրեց, բայց նռան գինին ենպես եր բռնել Դավթին, վոր սա բան չիմացավ: Սառեն մի քանի որ այսպես արեց, հետո մտածեց, ավելի լավ է թույլ, մեկ տարվա գինի տանեմ, վոր Դավթի վրա շատ չազդի, չքնի, թե չի ես ինչ է, յես նրանից բան չեմ հասկանում:

Մյուս որը Դավիթը կերավ Սառեյի բերածը, բայց գինին, վոր խմեց այլևս նրան չբռնեց, չքնեց: Այդ ժամանակ Սառեն դնաց նստեց Դավթի ծնկին ձեռը դցեց, վոր Դավիթը գլուխը մոտեցնի իրեն համբուրի: Դավիթը շատ նեղացավ և Սառեյին հեռացնելով իրենից, ասաց.

Ախր դու իմ մոր տեղն ես. եդ ի՞նչ ես անում. յեկել ես նստի՛, մոր ու տղի պես զրույց անենք:

— Դավիթ ինչ մեր, ինչ բան, յես ոտար աղջիկ եմ, յեկել ամուսնացել եմ քո հորեղբոր հետ:

— Իմ մերն ու հորեղբոր կինը մեկ են ինձ համար, դուն էլ իմ մոր պես լուսն-արեգակն ես ինձ համար ու յես չեմ կարող դիպչել քեզ:

— Ախր Դավիթ, յես ոտար եմ, ոտա՛ր, ենքան ժամանակ քո հորեղբոր ձեռքին եյի, հիմա նրան չեմ ուզում, քե՛զ եմ ուզում:

Դավիթը կատաղեց, ինքն իրեն մտածեց,— «Թե

վեր կենամ սրան սպանեմ, հորեղբայրս Եվի պիտի ասի թե յես ծռություն եմ անում, չսպանեմ ես կինն ինձ հանդիստ չի տա, ի՞նչ անեմ»։ Մտածեց մի կերպ խաբել այդ որը ճամբու դնել Սառեյին, ուստի ասաց.

Վեր կաց հիմի գնա, յես ուզում եմ քնել, կը մտածեմ, քեզ վաղը իմ ասելիքը կասեմ։

Այդ որը մի կերպ ազատվելով Սառեյից, մյուս առավոտ շուտ Դավիթը գնաց աղբյուրի մոտ լվացվեց, տեսավ պառավը դալիս է, Դավիթը նրան իր մոտ կանչեց և Սառեյի վարմունքը մանրամասն պատմեց։

— Պառավ,— ավելացրեց Դավիթը,— դու իմ մայրն ես, ես բոլորը քեզ կասեմ, վոր ինձ խելք սովորացնես։

— Դավի՛թ,— խոսեց պառավը,— յես Սառեյին չեմ մեղադրում։ Դու արդեն քսան տարեկան տղա ես ու ազատ ես մնացել, ով քեզ տեսնում է խելքը թռցնում է, հենց կուզի, վոր դու նրան մարդ դառնաս։

— Եհե՛, հապա, ի՞նչ անեմ։

— Պետք է ամուսնանաս, վոր քեզ հանդիստ թողնեն դու յել տան ու տեղի տեր լինես։

Այդ ժամանակ Զենով Ոհանը մտածեց, վոր Դավթին ամուսնացնելու ժամանակն է, գնաց Զմշկիկ Սուլթանի մոտ խնամախոս, նշանեցին Դավթի վրա Դավիթն ու Զմշկիկ-Սուլթանը մատանիները փոխանակեցին։

Բայց Դավթի համբավը շատ հեռու յեր գնացել։

Կապուտկողի թագավոր Վաչո-Մարջոյի աղջիկը, վոր 40 ուզողներ ուներ, վոչ մեկին չեր հավանում. լսելով Դավթի մասին, նա ուզում եր, վոր Դավիթը լինի իր փեսացուն։ Ուստի վոչ մի միջոց չզլանելով Դավթին տեսնելու, նա կանչեց իր յերկրի լավագույն դուսաններին և նրանց պատվեր տվեց գնալ Դավթի մոտ իր դովքն անելու։

Ցեվ մի որ եկ յերբ Դավիթը Ավազ սարից վորս արած վերադառնում եր Սասուն, կամուրջի մոտ հանդիպեց դուսանների, վորոնք չփոթված, ջարդված սազերով կանգնել եյին այնտեղ։

— Դուք ի՞նչ մարդ եք, ի՞նչ է պատահել, ի՞նչու եք այդպես տխուր, հուսահատ,— հարցրեց Դավիթը նրանց։

Դուսաններից մեկը պատմեց, վոր իրենք քիչ առաջ մտան Սասուն հարցրին Դավթին, մեկն ասաց, թե ինքը Դավիթն է, (Դավիթը իմացավ, վոր այդ Քեռի Թորոսը յեղած կլիներ) և մենք նրան Խանդութ-Խանումի դովքն արինք. յերբ դուրս յեկանք Սասնա ծուռ յերեխաները հարձակվեցին մեզ վրա, մեր սազերը ջարդեցին, չհասկացանք ինչ բան եր։

Բանից դուրս է գալիս, Քեռի Թորոսը նրանց վռնդել եր, վոր նրանք Դավթի մոտ Խանդութ-Խաթունի դովքը չանեն և Դավթի սիրտը չչփոթեն։ Դավիթը դիմեց դուսաններին.

— Դուսանն ե՛ր, իսկական Դավիթը յես եմ, են վոր ասել է Դավիթն եմ, նա իմ հորյեղբայրն է յեղել։ Առեք ես փողեր, գնացեք ձեր սազերը կարգի դցեք ու յեկեք ինձ Խանդութ-Խաթունի դովքն արեք։

Գուսանները Դավթի արևն որհնելով դնացին վոսկե սիմեր դնեցին, իրենց սաղերը սարքեցին ու առաջ սպիտակամորուս գուսանը, ապա թխմուրուսը, վերջում յերիտասարդ գուսանը յերդեցին.

Ու եսպես եր նրանց յերգը.

Խանդութ Խաթունի ձեռ-վոտ կալամով քաշած է,
Ախ կալամով քաշած է,
Նրա յեղունդներ ռանդայով տաշած է,
Ախ ռանդայով տաշած է,
Բոյն ու բուսը Բաղդադու արմավինի է
Ախ Բաղդադու արմավինի է,
Աչքեր չինու կթխա է
Խանդութ Խաթունի աչքեր չինու կթխա է,
Ճակտի լենքն էլ թիզ ու կես է,
Ախ թիզ ու կես է,
Աչքեր չինու կթխա է,
Ախ կամար է,
Ցերեսի կարմրութեն նռան գինի է,
Ախ, նռան գինի է,
Ենոր ճերմակութեն կիզած բամբակ է,
Ախ կիզած բամբակ է,
Ծծերը ծոցի մեջ, քանց Հալաբա շաքար քաղցր է,
Ախ քաղցր է:

Նրանք ելի ու ելի գովեցին Խանդութ-Խաթունի գեղեցկությունը, հպարտությունը, արիությունը, թովչանքը: Դավիթն այնքան տարվեց Խանդութ-Խաթունի հրապույրով, այնպիսի կարոտով նրա մեջ զարթնեց սերը, վոր ինքն էլ սաղը ձեռքին առավ, լարեց ու յերգեց.

Գուսաններ Դուք բարով յեկաք,
Իմ սիրտը քանց կաթն անարատ եր,
Դուք մերան գցիք մակարդեցիք:
Իմ սիրտը քանց Սասնա բերդն ամուր եր,
Դուք նրա հիմքը քանդեցիք:
Իմ սիրտը քանց աշունքվա դետ գուլալ եր,
Գարնան սելավի նման պղտորեցիք,
Գուսաններ, դուք ինձ հալիք, մաշեցիք,
Ձեր Խանդութ-Խանումին ինձի՛ քաշեցիք:

Ցերը յերգն ավարտեց դիմեց գուսաններին.

— Վո՞րտեղ է ապրում ձեր Խանդութ Խանումը:

Գուսանները պատմեցին թե վորտեղ է ապրում Խանդութը և Դավիթն ասաց, վոր վեց որվա վրա կերթա Խանդութ-Խանումին տեսության ու առատ վարձատրեց գուսաններին:

Դավիթը տուն դնաց և հորեղբորն հայտնեց, վոր ինքը Զմշկիկ Սուլթանին չի առնի, կերթա Խանդութ-Խանումին բերելու: Ոհանն ասաց, վոր Խանդութ Խանումին դժվար է բերել, քանի վոր 40 փայլեվաններ նրա սիրով վառված նրա տան տակ սպասում են, բայց նա վոչ մեկին բանի տեղ չի դնում և ավելացրեց,—յեթե Խանդութ-Խանումը նրան նշան տա սպասի, թե չէ հետ դառնա դա:

Դավիթն իր խոստումի համաձայն վեց որից հետո հեծավ Քուռկիկ Ջալալին ու 20 որվա ճամբան մեկ որվա մեջ անցավ հասավ Ճաժվան. այստեղ դութանավորներ տեսավ, ոգնեց նրանց վար ու ցանքն անելու նրանց որհնությունն առավ ու ճամբա ընկավ:

Ցերբ Դավիթն անցնում եր Զմշկիկ Սուլթանի լու-

սամուտի տակով. Զմշկիկ-Սուլթանը նրա առաջ յեկավ ասաց.

— Դավիթ ես որ ինձի հյուր արի:

— Ձե՛,—ասաց Դավիթը,—ինձ ճամբից հետ մի դցի:

— Ցես գիտեմ դու Խանդութ-Խանումի համար կերթաս, բայց նա իմ ճկուտը չարժի:

Ցեվ Զմշկիկը Դավթի հետ խոսեց շատ սիրալիր, վերջը տարավ իր տուն. կերան խմեցին ու դիշերը Դավիթն ու Զմշկիկը մեկտեղ քնեցին:

Առավոտ Դավիթը շատ ղղջաց ու ինքն իրեն ասաց,—«Ես ի՞նչ գործ եր յես բռնեցի, պիտի մեր ազգը չխաբվեր, յես ինչո՞ւ ես կնդանից խաբվեցի»—Ցեվ յելավ ձին հեծավ գնաց:

Զմշկիկ-Սուլթանը բարկացած ասավ.

— Դու կաց, յեկար ինձի խաբեցիր՞. լա՛վ,— և նա Դավթին թշնամացավ:

Վեց որը լրանալուն պես Խանդութ-Խաթունը լուսամուտում սպասում եր Դավթին: Տեսնելով, որ Դավիթը գալիս է նա շատ ուրախացավ և մի խնձոր դցեց Դավթին: Դավիթը խնձորը բռնեց և նայելով Խանդութին տեսավ որ նա շատ ավելի դեղեցիկ է քան նկարագրել եյին գուսանները: Դավիթը ձին արագ քշեց տեսավ մի մարդ դուրզը ձեռքին կանգնած է դռան յետև. Դավիթն հարցրեց.

— Քո անունն ի՞նչ է:

— Իմ անուն Գորգիզ է:

— Ցես եվ Սասնա Դավիթն եմ,—ասաց ու Գորգիզի ձեռքից դուրզը վերցրեց դեն շպրտեց:

— Ինչո՞ւ յես յեկել Դավիթ,—հարցրեց Գորգիզը:

— Խանդութ Խաթունի համար եմ յեկել, ի՞նչպես տեսնեմ նրան:

— Ուրբաթ է ուրբաթ, նա գալիս է իր այգին զբոսանքի, եսոր ուրբաթ է կերթաս ենտեղ կտեսնես, բայց վոր հաջողվեց Խանդութին առար, յես քեզ քավոր կը լինեմ:

— Շատ լավ,— ասաց Դավիթը,—կը լիններ սանահեր Դավիթ, քավոր Գորգիզ:

Դավիթը ձին քշեց գնաց Խանդութ Խաթունի այգին, ձին թողեց վարդ-ռեհաններ ուտի, ինքը պառկեց քնի-հանգստանա: Այդ բանը Խանդութին դուր չեկավ, նա ծառաներին պատվիրեց վոր հաց տանեն տան Դավթին ուտի վեր կենա գնա: Ցերը ծառաները հացը տվին Դավթին կերավ, ասին.

— Մեր Խանդութ-Խաթունն ասում է, թող վեր կենա գնա, ո՞վ է նրան թույլ տվել ձին կապի իմ այգում, իմ այգու վարդ-ռեհանն ուտի, տրորի, ի՞նչ է իր հոր մարդազետնի՞ն է, ոձն իր պորտով, հավքն իր թևով իմ այգին չի իջել, ինքը քանի դլուխ ունի, վոր ձին թողել է արածելու, թող վեր կենա գնա, ասիրս է, թե չե փայլեվաններ կդան իր մեծ կտորն ականջը կը թողնեն:

Դավիթն ել բարկացավ, ասաց.

— Ինչո՞ւ եդ բանն հաց ուտելուց հետո ասիք. չե՛մ գնում. յես նպատակով եմ յեկել. ինչ կարող եք արեք:

Եվ յերբ ծառաները գնացին Դավիթը Խանդութի ձիապանին հարցրեց.

— Իմ ձին ո՞ւր կապեմ։

— Փայլեվանների ձիանների մոտ։

Դավիթը իր ձին թողեց ախոռը և ասաց,— թե դու իմ Քուռկիկ Ջալալի՛, են 40 ձիուն հաղթեցիր, իմ դործն էլ հաջող կերթա»։ Քուռկիկ Ջալալին էլ գնաց քառասուն ձիու առվույտն ու գարին վերցրեց ներանցից, կերավ կշտացավ։ Խանդութին իմաց տվին։

— Ձին իր հունարը ցույց տվեց, մնաց տերը։

Բայց մյուս քառասուն փայլեվանները կատաղել էյին, մանավանդ, վոր իրենք յոթը տարի ապարդյուն ոպասել էյին, իսկ Դավիթն յեկել եր թե չե Խանդութից խնձոր եր ստացել. նրանք խորհուրդ արին, վոր Դավթին հարբեցնեն, սպանեն։ Յերբ սեղան բացին, Դավիթն էլ նստեց փայլեվանների հետ կեր ու խումի։ Փայլեվաններն իրենց սրերը մերկացրել դրել էյին սուփրայի տակ, վոր հարմար պահին սպանեն Դավթին։ Բայց Գորգիզը, վորի հետ Դավիթն արդեն ախպերացել եր նախազգուշացրեց Դավթին, ասելով.

— Իմացի՛ր, սա հարսանիքի տուն չի, մահի տուն է. մի կարծիր թե քու ախպեր Գորգիզի հետ գնացել ես Վրաստուն, դու յեկել մտել ես վնաստուն ճանճն էլ դլխուդ վրայով անցնի զա՛րկ, մի խնայի։

Յերբ շատ կերան խմեցին, ուշ դիշերն ընկավ Դավիթը ծառային ասաց.

— Յե՛լ, ես սուփրեն վերցրու. մեղք է, կշտացել են հացերը վոտքի տակ են դցում։

Փայլեվանները չթողին սուփրեն վերցնի. ասին.

— Բոլորը դու կերար. մեզ թող նորից հաց բերի։

Նրանք չէյին ուզում սուփրեն վերցնել, վոր իրենց թրերը չերեվա։

Բայց յերբ Դավիթը ստիպեց ու սուփրեն վերցրին նա տեսավ, վոր ամեն փայլեվանի առաջ մի-մի մերկացրած թուր է դրած։

— Եդ ի՞նչ է ձեր առջև,— բարկացավ Դավիթը։

— Մեր թրերն են։

— Տվեք տեսնե՛մ,— այս ասելով Դավիթը թրերը բոլորը հավաքեց և արհամարական ավելացրեց,— սրանք լավ կանդրահան են, տանեմ տամ մեր սասնա աղջիկները բանջար հանեն։

Յեվ բոլորի թրերը միացրեց իրար, ծալմլեց ջարդեց ու դիմելով Գորգիզին, ասաց.

— Գորգիզ, տար լից իմ ձիու խուրջին տանեմ նալբանդ սարքեմ, մի մասն էլ տամ Սասնա աղջիկներին բանջար հանեն։

Փայլեվանները այս վոր տեսան սարսափահար փախան։

Այն ժամանակ Դավիթը դիմեց Գորգիզին.

— Բավոր Գորգի՛զ, արի՛ ներս, տունը մնաց մեզ, բակն հավերուն։

Խանդութ-Խաթունի սիրտն արդեն շատ-շատ եր կպել Դավթին, ուստի և նա Դավթին վերև հրավիրեց։

Դավիթը յերբ մտավ Խանդութի սենյակը, այնքան զրավվեց Խանդութի գեղեցկությամբ, վոր այլևս չհամբերեց, գնաց գրկեց Խանդութին ճակատն համբուրեց սիրտը չհովացավ, մեկ էլ յերեսն համբուրեց, ելի սիրտը չհովացավ, մեկ էլ ուզեց Խանդութի կուրծքը համբուրել, Խանդութը չթողեց և բռունցքով զարկեց Դավթի դեմքին բերանն արյունոտեց ու ասաց.

— Դու քո հոր կտրիճ տղան ես, յես էլ իմ հոր կտրիճ աղջիկն եմ: Դու մեկ անգամ ճակատս համբուրեցիր, են ճամբուն կրած քո նեղության փոխարեն, մյուս անգամ դեմքս համբուրեցիր,— են քո ջահելության համար քեզ հալալ: Ել կուրծքս ինչի՞ կուզեյիր համբուրել:

Դավիթը նեղացավ հեռացավ Խանդութի մոտից, գնաց Գորգիզին ասաց.

— Գորգիզ իմ ձին քաշի պիտի գնամ:

Ու յերբ Գորգիզը ձին բերեց Դավիթը ճամբա ընկավ, Խանդութ Խաթունը տեսավ, վոր իրոք Դավիթը նեղացել ու գնում է ընկավ նրա ձիու հետևից խնդրեց, աղաչեց, վոր հետ դառնա, Դավիթը բավական գնաց, լսելով Խանդութի աղաչանքը հետ դարձավ:

— Դարձիր Դավիթ, դարձիր հետ գանք, ինչի՞ եղպես չուտ նեղացար,—ասաց Խանդութը:

— Ախր յես Սասունից քեզ համար եսքան ճամբա կտրեցի յեկա, հապա դու ի՞նչ ասիր, վոր մեկ համբույրի համար եսպես զարկիր:

Այդտեղ հաշտվեցին և Դավիթը դարձավ Խանդութի մոտ:

Այդ ժամանակ Պարսիկ Շասուհ թագավորը և Ֆրանկի թագավորը միացած մի քանի ուրիշ թագավորների հետ յեկան Կապուտակող կռվի, յերկիրն հպատակեցնելու և Խանդութին փախցնելու համար:

Խանդութը թշնամու սուրհանդակներին պատվեց համբուրեց, վոր կռվի տեղիք չտա, բայց թշնամիները այդ բանի տեղ չդրին ու կռիվն սկսեցին:

Այն ժամանակ Խանդութը դիմեց իր ձեռքը խնդրող 40 փայլեվաններին, վոր իրեն ողնեն կռվելու թշնամու դեմ:

— Մենք կռիվ չենք գնա, ում հետ, վոր քեզ ես անում, թող նա գնա կռիվ,—ասին փայլեվանները:

Դավիթը պատրաստվեց գնալ Կապուտակողի թշնամիներին վոչնչացնելու, վերջին պահին, յերբ նա գնալու յեր, դիմեց Խանդութին ասաց.

— Ցեռ գնում եմ կռիվ, թե յերեք որեն հաղթական հետ չեկա, ուրեմն սպանված եմ, կուզաս սպանվածներու միջից իմ մարմինը կվերցնես կը բերես թաղես, իմ թեվին կա Խաչ Պատերազմին, նրանով ինձ կճանաչես:

Խանդութը Քուռկիկ Ջալալին դուրս քաշեց. Դավիթը նստեց ձիուն. Խանդութը Դավթին հաջողություն մաղթեց:

Դավիթը քշեց քուռկիկ Ջալալին հասավ թշնամու բանակը, տեսավ, զորքը վրան զարկել, քնել են,— պիտի զարթնեցնեմ, հետո կռվեմ,—ասաց Դավիթն ու նորից ձեն տվեց, վոր յելնեն ձի հեծնեն,

չասեն թե Դավիթը դող յեկավ, դող դնաց։

Ցերբ թշնամին կռվի պատրաստ եր Դավիթը կանչեց։

«Հիշեմ Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին Դավթի աջ թեվին,
Աջ յերթա, ձախ դառնա
Կտրելով զորք չթողնա»։

Ասեց ու քշեց թշնամու մեջ ջարդեց, վոչնչացրեց չատերին. Շապուհ արքան չրջապատված իր թիկնապահներով հարձակվեց Դավթի վրա, բայց Դավիթը Կայծակի Թրով նրա վիզը կտրեց։

Այդ ժամանակ թշնամիները տեսան, վոր, Դավթին հաղթել դժվար է Զենով-Ոհանի մոտ մարդ ուղարկեցին խոստացան յոթը քաղաք, վոր նա մի Սասունցի կտրիճ ուղարկի իրենց ոգնական։

Վախկոտ Վերդոյի տղան Պարոն Աստղիկը յեկավ Դավթի դեմ կռվելու։ Դավիթը նրա հետ չեր ցանկանում կռվել, քանի վոր իր բարեկամն եր։ Կռվի ժամանակ Դավիթը չեր ուզում վնասել Պարոն Աստղիկին, Աստղիկն էլ Դավթին չեր ճանաչում ու կռվում եր, նրա սրի փայլն ենպես ուժեղ եր, վոր հասնում եր Խանդութ-Խաթունի սենյակը։ Խանդութ-Խաթունն այդ փայլը տեսնելով, ասաց.

— Ես ինչ բան է. ամպ չի անձրև չի գա, դիշեր չի կայծակ չկա. ես ինչ չոդք է։

Ու յերբ տեսավ, վոր պարոն Աստղիկի թուրն է Դավթի դլխի վրա՝ ձեն վերցուց յերդեց.

Հորյեղբայր դու հաղար բարով յեկար,
Կրակ թափեցիր մեր Դավթի դլխին

Տունն ավերեցիր Խանդութ-Խաթունի։

Դավիթը բարկացավ նետով զարկեց Պարոն Աստղիկի ձիու փորին, նետը ծակեց ձիու փորը ու Պարոն Աստղիկի դլխով դուրս յեկավ։

Պարոն Աստղիկը ձիուց ընկավ, ասաց.

— Վախ ինձ խաբել են, միայն մեր ազդականը կարող եր ենպես զարկել։

— Ախ իմ աչքեր քոռանա,— ասաց Դավիթը,— ես ինչ դավեր կը սարքեն մեր թշնամիները, ազդական ազդականի դեմ կկռվեցնեն։

Ցավ իջավ ձիուց Պարոն Աստղիկի դլուխը դրեց իր ծնկին, վոր նա այդպես հոգին ավանդի։ Ենպես եր Սասունցոց սովորությունը ազդականն ազդականի ծնկան վրա պիտի մեռներ։

Ցերբ Պարոն Աստղիկը մեռավ, Դավթի ուշքը դնաց, թշնամիներն ուրախացան չրջապատեցին Դավթին կուզեին ապանել, բայց Քուռկիկ Ջալալին նրա չորս կողմն եր պտտվում և բոլոր մոտեցողներին ջարդեց, մոտ չթողեց, մինչև Դավիթը ուշքի յեկավ։

Դավիթը յելավ նորից ձին հեծավ, մնացած թշնամիներին էլ ջարդեց քշեց հասավ Ֆրենկի քաղաք, ժողովրդին ազատություն տվեց, մեծավորներին սպանեց, փոքրավորներին իշխան կարգեց ու ասաց.

— Իզուր տեղը ուրիշի յերկիր մեք դնա. կռիվ մեք անի, իսկ թե արդար կռիվ անեք, ինձ ոգնություն կանչեք։

— Մինչև մեռնելը մենք քո խոսքը կը հիշենք ու կը կատարենք, ասին Ֆրենկի բնակիչները:

Դավիթը տարված իր կռվով ուշացավ:

Խանդութ-Խաթունը կարծելով թե Դավթին սպանել են, ասաց.

— Գնամ Դավթի մարմինը գտնեմ, բերեմ թաղեմ:

Նա հագավ տղամարդու շորեր, հեծավ ձին, զրահավորվեց ու գնաց կռվի դաշտ, նա նիզակով բարձրացնում էր գիակները ու թեվերն էր նայում, թե վրան արդյոք չկա Խաչ Պատերազմին:

Այդ ժամանակ Դավիթը Բուռկիկ Ջալալին հեծած յեկավ: Խանդութ-Խաթունը, վոր յենթադրում էր, թե Դավիթն սպանված է իսկ Դավիթի շորերն էլ արյունոտած էր չճանաչեց նրան:

Դավիթը տեսավ Խանդութին, կանչեց.

— Ե՛յ, ի՞նչ կը վնտրես, ումն որ կը վնտրես յերեք որ կա սպանել եմ:

— Բերանդ քո չափով բաց,—բարկացավ Խանդութը,— քսան քեզ պես, քսան էլ ինձ պես մատաղ կանեմ ենոր յեղունգին: Ենոր գիակն էլ տեսնեմ քեզնից բարձր է ինձ համար:

— Վոր եղպես է մենք պիտի կռվենք,—ասաց Դավիթը:

Ցեվ յերկուսով կռվի բռնվեցին: Դավիթը սրտով չեր զարկում, բայց յերբ Խանդութն էր դուրդով մոտեցավ ուզեց ջախջախել Դավթի գլուխը, Դավիթը վահանը դեմ արավ. ապա ինքն էլ հարձակվեց Խանդութի վրա: Խանդութը տեսնելով, վոր իր բանը

դժվար է, շուռ յեկավ ու մազերը բաց թողեց մեջքին, Դավիթը թռավ, բռնեց Խանդութին դրեց գետին չոքեց նրա սրտին:

— Աման, կտրիճ, ինձ մի սպանի յես կին եմ,— ասաց Խանդութը:

— Լա՛վ, ես թող լինի ենոր փոխ, մի՞տդ է, վոր դարկեցիր բերանս արյունեցիր:

— Դավի՛թ, դու յես,— ուրախացավ Խանդութը:

— Ցես եմ, Խանդո՛ւթ:

— Դե թող ինձ, տեսար 40 փայլեվաններից յես քեզ ընտրեցի, իմ նշանը քեզ տվի, քեզ իմ սենյակ տարա: Դե սրանից հետո յես քեզ կին, դու ինձ մարդ:

Ցեվ յերբ տուն եյին գնում, ճամբին Խանդութը պատմեց.

— Մի քանի տարի առաջ ինձ մի թագավորի տուն հարս տարան: Ինձ ու թագավորի տղին դրին մի սենյակ. յես մարդուս հետ հանաք արի, ձեռքս դցի, վոր թևը բռնեմ, թևը պոկվեց, ե՛հ ասի թագավորի տղա յե, հո ինձ համար վար ու ցանք չի անելու, մի թևով էլ կապրենք. բայց մեկ էլ, վոր հանաք արի ձեռքըս դցեցի, թե մյուս թևը պոկվեց, և թե մեջքը ջարդվեց ու շունչը փչեց մեռավ: Ցես նոր հասկացա իմ ուժի չափը. թագավորն ասաց«ես հարսը մարդասպան է», ու ինձ հետ ճամբեցին իմ հոր տուն: Ցես էլ վորոշեցի—ով իմ մեջքը դնի գետնին, յես նրան կառնեմ: Եսոր դու ինձ հաղթեցիր, յես դարձա քեզ կին, դու ինձ մարդ. դե ուր կուզես, տար ինձ:

Տուն հասան ուրախ սրտով, կերան խմեցին, քնեցին։

Ցերեկ որից հետո նրանք ճամբա ընկան Սասուն։

Ցերը անցնում էին Զմշկիկ Սուլթանի տան մոտով, Զմշկիկ Սուլթանը դուրս յեկավ Դավիթի առաջ, ասաց.

— Թըլոր Դավիթ դու ուխտել էյիր ինձ առնել, մենք իրար հետ մատնիք ենք փոխել, մեկտեղ էլ քնել ենք, դու թողիր ինձ, գնացիր Խանդութին առար. ինչի յես խորոտ չէյի՞, ինձ չհավնա՞ր, վոր գնացիր նրան բերիր։ Դե՛, վոր եղպես է, արի կռիվ անենք, կամ յես քեզ կսպանեմ, յես էլ Խանդութն էլ կմնանք վորբեվայրի, կամ էլ դու ինձ կսպանես, նոր կերթաս Խանդութի ծոց կը պառկես։

Զմշկիկ Սուլթան,— ասաց Դավիթը,— կնիկ կա ինձ հետ, թող նրան տուն տանեմ, յոթ որ լրանա կդամ քեզ հետ կռիվ կանենք։

Զմշկիկ Սուլթանն ասաց.

— Դե յերդվիր Մարութա բարձր Աստվածածնով, ու քո թեվի Խաչ Պատերազմով, վոր յոթ որից հետո կռվի կգաս. կթողնեմ։

Դավիթը յերդվեց, ու ապա Խանդութի հետ յեկավ Սասուն։ Ցերը տուն հասավ, յոթը ձեռք դուսան կանչվեցին յոթ որ, յոթ գիշեր հարսանիք արին, Դավիթն ու Խանդութը պսակվեցին։

Ամբողջ Սասունը, մեծ թե պստիկ շատ ուրախացան Դավիթի բախտավորությամբ։

Բայց Դավիթը այնքան տարվեց Խանդութի հրապույրով ու գեղեցկությամբ, վոր մոռացավ իր յերդումը և յոթ տարի Խանդութի մոտից չեր հեռանում։

Մի որ եկ Դավիթը Խանդութին ասաց.

— Ուզում եմ գնալ գտնել են քառասուն փայլեվաններին, վորոնց ձեռքից քեզ խլեցի, նրանց մեղքի տակ ընկա։ Ուզում եմ տանեմ նրանց Վրաստան, ենտեղի գեղեցիկ աղջիկների հետ ամուսնացնեմ, բախտավորեցնեմ։

— Դավի՛թ,—ասաց Խանդութը,— դու իմ մեղքի տակ մտար, հորիցս, մորիցս հանեցիր բերիր եստեղ։ Հիմի յեկ յերեխով եմ, վոր ինձ տղա յեղավ ի՞նչ անեմ, ինչո՞ւ կերթաս։

— Խանդութ-խաթուն,— ասաց Դավիթը,— ինձ վոր տղա յեղավ իմ հոր սուրբ հիշատակին ենոր անուն Մհեր կը դնես։—Ապա մեկ անգին քարերով լի վոսկի բաղբանդ տվեց Խանդութին, ասաց։—Թե տղա յեղավ, կկապես նրա աջ թեվին, թե աղջիկ յեղավ երեն ոժիտ կտաս, վոր իր թոռներով էլ ծախսի չվերջանա։ Ցես վոր շատ ուշանամ Մհերին ուղարկիր, թող գա, բաղբանդը տեսնեմ կը ճանաչեմ իրեն։

Ապա յելավ հեծավ Ֆուռկիկ Ջալալին, հարց ու փորձով գտավ 40 փայլեվաններին ու գնաց Վրաստան, տեսավ մի մարդ է գալիս հետը 40 աղջիկ, Դավիթը հարցրեց.

— Ովքե՞ր են դրանք։

— Իմ քույրերը, իսկ ովքե՞ր են քո հետի մարդ։

— Իմ յեղբայները,—ասաց Դավիթը,—արի բարեկամանք։

Ցեվ 40 փահլեվաններին ամուսնացրեց 40 աղջիկ-

նեբի հետ, խնճույք սարքեց, նորապսակները գոհացան Դավթից. դարձան իրենց յերկիրը, ինքը գնաց Ադրբեջան, այնտեղ հանդիպեց մի սիրուն աղջկա, շատ գուրը յեկավ, ասաց տանեմ Խանդութ Խաթունին, թող ընկերություն անի հետը: Աղջկան դրեց ձիու գավակը ու ճամբա ընկավ դեպի Սասուն:

Դավիթը վոր Վրաստան գնաց, Խանդութին հայրը կանչեց կապուտկող, Խանդութը, վոր հղի եր, հորանց տանը ծնեց, ու մի տղա բերավ: Խանդութի հայրը Վաչոն ասաց.

— Թե, վոր սա Դավիթի տղան է, հոր շնորքը պիտի ունենա, նրա զորությունից սրա մեջ էլ պիտի լինի, արի փորձենք:

Ցեվ բերին յերեխայի բարուրը վաթաթեցին գուրթանի շղթաներով: Մհերն էլ լաց, ծմրկտաց ու շղթաները կտոր-կտոր յեղան: Իսկական Դավթի ու Խանդութի վորդի:

Տեսան,— վոր տղան աղնանացորդի յե, շատ ուրախացան ու յեր լողացրին տեսան, վոր տղայի մեկ ձեռքը խուփ է, ինչ ճար արին տղայի խուփ ձեռքը չկարողացան բացել:

Այն ժամանակ նամակ գրեցին Սասուն Քեռի Թորոսին կանչեցին, Քեռի Թորոսը յեկավ, վերցրեց տղայի բարուրը, տղայի ձեռքը մաժեց. մատները բացվեցին. տեսավ մի կաթ արյուն կա տղայի ձեռքի մեջ.

— Հայ-հայ,—ասաց քեռի Թորոսը,-թե քարը վերջում սրան իր մեջ պահի,-պահպանի, թե չե հողը սրան չի կարող պահել, աշխարհը դարձրել է մի կաթ

արյուն դրել է ձեռքի մեջ, թե վոր դա ապրեց, դրանից զարմանալի բան դուրս կգա:

Մի քանի որից, տղային կնքեցին անունը դրին Մհեր: Մհերը մեծացավ, զորացավ: Քեռի Թորոսը նրան ու Խանդութին տարավ Սասուն: Մհերը, վոր մի քիչ մեծացավ Սասնա քաղաքի մեծ դետի վրա կամուրջ կառուցեց: Ցերը մարդիկ կամուրջով կանցնեին Մհերը նրանց կծեծեր, կասեր ինչու կանցնեք իմ սարքած կամուրջով: Մարդիկ ճարահատ կանցնեին ջրի միջով: Մհերը այս անգամ նրանց կծեծեր կասեր.

— Հապա ո՞ւմ համար եմ եդ կամուրջը սարքել, ինչո՞ւ կամուրջով չեք անցնում, մտնումեք ջուրը, ջուրը վոր ձեզ խեղդի ախը մեղքն իմ վիզը կընկնի:

Քաղաքացիք դանդաղվեցին Մհերի վարմունքի համար և Քեռի Թորոսը Մհերին խրատեց:

Յոթ տարին լրացավ, Դավիթը դեռ չեր վերադարձել. Մհերին յերեխաները խաղի ժամանակ բիչ կասեին և դա շատ եր ազդում փոքրիկ Մհերի վրա: Մի որ նա մորից հարցրեց հոր մասին և իմացավ, վոր նա Վրաստան է գնացել և ասաց, վոր հայրը բաղբանդ է թողել տղայի համար, վոր յեթե ինքը ուշանա տղան բաղբանդը կապի յերթա հորը գտնի:

Մհերն ասաց.

— Ցես պիտի յերթամ հորս գտնեմ:

Խանդութը բաղբանդը կապեց տղայի թևին ու Մհերը քիչ հետ ձին նստած դաշտ յելավ, վոր Վրաստան գնա: Տեսավ դաշտի դիմացից մի թիսամորուս մարդ է գալիս, ձիու գավակին էլ մի սիրուն աղջիկ. Մհերը կանչեց.

— Այ մարդ· դու միրուքավոր մարդ, հդ ջահել աղջիկը քեզ վայե՞լ է, վոր կը տանես, եդ աղջիկը ինձ պիտի տաս։

— Տղա՛,—ասաց ձիավորը,—դու մի դյադա ես, քեզ վայել է, ինձ վայել չե՞։

— Ինձ է վայել, քանի վոր յես եմ եմ աղաղ ենք,—ասաց Մհերը։

Դավիթն ուզեց, վոր անցնի, Մհերը չթողեց, ձեռքը դցեց չթողեց։

Եդ տեղ Դավիթն զդաց, վոր տղան մեծ ուժ ունի, սիրտն յելավ ասաց։—

Շատ ծովեր եմ մտե
Իմ ձիու ճաներ չեր թացվե,
Հիմի մեկ բարակ առուս եմ տեսեր
Չե թողնի, վոր յես անցնեմ։
Շատ սարեր քարեր եմ ման յեկել,
Իմ առջև դեմ կանգնող չեր յեղել,
Մեկ բարակ բատան եմ տեսել
Շատ եմ մոտեն վախեցել։

Դավիթը, վոր յերդը պրծավ, Մհերի սրտին դիպան նրա խոսքերը· նա ասաց·

— Ուրեմն քո խելքով բարակ առուն յե՞ս եմ, հա՞, բարակ բատանը յե՞ս եմ, հա՛· դե ձիուց վեր արի յես ու դու ըմբշտամարտի բռնվենք· տեսնենք ո՞վ ե մեզնից բարակ առուն։

Դավիթը ընդունեց Մհերի մարտահրավերը, էր հետի աղջկանը տարավ դրեց մի ապահով տեղ և յեկավ Մհերի հանդիման։

Յերկու ախոյանները վինչացին ու հարձակվեցին մեկ-մեկու վրա։ Այնպես ահեղ եր նրանց զարկերի թափը, վոր գետինը դղրդում եր նրանց վոտքերի տակ։ Քիչ հետո յերկու հսկաները քրտինքի մեջ կորան, բայց վոչ մեկը մյուսին բաց չեր թողնում· քանի դնում տաքանում եյին և կռիվը սաստկանում եր։ Այդ պահին մի քամի եկ բարձրացավ և Դավթի թաշկինակը քշեց տարավ հասցրեց Խանդութ Խաթունին։ Խանդութ-Խաթունը վերցրեց թաշկինակը, հոտ քաշեց հասկացավ, վոր եդ Դավթի թաշկինակն եր, յելավ դաշտ դնաց։ Ի՞նչ տեսնի, հեր ու վորդի յերկու սարի պես կերթան-կուգան իրար կը դիպնեն, յերկուսն եկ առյուծ են դարձած և մարդ սիրտ չի անում, մոտենալ նրանց բաժանել։ Խանդութը մի բարձր տեղ կանգնեց ու ձայն տվեց·

Դավի՛թ, դու մի զարնի,
Դու մեր մեկ հատիկ մանուկին
Մ'ի զարնի, մի՛ զարնի։

Բայց Դավիթն առաջին անդամն եր հանդիպում այդպիսի հսկայական ուժի տեր մարդու և հաղիվ կարողանում եր իրեն պաշտպանել։ Դավիթը ձայն չհանեց, իսկ Մհերը մորը պատասխանեց·

— Մարե՛, դու դարդ մի անի, նրա զարկերը Ծովասարից յեկած քամու պես կը դիպնեն իմ մարդերին, կանցնեն։

Խանդութ Խաթունը տեսավ, վոր զորությունը Մհերի կողմն ե այս անդամ ձայն տվեց·

Մհե՛ր, դու մի զարնի
Մեր թխամորուս Դավթին,
Մի՛ զարնի, մի՛ զարնի։

Ցերբ Մհերը վոչ մի կարեվորություն չավեց մոր աղերսանքին, Խանդութը յերդեց.

Սարեր ոգնության հասեք,

Ձորեր ոգնության հասեք,

Հոր ու տղային բաժանեցեք:

Սար ու ձորն ել կարծես սարսափում ելին այդ ահեղասաստ կռվից և Խանդութն այս անգամ կանչեց.

— Որհնյալ բարերար աստված, քո վողորմությունը շատ ե, դու ոգնության հասիր հորն ու տղային իրարից բաժանիր:

Ցեվ այնքան աղաչեց ու խնդրեց Խանդութ-Խաթունը, վոր վերջը մեկ—մեկից բաժանվեցին: Ցերբ հսկաները մի պահ չունչ առան՝ Դավիթը դարձավ Մհերին:

— Այ տղա, դու վոր ուզում ելիր ինձ սպանել, հապա ինչպե՞ս պիտի ազատվելիր իմ կտրիճ տղայի ձեռքից:

Ո՞վ ե քո կտրիճ տղան, թող դա ինձ հետ կռիվ,— ասաց Մհերը:

— Իմ կտրիճն են ե, վորի թևին վոսկե բազբանդ կա:

Մհերը նայեց իր թևին, տեսավ իր վոսկե բազբանդը, տխրեց, լաց յեղավ վոր հորն այդպես ե դիմավորում, ապա հասավ Դավթի ձեռքն համբուրեց ու ասաց.

— Ախ դու իմ հայրն ես յեղել, յես քեզ մեղա, հայրիկ:

Դավիթը, վոր կռվի ընթացքում ճանաչել եր աղային, վորձել եր նրա ուժը ասաց:

— Մհե՛ր դու ինձ հետ կռվեցիր ու ինձ ամաչեցրիր: Դրա փոխարեն աստված եմ կանչեր, վոր դու անմահ ու անժառանգ մնաս:

Այս անեծքից Մհերը շատ նեղացավ, յելավ գնաց Կապուտկող և աղաչ տղաներ ու աղջիկներ հավաքելով սկսեց քեֆ անել, վոր մոռանա հոր անեծքը:

Դավիթը հոգնած-դադրած, վերցրեց Աղբրեջանից իր հետ բերած աղջկան ու Խանդութ-Խաթունի հետ տուն յեկավ, քրտինքի ու արյան մեջ կորել եր:

Խանդութ-Խաթունը ջուր բերեց. Դավիթը չորերը հանեց, վոր լվացվի հանդստանա:

Հանկարծ Խանդութ-Խաթունը մի ախ քաշեց և սկսեց լալ: Դավիթը մտահոգված հարցրեց.

— Այ կնիկ, եդ ինչ պատահեց, ինչո՞ւ կուլաս:

— Ինչպես լաց չլինեմ Դավիթ. տե՛ս քո թևի Խաչ Պատերազմին սեվացել, դառել ե սև կուտ:

— Այ կնիկ,—տրտմած խոսեց Դավիթը,— են ինչ Մհերն եր, վոր ինձ կը զարկեր, եդ մենակ նրա զորությունը չեր եդ Խաչ Պատերազմին եր, վոր ինձ կզարկեր: Ցես յերդում եմ արե Խաչ Պատերազմի վրա, վոր յոթ որից յերթայի Զմշկիկ Սուլթանի հետ կռվի, չեմ գնացել, յերդմնակոտոր եմ յեղել: Ել սպասել չի կարելի, պիտի գնամ:

Ու չլսեց Խանդութ-Խաթունի թախանձանքին, ձին հեծավ գնաց Զմշկիկ Սուլթանի ապարանքը: Նրա Դեմ յելավ Զմշկիկ-Սուլթանը՝ ու շատ նեղացած խոսեց.

— Դավի՛թ, ես ի՞նչ արիր, դու խոստացար յոթն որից դառնալ, յոթն որը դարձավ յոթ ու յոթ տարի։ Ցես հա քո ճամբեն եմ նայել ու մնացել եմ առանց մարդի։

— Դե՛հ,—ասաց Դավիթը կոտրված,— քո պատրաստությունը տես, կռվի յելնենք։

— Լա՛վ,—ասաց Զմշկիկ Սուլթանը,—մենակ ինձ մի քիչ ժամանակ տուր իմ շորերն հաղնեմ, զենքերս կապեմ, դամ։

Դավիթն ել գնաց գետը, վոր մի քիչ լողանա, զովանա, նոր ուժ հավաքի, մինչև Զմշկիկ Սուլթանը կռվի պատրաստվի։

Դավիթը գնաց շորերը հանեց մտավ ջուրն ու լողանում եր։

Զմշկիկ Սուլթանը Դավթից մի աղջիկ եր ունեցել, աղջիկը բավական մեծացել եր և նետ ու աղեղ կը բանեցներ։ Նա ասոր ել վերցրեց նետ ու աղեղը, նետերը թունավորեց ու յեկավ գետի յեղեգնուտների մեջ թաղնվեց, յերբ Դավիթը լողանում եր ու մեջքով դեպի աղջիկն եր դարձել, աղջիկը նետը դաղտագողի զարկեց Դավթի մեջքին. նետը ծակեց Դավթի մեջքը և սրտից դուրս ելեց։

Այդ դավադրական զարկից Դավիթն այնպես գոռաց, վոր ձայնը հասավ Սասուն։ Քեռի Թորոսը Ոհանի և մի քանի ուրիշների հետ չտապեցին Դավթին ոգնության։ Նրաք հասան այն ժամանակ յերբ դյուցազն իր վերջին շունչն եր ապրում։

— Ա՛յ Դավիթ,— հարցրեց քեռի Թորոսը,—ո՞վ զարկեց քեզ։

— Չգիտեմ ո՞վ է զարկողը, բայց նամարդ զարկ եր, տեսե՛ք, յեղեգնուտների մեջ ո՞վ կա, զարկն են կողմից եր։

Գնացին փնտռեցին և յեղեգնուտների մեջ գտան Զմշկիկ-Սուլթանի աղջկան, վոր մեռած պառկած եր։ Նա Դավթի գոռոցից լեղաճաք եր յեղել և տեղն ու տեղը մեռել։

Ցերը Դավիթն իմացավ թե ով է զարկողը տրտըմած հոգով ասաց.

— Իմ ցեցն իմ անձից ծնվեց։ Ինձ չեր վայելեր յերդմնակոտոր լինել։ Ա՜խ, յերդմնակոտոր յեղա ու իմ պոռուղն ինձ սպանեց։

Ցեվ վերջին խոսքի հետ դյուցազնը ավանդեց իր հոգին։

Քեռի Թորոսն ու բոլոր իշխանները ձիու վրա պատդարկ սարքեցին Դավթին դրին վրան ու Դավթի պատվին ջիրիդ խաղալով հասան Սասուն։

Խանդութ-Խաթունը, վոր աչքը ջուր Դավթին կոպասեր նկատեց, վոր ջիրիդ խաղացողների մեջ Դավթի չենք-չնորհքին մեկը չկար և հասկացավ, վոր Դավիթը մեռած է ու եդ ամենը նրա պատվին է արվում։ Սիրտը մեծ վշտով լցվեց, վողբաց, վողբաց ու յերդեց.

— Ով արժանի եր յեկավ,
Ով արժանի չեր յեկավ,
Մենակ իմ կանաչ կտրի՛ճ Դավիթը չեկավ։

Անցավ մի քանի որ ամբողջ Սասունը սգի մեջ եր։ Են անիրավ Վախկոտ Վերդոն յեկավ Խանդութ-Խաթունի մոտ, ասաց.

— Խանդո՛ւթ. ինչ սուդ կանես, Դավիթը մեռավ առանց կռվի. Ե՛հ, մեռավ, աստված հոգին լուսավորի: Քեզի կտրիճ Դավիթը պակասեց, բայց ամուսին չի պակասի: Հազար իմ կնիկն ել մեռեր է, արի ինձ ա՛ռ, լինենք մարդ ու կնիկ:

— Հա՛յ, հա՛յ, Դավթի պես մարդ ունենամ, Դավիթը մեռնի դամ քեզ պես վախկոտին առնեմ: Դավթից հետո արեվն ել ինձ լուս չի տա. վորտեղ Դավիթը, ենտեղ ել յես:

Ասաց Խանդութը. յելավ Սասնա բերդի գլուխ ու ենտեղից իրեն գցեց ներքև. նա ընկավ կրծքի վրա ու նրա գուլդ ծծերի դիպած տեղերից յերկու աղբուր քցեց, վոր մինչև հիմի ել կա ու կմնա:

Սասունցիք Խանդութին ել դրին դագաղի մեջ, բերին Դավթի դագաղի մոտ:

Ցավ մեծ հանդեսով յերկու դյուցազուն ամուսիններին թաղեցին Ծովասար, Մարութա վանքի մեջ:

Սասունը յոթ որ սուդ արավ նրանց համար:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՓՈՔՐ ՄՀԵՐ

Մհերը փակվել էր Կապուտկող բերդում ու տեղյակ չէր, թե ինչ կանցներ կը դառնար Սասուն։ Նա քեֆի ու ուրախության մեջ էր անցկացնում իր օրերը։

Մի օր էլ յեկան Մհերին իմաց տվին, թե իրեն կանչում են։ Մհերը ուրախացավ, յենթադրեց, թե յեկողը հայրը Դավիթն է։ Նա ուզում էր տուն դառնալ ապրել դյուցազն հոր և մոր հետ, վոր հետո ինքն էլ նրանց պես Սասնա ճրագը վառ պահեր։

Մհերը դուրս յեկավ ու տեսավ հորյեղբայր Ոհանին ու Քեռի Թորոսին։ Բայց վոր հորը չտեսավ, շատ տխրեց, հարցրեց.

—Իմ հերական հեր Դավիթը, իմ մերական մեր Խանդուքը ո՞ւր է։

Ձենով Ոհանն ասաց.

— Քու հեր սպանված է, քու մերն էլ ենոր դարդից ընկավ մեռավ, Ամշկիկ-Սուլթանն էլ պատրաստվում է գալ Սասուն քարն ու հողը վողողի տանի։

Այս մասը կազմելիս, բացի կանոնական տեքստից ու յեղած վարյանտներից նկատի յեմ ունեցել, նաև մեր բանաստեղծ Ա. Իսահակյանի «Սասմա Մհերը» վիպերգը։

Արի յերթանք Սասուն քո հոր տեղը բռնի, եկի Սասնա ճրագ վառի, թշնամիներին վռնդի:

Մհերը հոր ու մոր մահվան բոթը լսելով ընկավ քիթ ու բերանի վրա գետին և կուլար ու կողբար: Ինչ արեցին չկարողացան նրան շտկել: Մհերը շատ ու շատ լացեց հետո շտկվեց տեղում ու վողբալով ասաց.

— Աչքեր, լավ չե՞ք, վոր դուք կուրանայիք, վոր չտեսաք ձեր հոր դլխի դոտին ու եսպես շուտ վորբացաք: Աչքեր, լավ չե՞ք, վոր դուք կուրանայիք, վոր չինդացիք ձեր հոր պողպատե քամարի վրա ու եսպես շուտ վորբացաք, Աչքեր դուք կուրանայիք, վոր չինդացիք ձեր հոր Թուր Կայծակի վրա ու եսպես շուտ վորբացաք: Աչքեր դուք կուրանայիք, վոր չինդացիք ձեր հոր Քուռկիկ Ջալալինի վրա ու եսպես շուտ վորբացաք:

Եսպես վողբաց Մհերն ու ձին հեծնելով Քեռի Թորոսի ու հորեղբոր հետ ընկավ Սասունի ճամբան:

Սասունի ճամբու վրա մի վանք կար, անունն եր Մատղավանք: Դավթի թշնամի թաղավորները, Մըսրա Մելիքի մարդիկ, Շապուհ թաղավորի մարդիկ, Զմշկիկ Սուլթանի մարդիկ յեկան վանքի վանահորն իրենց կողմը քաշեցին ու վորոշեցին Մհերին սպանել, վոր հետո Սասնա ճրագը հանդցնեն, Սասունը տիրեն:

Մատնիչ վանահայրը գիտեր, վոր Մհերը իր քեռու և հորեղբոր հետ անցնելու եր վանքի մոտով, ուստի Մհերի անցած ճամբան բերեց հաստ-հաստ

դերանները լցրեց, վոր Մհերը դրանցով դաղվի, հոգնի, ստիպված լինի մնալ վանքում հանդստանալու և չկարողանա կռվել թշնամիների դեմ:

Յերբ Մհերը հասավ այդտեղ, տեսավ թափած դերանների դեղը, հարցրեց քեռի Թորոսին.

— Ի՞նչ հնարք կա ճամբեն բանալու:

— Շատ հասարակ,— ասաց քեռի Թորոսը,—թե Դավիթն եստեղ լիներ յես իմ նիզակով դերանները կը բարձրացնեյի Դավիթն ել կառներ ձորը կը շպրտեր, ճամբեն կը բացեր:

— Քեռի՛, յես իմ հոր տղեն եմ, դերանները բարձրացրու, յես դենը կը շպրտեմ:

Ու եդպես ել արին, դերանները ճամբից դեն շպրտեցին ու յերեկոյան հասան Մատղավանք:

Վանահայրը կեղծավոր ժպտաց, նրանց բարի դալուստ ասաց, տարավ դրեց մի մեծ սենյակ, պատվեց, իսկ հետո ինքը դնաց թշնամիներին հայտնեց, վոր Մհերը յեկել է ու մեծ սենյակում հանդստանում է:

Մինչ այդ, Մհերը, Քեռի Թորոսը և Ջենով Ոհանը կերան խմեցին ու քնեցին, վոր հանդստանան, առավոտյան իրենց ճամբան շարունակեն:

Առավոտը, վոր դարթնեցին, Քեռի Թորոսը առաջինը դուրս նայեց ու տեսավ, վոր շրջապատված են թշնամիներով ու անմիջապես իմաց տվեց Մհերին:

— Մհեր՛,—ասաց,— վեր ել մի դուրսը նայիր, թշնամիների դորքեր յեկել վանքը շրջապատել են:

Մհերը յելավ տեսավ, վոր անթիվ անհամար զորք է յեկել ու պատրաստ կռվի յե սպասում: Վանահայրն

ել թշնամիների մեջ եր ու թշնամիներին խորհուրդներ եր տալիս:

Մհերը զայրացավ հեծավ ձին, սուրը մերկացրեց ու գնաց թշնամիների մեջ, աջ զարկեց, ձախ զարկեց, արյունը գետ յեղավ, հոսեց: Քեռի Թորոսը ու Ոհանը մեկ-մեկ բարդի ծառ պոկեցին ու Մհերին հասան ողնություն:

— Եհ լ՞նչ կանեք, ծառով կը կռվեք,—հարցրեց Մհերը:

Եղպես է Մհեր,— ասավ Քեռին,—տեսանք, վոր դու կալ ես մտել հաշան կանես, որանը ցրիվ կտաս, մենք ել ավելերը վրա կը բերեք:

Յեվ այսպիսով նրանք մինչև իրիկուն բոլոր թշնամիներին ջարդեցին ցրեցին: Վանահայրը չկարողացավ փախչել, Մհերը նրա ոձիքից բռնեց, բերեց վանքի մեջ, ձեռքով մեկ սյուն բարձրացրեց, վանահոր գլուխը դրեց տակը, սյունը բաց թողեց վանահոր գլխին, սատկացրեց ու ասաց.

— Սրանից հետո սա Մատաղավանք չէ, քանի վոր վանահայրը մատնություն արեց, թող վանքի անունը մնա Մատնավանք:

Ու նոր յերեքով հանդիստ սրտով գնացին Սասուն:

Բայց Մհերը հանդիստ չուներ: Հոր դավադրական մահը վրդովել եր նրա դյուցազուն տղային և նա պատրաստվում եր հոր վրեժը լուծելու:

Զենով Ոհանը Մհերին տվեց Դավթի բոլոր զենքերը: Մհերը հագավ, կապեց հոր զենքն ու զրահը և յերբ ուզեց նստել Քուռկիկ Ջալալին, ձին սկզբում փրփրեց,կատաղեց, մոտ չթողեց Մհերին, բայց յերբ

Մհերի ձեռքը դիպավ բաշին զգաց նրա ուժը, հասկացավ, վոր նա Դավթի զարմեն է թույլ տվեց, վոր Մհերը հեծնի իրեն:

Յեվ նա ձին հեծած Զենով Ոհանի և Քեռի Թորոսի հետ գնաց Խլաթ, Զմշկիկ Սուլթանի վրա, հոր դավադրական սպանության վրեժը լուծելու:

Զմշկիկ Սուլթանի զորքը պաշտպանում եր Խլաթ քաղաքի չորս բոլորը ուր ապրում եր Զմշկիկը: Մհերը հորեղբոր ու Քեռու հետ վորոշեցին իրենց անելիքը և գանազան կողմերից հարձակվեցին քաղաքի վրա:

Մհերը քաշեց թուր կայծակին ընկավ զորքի մեջ շատերին կոտորեց, շատերին փախցրեց, բայց դեռ սիրտը չհովացավ մինչև բռնեց Զմշկիկ Սուլթանին. բերեց մի ձի Զմշկիկ Սուլթանին կապեց ձիու պոչից ու ձին բաց թողեց: Ձին ընկավ քարե-քար ու քիչ հետո Զմշկիկ Սուլթանը պատառ պատառ յեղավ, մենակ մազերը մնացին ձիու պոչին կապած:

— Ցես իմ հոր վրեժ լուծեցի,—ասաց Մհերը ու գնաց հանդիպեց հորեղբորն ու Քեռուն, տեսավ, վոր նրանք ել թշնամուն մյուս կողմից եյին ջարդել, ցրել:

Յեվ Մհերը հոր վրեժը լուծած հանդիստ սրտով վերադարձավ Սասուն:

Մի ժամանակ Մհերն ապրեց Սասուն, բայց սիրտը չեր հանգստանում, հոր անեծքը նրան հանդիստ չեր տալիս, դրա համար ել մի որ դիմեց Զենով-Ոհանին, ասաց.

— Հորեղբա՛յր, պիտի յերթամ աշխարհ ման դալու, յես եստեղ չեմ կարող նստել մնալ, մի բան, վոր վոչ ժառանգ եմ ունենալու, վոչ ել մահ ունեմ:

եվ թշնամիների մեջ եր ու թշնամիներին խորհուրդներ եր տալիս։

Մհերը զայրացավ հեծավ ձին, սուրը մերկացրեց ու գնաց թշնամիների մեջ, աջ գարկեց, ձախ գարկեց, արյունը գետ յեղավ, հոսեց։ Քեռի Թորոսը ու Ոհանը մեկ-մեկ բարդի ծառ պոկեցին ու Մհերին հասան ողնություն։

— Եհ ի՞նչ կանեք, ծառով կը կռվեք,—հարցրեց Մհերը։

Եղպես է Մհեր,— ասավ Քեռին,—տեսանք, վոր դու կալ ես մտել հաշան կանես, որանը ցրիվ կտաս, մենք եվ ավնեերը վրա կը բերեք։

Յեվ այսպիսով նրանք մինչև իրիկուն բոլոր թշնամիներին ջարդեցին ցրեցին։ Վանահայրը չկարողացավ փախչել, Մհերը նրա ոձիքից բռնեց, բերեց վանքի մեջ, ձեռքով մեկ սյուն բարձրացրեց, վանահոր գլուխը դրեց տակը, սյունը բաց թողեց վանահոր գլխին, սատկացրեց ու ասաց։

— Սրանից հետո սա Մատաղավանք չե, քանի վոր վանահայրը մատնություն արեց, թող վանքի անունը մնա Մատնավանք։

Ու նոր յերեքով հանդիստ սրտով գնացին Սասուն։

Բայց Մհերը հանդիստ չուներ։ Հոր դավադրական մահը վրդովել եր նրա դյուցազուն տղային և նա պատրաստվում եր հոր վրեժը լուծելու։

Ձենով Ոհանը Մհերին տվեց Դավթի բոլոր զենքերը։ Մհերը հագավ, կապեց հոր զենքն ու զրահը և յերբ ուզեց նստել Քուռկիկ Ջալալին, ձին սկզբում փրփրեց, կատաղեց, մոտ չթողեց Մհերին, բայց յերբ

Մհերի ձեռքը դիպավ բաշին դդաց նրա ուժը, հասկացավ, վոր նա Դավթի զարմեն է թույլ տվեց, վոր Մհերը հեծնի իրեն։

Յեվ նա ձին հեծած Ձենով Ոհանի և Քեռի Թորոսի հետ գնաց Խլաթ, Զմշկիկ Սուլթանի վրա, հոր դավադրական սպանության վրեժը լուծելու։

Զմշկիկ Սուլթանի զորքը պաշտպանում եր Խլաթ քաղաքի չորս բոլորը ուր ապրում եր Զմշկիկը։ Մհերը հորեղբոր ու Քեռու հետ Վորոշեցին իրենց անելիքը և զանազան կողմերից հարձակվեցին քաղաքի վրա։

Մհերը քաշեց թուր կայծակին ընկավ զորքի մեջ շատերին կոտորեց, շատերին փախցրեց, բայց դեռ սիրտը չհովացավ մինչև բռնեց Զմշկիկ Սուլթանին. բերեց մի ձի Զմշկիկ Սուլթանին կապեց ձիու պոչից ու ձին բաց թողեց։ Ձին ընկավ քարե-քար ու քիչ հետո Զմշկիկ Սուլթանը պատառ պատառ յեղավ, մնացած մարդերը մնացին ձիու պոչին կապած։

— Ցես իմ հոր վրեժ լուծեցի,—ասաց Մհերը ու գնաց հանդիպեց հորեղբորն ու Քեռուն, տեսավ, վոր նրանք եվ թշնամուն մյուս կողմից եյին ջարդել, ցրել։

Յեվ Մհերը հոր վրեժը լուծած հանդիստ սրտով վերադարձավ Սասուն։

Մի ժամանակ Մհերին ապրեց Սասուն, բայց սիրտը չեր հանգստանում, հոր անեծքը նրան հանդիստ չեր տալիս, դրա համար եվ մի որ դիմեց Ձենով-Ոհանին, ասաց։

— Հորեղբա՛յր, պիտի յերթամ աշխարհ ման գալու, յես եստեղ չեմ կարող նստել մնալ, մի բան, վոր վոչ ժառանգ եմ ունենալու, վոչ եվ մահ ունեմ։

Յելավ կապեց թուր կայծակին, հեծավ Ռուսկիկ Զալալին ու դնաց աշխարհ ման գալու. անցավ շատ դաշտ ու դուրան, սար ու ձոր, անտառ ու քարափ և քաղցած ու հոգնած նստեց հանգստանալու: Ինչ հետո տեսավ մի մարալ լեղուն դուրս գցած վազում է: Մհերը նետ ու աղեղով զարկեց մարալին սպանեց: Ցավ այն է պատրաստվում էր խորոված անել, ուտել կշտանալ, տեսավ դիմացից քսանի չափ ձիավորներ յեկան: Ձիավորները հայհոյեցին Մհերին ու ասին.

— Սասնա ծուռ Դավթի տղան դա մեր թագավորի մարալը սպանի՞, այ ծուռ տղա, ծուռ:

Մհերն այս վոր լսեց, սիրտը չհամբերեց, յելավ ուզեց հարձակվի ձիավորների վրա, բայց ձիավորները ձիերի դլուխները դարձրին փախան: Մհերը դնաց հասավ Պաճիկ թագավորի քաղաքին ու վրան զարկեց քաղաքի մոտ: Ցերը թագավորն այդ իմացավ հավաքեց իր մեծամեծներին ու յեկավ Մհերի մոտ:

— Մհեր,— ասաց Պաճիկ թագավորը,— դու իմ դլխուն իմ յերեսին ես եկի. քո սպանած մարալը քեզ հալալ լինի: Ցես քո հոր, Դավթի հետ ուխտ ունեմ:

— Ի՞նչ ուխտ են արել,— ասա՛, յես իմ հոր խոսքն չեմ յելնի. ենոր ուխտ ուխտ է ինձ համար:

— Ցերը քո հերը Մըսրա Մելիքի հետ կռիվ արեց մենք ենոր հետ ուխտ արինք, վոր յես աղջիկ ունենամ տամ ենոր տղային, վոր նա աղջիկ ունենա տա իմ տղային: Հիմի ասված քո հորը քեզ տվեց, ինձ

ել ասված աղջիկ է տվել: Հիմի դու պիտի առնե՞ս իմ աղջկան:

— Վոր հավնա կառնեմ,— ասաց Մհերը:

Ցեվ դնացին թագավորի աղջկա մոտ: Աղջկա անունը Գոհար էր: Մի հուրի-փերի: Մհերը տեսավ թե չե հավանեց. Գոհարն ել Մհերին հավանեց:

Այդ օրն այդպես անցավ:

Մյուս առավոտ Գոհարը Մհերի սիրով վառված շուտ յելավ կանգնեց իր պատուհանի դիմաց ու նայեց դեպի այն վրանը ուր քնած էր Մհերը: Գոհարը տեսավ, վոր Մհերի վոտքերը մինչ ծնկները վրանից դուրս է մնացել, սիրտը ցավեց ինքն իրեն ասեց,— «մեկ յերթամ տեսնեմ, ծածկեմ, չլինի արևը Մհերին դարնի»:

Գոհարը հագավ տղամարդու շորեր, զենք կապեց վրան, հեծավ խարտյաշ ձին ու դնալով դեպի Մհերի վրանը կանչեց.

— Մհե՛ր, տե՛ս, արև քեզի կը դարնի:

— Ե՜, յես ինչ անեմ, վոր վրանը պստիկ է,— ասաց Մհերը:

— Պստիկ չե՛,—ասաց Գոհարը,— եդ նրանից է, վոր դու աղնատուրի ջան ունես:

— Լավ, եսոր մեծ վրան կը սարքեմ,— ասաց Մհերը,— բայց դու ո՞վ ե՛ս:

Գոհարն ասաց.

— Ցես թագավորի տղան եմ, եկել եմ, վոր քեզ փորձեմ: Դու իմ քույր Գոհարին հավներ ես: Մեր պայմանն ես է. յես ու դու պիտի կռվենք, թե դու

ինձ հաղթեցիր, իմ քույրը կառնես կերթաս, թե չես քեզ հաղթեցի, քո գլուխը կը կտրեմ։

— Համաձայն եմ,— ասաց Մհերը։

Ու Մհերն էլ ձին հեծավ և սկսեցին կռվել։ Մհերը, վոր իր դուրդը նետեց, Գոհարը բռնեց հետ չպրտեց։ Գոհարը վոր իր դուրդը նետեց Մհերը նույնպես բռնեց հետ չպրտեց։

Տեսան, վոր յերկուսի ուժն էլ հավասար է, մեկմեկու չեն կարող հաղթել, Գոհարն ասաց.

— Մհե՛ր, հերիք է ինչ կռվեցինք, ընա քո վրանը հանդստացի յես քեզ հաց ու ջուր կը ճամբեմ։ Մի պայման էլ կա, թե էն էլ կատարես, քոջս Գոհարին կառնես քեզ կին։

Մհերն համաձայնվեց ընաց իր վրանը։ Գոհարը նրա համար մի վոչխար յեփեց ուղարկեց, հետն էլ մի տիկ գինի։ Մհերը կերավ խմեց ու քնեց մինչև մեկել առավոտ։

Առավոտը Գոհարը ելի տղամարդու շորերով յեկավ Մհերի մոտ, ասաց.

— Դավթի տղա Մհերը դո՞ւն ես։

— Յե՛ս եմ,—ասաց Մհերը։

Դու է, վոր կուզես իմ քույր Գոհարին առնել։

— Յե՛ս եմ։

— Դե վեր կաց, պայմանս ասեմ, թե կատարեցիր, քույրս քեզ հալալ, թե չէ քո գլուխը կը կտրեմ։

— Ասա՛ պայմանդ։

— Պայմանս ես է,— ասաց Գոհարը,— քո մատանին դնենք, զարկենք, նետ ու աղեղ միջից անցկացնենք, ով վոր չկարողացավ նետն անցկացնել նա տարված է։

— Շատ լա՛վ, համաձայն եմ։

Մհերի մատանիքը իր տիրոջ համեմատության եր, նրա միջից նետը կանցներ ու կանցներ։ Բերին մատանիքը դրին մեջտեղ։ Առաջ Գոհարը զարկեց։ Այնպես հարմարին զարկեց, նետն այնպես անցկացրեց մատանիքի միջից, վոր մատանիքը տեղից չշարժվեց։

Հերթը հասավ Մհերին։

Մհերը պատրաստվում եր զարկել, բայց այդ րոպեին Գոհարը յեկավ, կանգնեց նրա առաջ։ Մհերը նայեց Գոհարին։ Գոհարն այնքան սիրուն եր, այնքան հրապուրիչ, վոր Մհերի աչքը մնաց նրա վրա և հասկացավ, վոր չնայած տղայի շորեր եր հագել և իրեն ցույց եր տալիս իբրև Գոհարի յեղբայր, բայց դա հենց ինքը Գոհարն է, վոր կա, Մհերը տարվեց Գոհարի գեղեցկությամբ, նետը զարկեց առանց նշան բռնելու ու չկարողացավ մատանիքի միջից անցկացնել։

Գոհարը դուրդը քաշեց, ասաց.

— Խոսք խոսք է. յես քո գլուխը պիտի զարկեմ։

— Չե՛,— ասաց Մհերը,— եղ նամարդություն է, դու կանգնեցիր իմ առաջ, իմ աչքը խաբիր, քեզ եյի նայում դրա համար նետս ուրիշ կողմ գնաց։

— Լա՛վ,— ասաց Գոհարը, մեկ էլ զարկ, յես հեռու կը կանգնեմ, թե անցուցիր, իմ քույր Գոհարը քեզ, թե չէ, ես անպամ էլ չեմ խնայի, գլուխդ կը զարկեմ։

Մհերը համաձայնվեց ու նետն ու աղեղը վերցուց զարկեց։

Նետն անցավ մատանու միջից ու մատանին տեղից բնավ չշարժվեց։

Գոհարն ուրախացավ ասաց.

— Ա՛յ հիմի արժանի ես, վոր Գոհարի մարդը լինես։

— Արժան եմ, արժան, Գոհա՛ր դու որ իսկական ախպեր լինեյիր, են առաջին զարկն էլ խղուր չեր անցնի։

— Ճանաչեցիր հա՞,—ասաց Գոհարը։

Յեվ ուրախացած գնացին Թաղավորի մոտ։ Թաղավորը նրանց պսակեց ու մեծ խնճույք սարքեց։

Մհերը գիշերը գնաց Գոհարի մոտ։ Գոհարը բերեց մի թուր դրեց իր ու Մհերի մեջտեղն, ասաց.

— Մենք եսպե՛ս պետք է քնենք։ Յես քեզի կին, դու ինձ մարդ կլինենք են ժամանակ յերբ վոր հաղթես արևմտից Թաղավորին։ Են անիրավ Թաղավորն իմ հոր յերկրից հարկ կառնե ու շատ նեղություն կուտա մեզ ու մեր ժողովրդին։

Այդպես էլ քնեցին։ Առավոտ Մհերը հեծավ Քուռկիկ Ջալալին, քաշեց Թուր Կայծակին ու ասաց,—«Արևմտից Թաղավոր ուր ես յեկա»։ Գնաց հասավ Թաղավորի երկիրը կոտորեց նրա զորքերը, Թաղավորին էլ սպանեց, եղպես Գոհարի հոր յերկիրն ազատեց խարջից ու հետ յեկավ, ասաց Գոհարին.

— Էլ քո հորից ու նրա յերկրից խարջ առնող չկա։ Թաղավորին սպանեցի։

Գոհարն ուրախացավ։ Ու նոր նրանք դարձան մարդ ու կին։

Մհերը Գոհարի հետ ապրեց ուրախ որեր։ Ինդացին իրենց ջահել կյանքը։

Անցավ ժամանակ. մի որ այսպիսի թուղթ ստացավ Սասունից, Զեյնով Ոհանից.

«Մհեր, Կոզբադինի տղաները ուժ են հավաքել, յեկել են Սասունի վրա, ելի խարջ կուզեն, մեր քաղաք կավիրեն, յես չեմ կարող նրանց հաղթել։ Ոգնության հասիր»։

Մհերը պատրաստվեց գնալ Սասուն։ Բայց Գոհարը տխրել եր, չեր ուզում, վոր Մհերը գնա։

— Մհե՛ր, դու վոր կերթաս, հապա յես ի՞նչ անեմ,— մղկտաց Գոհարը,— ախր ինձ վրա հազար աչք ունեցող վայլեվան կար. նրանք կիմանան վոր դու գնացել ես, կուզան իմ հոր տուն քար ու քանդ կանեն, ինձ էլ կառնեն տանեն։

— Ա՛խ Գոհար,— ասաց Մհերը, իմ սրտի սիրելյան Գոհար. ինչ ծնվել եմ աշխարհի մեջ անիրավություն եմ տեսել, ի՞նչ անեմ հապա, վոր չերթամ։ Հորս դավաճանությամբ սպանեցին, մերս են քոփակ Վերդոյի խոսքի վրեն ինքն իրեն քարից գցեց սպանեց, վորը մնացի, հոր ու մոր կարոտ մնացի։ Են սուրը ձևացող սև սատանան, Մատղավանքի վարդապետ կուզեր ինձ սպանել, ենոր Մատղավանքը Մատնավանք դարցուցի, յեկա եստեղ, քո հոր յերկրի խարջը տանողների դեմ կռվեցի. ինչ կանեմ— կղառնամ անիրավությունը կա ու կա, դեռ ավելի կը շատանա։ Երթամ, դուցե ճարը գտնեմ նոր դամ քեզ մոտ։

— Վոր եղպես է, Մհեր, գնա, գնա, բայց ինձ վրա աչք դրած վայլեվանների դեմ էլ մի ճար արա։

Մհերը վերցրեց իր դուրը դարկեց Գոհարի դռան չեմքին, ասաց.

— Գուրդս թող եստեղ մնա, փայլեվաններդը, վոր դան, էլ քեզ նեղություն չեն տա։ Կասեն Մհերը տանը քնած է ու ելի յետ կերթան։

Ասաց համբուրեց Գոհարին, ապա հեծավ ձին քշեց Սասուն։ Վոր հասավ Սասուն, տեսավ, վոր ժողովուրդն ելի նեղության մեջ է, թշնամիները խարջ էլին տարել, մարդիկ էլին սպանել. հորեղբայրն էլ վախից դուռը յոթ կողպեքով կողպել էր։ Մհերի դժարն յեկավ լացեց ու հորեղբոր դռնիցը կանչեց.

— Հերահոտ հորողբեր, վեր ելի՛, քու անուշ քնից վեր ելի։

Ձեն ընկավ Ոհանի ականջը, նա քնից զարթնեց ասաց.

— Մեկ բարակ ձեն յեկավ դիպավ ականջիս։

— Այ մարդ,— բարկացավ Սասուն,— ի՞նչ ձեն, դուռը փակել ես, ելի՞ կը վախենաս։

— Հալբաթ կը վախենամ, համ ծերացել եմ, համ էլ ազդականս մոտիցս հեռացել է։

Մհերը տեսավ դուռը չեն բացում, գնաց յելավ յերդիկի վրա կանչեց.

— Հերահոտ հորողբեր, վեր ելի, իմ տուն դեռին եմ դրեր, իմ տուն իմ դուրդին պահ եմ տվեր, իմ դուրդ Գոհարին եմ պահ տվեր, քո նեղությանն ձեն եմ լսեր, յեկեր եմ հասեր։

Ոհանը հասկացավ, վոր յեկողը Մհերն է, վազեց գնաց դուռը բացեց, Մհերին ներս առավ, գլուխն համբուրեց ու հարցրեց.

— Դու ինչպե՞ս ես քո տուն թողել յեկել. մենք եստեղ ախպեր ախպերով մեր տներ չենք կարող պահել։

— Ցեսս ենպես եմ յեկել, վոր մեկ ասված դիտե, մեկ յես. դուրդիս ահը չի թողնի մարդ մոտենա Գոհարի դռան։

— Դու հաղար բարով ես յեկել։

— Դե ասա՛, ո՞վ է քեզ նեղացնում հորողբեր։

— Կողբանինի տղերքը, չորսն, են, չորսն էլ դաշն են կտրեր։

— Լա՛վ, յես յերթամ չորսին էլ բռնեմ, բերեմ Ենոնց գատաստանը տեսնեմ, վոր Սասունը հանգիստ թողնեն։

Մհերը առավոտն յելավ, ձին հեծավ գնաց Լոռա դաշտ, տեսավ, վոր Կողբադինի չորս տղաները իր դեմն են գալիս, կռվի բռնվեց նրանց հետ, բայց հենց սկզբից մի նետ յեկավ դիպավ Քուռկիկ Ջալալի վոտքին, Մհերը թուր Կայծակինով դարկեց, նետի կեսը կտրվեց ընկավ, կեսը մնաց Քուռկիկ Ջալալու վոտքի մեջ։ Ապա Մհերը հարձակվեց բռնեց Կողբադինի չորս տղաներին ու բերեց հորեղբոր մոտ։

Ոհանը տեսավ Քուռկիկ Ջալալու վիրավորված վոտքը անմիջապես նետը հանեց, բերեց յաղութ զմրութ հալեց լցրեց վիրավորված տեղը։ Չիու վոտքը լավացավ, առաջվա պես ձին ելի կայտառացավ։

Ապա Մհերը Կողբադինի չորս տղաներին բեվռեց Սասնա դռներին ու ամեն ինչ կարգի դցեց։ Սասունն ելի ուրախացավ։ Ամեն տուն լիացավ, ամենքն որհնեցին Մհերի կյանքը։

Անցավ վորոշ ժամանակ Սառեյի աչքը կպավ Մհերին։ Ու Սառեն ինքն իրեն ասաց— «տղեն հորից խորոտ է, Ոհանը վաղ մեկել կմեռնի, արի յես եսոր ինձ երիկ անեմ, թող Մհերն եղնի Սասունի իշխան, յես էլ իշխանի կնիկ լինեմ, եղպիսով իմ վրեժը հանեմ Դավթից։ Ու յելավ գնաց Մհերի մոտ։

— Մհե՛ր,— ասաց,— ինչի ես թողել հորական տուն, մորական տուն ընկեր ես ոտար աշխարհ, Ոհանը չի կարող Սասունը պահել, արի ինձ առ Սասնա ճրագը վառ պահի։

— Եղ ինչ կասես հորեղբոր կնիկ, դու իմ մոր տեղն ես՝ յես պիտի յերթամ Գոհարն ինձի կոպատե։

— Գոհարն ոտար է ենոր սիրտը չի ցավա Սառունի վրա, համ էլ ո՞վ գիտե, հիմա նա, վոր վայլեվանի հետ սեր կանե, դուն արի ինձ առ.

— Եդ լինելու բան չե,—ասաց Մհերը։

Սառեն տեսավ, վոր եղպիսով չի կարողանում Մհերին խոսք հասկացնել մեկ որ ջուր դրեց, վոր լողանա ու Մհերին էլ կանչեց, վոր իր ղլխին ջուր լցնի։ «Մարմինս, վոր տեսնի սիրտը կը մեղավորնա»,— մտածեց Սառեն։ Սառեն մերկացավ տաշտը մտավ ու Մհերին ասաց,— «Ջուր լից»։ Մհերն աչքերը փակեց ու այնպես ջուր լցրեց Սառեյի վրա։

Սառեն եդ վոր տեսավ, շատ բարկացավ ինքն իրեն ասաց,—«Սառե՛, դու Սառե չլինես, թե Մհերին աշխարհի մեջ խաղք ու խայտառակ չանես»։ Յեվ Սառեն յելավ, շորերը հագավ բայց կապերը մի քանի տեղից բաց թողեց— ղոռաց, ճչաց, յերեսը չանդուեց

ու յերբ Ոհանը յեկավ հարցրեց, թե ինչ է պատահել, Սառեն պատասխանեց.

— Ի՞նչ պիտի լինի, յես գիտեյի թե հալալ կաթնակերը վորդի է յեկել մեր տուն, յես չգիտեյի, թե դու իրիկ ես բերել մեր տուն։

— Սուտ ես ասում այ կնիկ, դուն ո՞ւր Մհերն ո՞ւր։

— Անամոթի համար ամեն կնիկ, կնիկ է, նա ձեռ գցեց ինձ, յես չթողի, հետը կռվեցի։

— Վոր եղպես է, յես ենոր տանից կը վռնդեմ, նա Սասնա տան անունը խայտառակում է։

Յեվ Ոհանը գնաց Մհերի մոտ բարկացավ ասաց.

— Դո՛ւրս կորի իմ տնից, դու քո հոր տան պատիվը դեռին գցեցիր. դու էլ Սասնա տան ժառանգը չես, գնա՛, գնա՛, դու քո հոգին սատանի ու դեվի բաժին արիր։

— Հորեղբեր քո կնիկ քեզ խաբեր է, յես նրան ձեռ չեմ գցել։ Համա ես տուն ինձ հարամ եկավ, էլ ետեղ չեմ մնա։

Մհերը ձին հեծավ ու ճամբա ընկավ դեպի Գոհարը,—«ինչքա՞ն անիրավ է աշխարհը»,—ասում էր Մհերը ու ձին առաջ էր քշում։

Գնաց Մհերը ու տեսավ, վոր մի դաշտի մեջ քառասուն մարդ քավ-քրտնքի մեջ մտած կաշխատեն, Մհերը մոտեցավ նրանց բարեվ տվեց, բարեվ առավ ու յերբ հարցրեց, թե ինչ մարդիկ են, մեկը նրանցից ասաց.

— Մենք քառասուն աղբեր ենք, դու էլ արի մեզ ախպերացիր, դառնանք քառասուն ու մեկ։

— Ցես կլինեմ ձեզ ախպեր, համա ասեք տեսնեմ դուք ետեղ ի՞նչ կանեք։

— Մենք մեր քրոջ գերին ենք։ Նա արնակեր, մարդակեր է, ժողովուրդ դոր դիշեր կը դատի, նա կը տանի կուտի, դրանով էլ չի կշտանում, մարդիկ է ուտում։ Իր յերկրի մարդկանց շատերին կերել է, նա վոչ հեր կը ճանչնա, վո՛չ մեր, վո՛չ ախպեր։ Մեր հերն ու մերն էլ են կերավ, վաղ մեկել մեզ էլ կուտի, թե ճար դիտես, արա՛։

— Շատ լավ,— ասաց Մհերը վոր դուք եղպես նեղ տեղն եք յես ձեզ ախպեր կը լինեմ։ Բայց ի՞նչ անելով բաներ կան աշխարհքում։

Քիչ հետո քուրն յեկավ տեսավ Մհերին ասաց.

— Ես ի՞նչ մարդ է։

Ախպերներն ասացին.

— Խեղճ մարդ է, կուզի աշխատանք անի, ապրի՛։

— Դե,— ասաց դև քուրը դառնալով Մհերին,— գնա դու էլ աշխատիր ենոնց հետ, վոր քեզ էլ հաց տամ իրիկունը։

Ու դև քուրը թողեց գնաց սարը. ենտեղ շատ մարդիկ եր հավաքել, գնաց վոր եսորվա ուտելիքն ուտի։

Մհերն քառասուն ախպոր հետ ամբողջ որը աշխատեց հանդում, քարեր խճեր հավաքեց դեն թափեց, քաղհան արեց ու յերբ իրիկուն յեղավ, դաղաբած—բեզարած ախպերների հետ գնաց քաղաք։ Քաղաքը կեսվակես եր յեղել։ Դև-քույրը մարդ եր, վոր կուտեր։

Մհերը յեղբայրների հետ մի կտոր չոր հաց կերավ ու նրան մի չոր խշտի ցույց տվին, վոր պառկի քնի։ Մհերն ասաց.

— Դառը դատողը դուք, հաց վատակողը դուք, ինչի՞ եսպես կապրեք։

Յեղբայրներն ասին, վոր դրանով էլ գոհ կլինեն, յեթե դև քույրն իրենց չուտի։

Մհերը բարկացավ յելավ յեղբայրներին հավաքեց, գնաց դև քրոջ ապարանքը։ Քույրը դեռ սարից չեր յեկել։ Մհերը տեսավ, ամբարները լիքն են հացով, յուղով, մեղրով ու ամեն տեսակ բարիքներով։

— Հապա ես բաներն ո՞ւմ համար է,—հարցրեց Մհերը։

— Ես բոլորը մեր քրոջ համար։ Ե՛ն ամեն էլ կուտի, մարդ էլ կուտի։

Մհերը դուրսի անցավ։ Մեկ աղպորն ուղարկեց ջուր բերի, մյուսին տաշտ։ Մեկելը ալյուր բերեց, մյուսը թոնդիր վառեց, մեկը վոչխար մորթեց, վոր խորովի։ Մհերն էլ խմոր արեց ու առատ-առատ հաց թխեց, բոլորը կերան-կշտացան դեռ մի քառասուն մարդու ուտելիք էլ մնաց։

Բայց ախպերների սիրտը դեռ վախ կար, մի քանիսը գնացին Դև-քրոջ ճամբան ելին պահում։

Մհերը կուշտ ու կռինջ կերած յելավ նստեց տան դռանը, տեսավ դև-քուրը գալիս է։

— Ես ի՞նչ հոտ է կառնեմ,—ասաց նա ու ներս մտավ տան մնացած ամբողջ հացն ու միսը կերավ։ Մհերը նրա յետևից ներս մտավ տեսավ իր յեփած ուտելիքից-հացից փշուր չի մնացել, հարցրեց.

— Ի՞նչ յեղավ ես հացերը։

— Ես ինձ համար մեկ բրդուջ եր, ասաց դև-քուրը և են ե՛ կուզեր, վոր ձեռ դցեր Մհերին ել ուտեր, բայց Մհերը մի հատ ենպես զարկեց, վոր Դև-քրոջ գլուխը թռավ:

Են քառասուն աղջիկները, վոր յեկան ես բանը տեսան շատ ուրախացան, Մհերի ձեռքն ու վոտը համբուրեցին, ասացին.

— Դու մեր ազատիչն ես, մենք ել, մեր յերկիրն ել փրկվեցինք: Թե մի քիչ ել ուշ դայիր, ետսեղ չոր ապառաժ կլիներ: Դու յեղիր մեզ Թագավոր մենք բոլորս ել քո ծառաները կլինենք:

— Ցես ձեզանից վոչ մի բան չեմ ուզում,— ասաց Մհերը, վոչ Թագավոր կլինեմ, վոչ ձեր քաղաքին տեր կլինեմ: Ցես Դավթի տղա Մհերն եմ, յես ետսեղ չեմ կարող նստել, յերթամ տեսնեմ ել ինչ անիրավություն կա աշխարհում. մի բան, վոր վոչ ժառանգ կա ինձ, վոչ ել մահ ունեմ:

Ու Մհերն ենտեղից ճամբա ընկավ գնաց հասավ Բաղդադ: Մի ծերունու տեսավ հարցրեց:

— Ի՞նչ կա Բաղդատ քաղաքում, Բաղդադա Թագավորը վո՞ր մեկն է:

— Ցես Թագավորին չեմ ճանաչում,—ասաց ծերունին,—բայց ասում են, վոր նա ե՛ն խալիֆի թոռն է:

— Են խալիֆի, վոր Ծովինարին բերեց:

— Են խալիֆի թոռն է:

— Բաղդասարի դերեզմանը վո՞ր տեղ է.

—Թագավորի սենյակի դեմն է:

Մհերը գնաց Թագավորի սենյակի կողմը: Տեսավ

Թագավորը դալիսե: Թագավորը յեկավ նայեց Մհերին, ասաց.

— Դո՞ւ ինչ մարդ ես, վոր իմ սենյակի առաջ ման կուգաս:

— Դու չե՞ս գիտի, թե յես ինչ մարդ եմ: Մհերն եմ, Սասնա տնից եմ:

Թագավորը միտք արաց, ասաց.

— Մեր Թվականի մեջ գրված է, վոր Սասնա տնից պետք է մի մարդ դա ետսեղ, ես քաղաքը մեր ձեռքից առնի:

Մհերն եդ խոսքերը, վոր լսեց, տեսավ Թագավորը շատ է վախեցած, ասաց.

— Քաղաքը քո ձեռքին չեմ խլի: Աշխարհ անիրավություն շատ կա, յես անիրավ գործ չեմ անի: Բաղդասարը Սասնա տանից է. ուիտ եմ արել, գալ ենոր գերեզման տեսնել, ցույց կտա՞ս ինձ ենոր գերեզմանը:

Թագավորն ուրախացավ, Մհերին տարավ Բաղդասարի գերեզմանի մոտ:

Մհերը ձիուց իջավ, գնաց յերկրպագեց Բաղդասարի գերեզմանին, աղոթք արավ, ձեռքը զարկեց գերեզմանի քարին ու ձեռքի նշանը մնաց ու մնաց քարի վրա:

Մհերն իր ուխտը կատարելով ուղեց վերադառնալ Գոհարի մոտ: Ճամբեն անցնում եր Զգիրու քաղաքով: Ցերը Զգիր մտավ ժողովուրդը սգի մեջ եր: Ելի ի՞նչ անիրավություն են արած,—մտածեց Մհերը: Գնաց հարցրեց, ամեն ինչ իմացավ: Զգիրում մի գետ կա անունը Զգիրու Շատ: Այնպես է պատահում, վոր

բազմաթիվ դետեր միանում են իրար, դառնում են մեկ մեծ դետը ու այդ մեծ դետը գալիս քաղաքն ավերում է: Ու հիմա նորից ավերել էր և ժողովուրդը սուգի մեջ էր: Այս բանն իմանալով, Մհերը գնաց մեծ մեծ վեմեր բերեց դցեց քաղքի յետևում դետի մեջ և դետը բաժանեց յերկու ճյուղի: Մեկ ճյուղը քաղքի մեկ կողմից կերթար, մեկելը մյուս կողմից ու էլ քաղաքը չէր ավերվում:

Հետո Մհերը մի մեծ բերդ էլ կառուցեց քաղաքի մոտ. քաղաքն ամեն վտանգից ապահովեց ու ասաց.

— Գետն էլ անիրավություն կանի, թե մարդն ենոր չհաղթի:

Այնուհետև Մհերը ձին քշեց ու գնաց դեպի Գոհարը: Տուն հասավ, տեսավ գուրզն ինչպես դրել էր, ենպես էլ մնացել էր: Մարդ չէր համարձակվել մըտնել Գոհարի մոտ: Մհերը գնաց մտավ տուն ու ի՞նչ տեսնի, Գոհարը մեռել ու պառկած մնացել էր թաղթին: Մհերը վողբաց, գնաց մեռած կնոջն համբուրեց ու տեսավ, վոր նրա ձեռքի մեջ մի թուղթ կա: Մհերը թուղթը վերցրեց, Գոհարն ենտեղ դրել էր,—«Մհե՛ր, ինչ ժամանակ դու հետ դաս, քեզնից կը խնդրեմ ինձ տանես Սասուն, թաղես Խանդութ Խաթունի մոտ»:

Մհերը Գոհարի մարմինը բարձեց ձիուն բերեց Սասուն: Սասունում էլի շատ բան փոխվել էր: Զենով Ոհանը մեռել էր, ժողովուրդը նեղության մեջ էր: Մհերը գերեզման սարքեց և Գոհարին թաղեց Խանդութ Խաթունի մոտ:

Ապա բերեց վարդապետներ ու Սասնա տան բոլոր մեռածների համար մեկ-մեկ պատարագ անել տվեց:

Տեսավ, վոր էլ հանգիստ չի կարող մնալ. քանի կերթա աշխարհում անիրավությունը կը շատանա: Ասեց, յերթամ հորս ու մորս գերեզմանին ընկնեմ, տեսնեմ ինչ կասեն: Առաջ գնաց մոր գերեզմանին ընկավ՝ կանչեց.

— Մերիկ վեր ելի. մերիկ վեր ելի: Մհերն եմ, քո կաթն եմ ծծել, դու ինն ամիս ինձ քո սրտի վրա խնամել ես, շատ ես տանջվել քո աստվորների համար: Ցես աշխարհ շատ եմ ման յեկել, շատ անիրավություն եմ տեսել: Ամենից քաղցրը աշխարհի վրա, դո՛ւ ես, իմ ազի՛զ մերիկ:

Մոր գերեզմանից ձայն լսվեց.

— Վորդի ի՞նչ անեմ, վորդի ի՞նչ անեմ, դույն ու կերպ յերսես թափել է, աչքերուս լույսը կտրվել է: Ոձն ու կարիճն են բուն դրել վրաս: Դու էլ բավական է ման գաս աշխարհի վրա: Քո տեղը ադռավու քարն է, գնա՛ Ադռավու քար:

Մհերը տրտմեց շատ լաց յեղավ, ելի կանչեց մորը, բայց մոր գերեզմանից այլևս ձայն չեկավ: Այս անգամ գնաց հոր գերեզմանին լաց յեղավ՝ կանչեց.

—Հերի՛կ, վեր ելի, հերի՛կ, վեր ելի, Սասնա մեծ տանից անմաս եմ մնացել, աշխարհքի յերեսին վորբ եմ մնացել: Հերիկ, վեր ելի. դեսլինն էլ թուլացել է, վոտքերս չի պահի: Հերիկ վեր ելի, փափագով եմ մնացել քո անուշ հոտին, կարոտ եմ մնացել քո անուշ խոսքերին: Աշխարհը շատ ման յեկա. ամենից քաղցրը աշխարհիս վրա, դո՛ւ ես, իմ ազի՛զ հերիկ:

Հոր գերեզմանից ձայն լսվեց.

— Վորդի ի՞նչ անեմ, վորդի ի՞նչ անեմ, դույն

ու կերպ թափել է յերեսես, աչքերուս լույսը կտրվել է, ոձն ու կարիճն են բուն դրել վրաս: Դուն ել բավական է ման գաս աշխարհի վրա, բավական է: Քո տեղը Ազռավու քարն է: Աշխարհը շատ անիրավ է: Աշխարհը պետք է քանդվի, մեկ ել նորից չինվի, նոր են ժամանակ դու դուրս կուգաս Ազռավու քարից, են ժամանակ դեսինը կը դիմանա քո ձիու առջեվ:

Մհերը շատ լաց յեղավ, ելի կանչեց հորը, բայց հոր դերեզմանից այլևս ձայն չեկավ:

Մհերը հեծավ ձին ու գնաց դեպի Վոստան. աշխատող մարդիկ հունձն արել եյին, կալը կալսել ու հացի կարատ, կոպատեյին, վոր ցորեն դարի տուն տանեն, ալան ուտեն:

Յեկավ Վոստանու իշխանը, յեկավ վանքի վարդապետը, յեկավ գեղի ռեսը, ամեն մեկն իր փայը տարավ: Աշխատող մարդիկ լաց ու շիվան բարձրացրին:

— Ես ինչ կանցնի, կդառնա,—ասաց Մհերը,—ինչ կանեմ, ինչ կդառնամ անիրավությունը կ՚ա ու կը շատանա:

Յեվ յելավ թուրը քաշեց հասավ իշխանին, իշխանը իր մարդիկ հավաքեց կովի մտավ Մհերի հետ:

Մհերն այս անդամ ինչքան կը զարկեր, թուրը չեր բռնի, ձիու վոտները մինչև ծունկերը հողի մեջ կը խրվեր: Մհերն ասաց,— «Ե՛յ, ե՛, զուր է, դեռինն ել անիրավության բերից թուլացել է, իմ ձիու վոտքերի տակ չի դիմանում»:

Ու իշխանը կապ դցեց, Մհերին կապեց: Մհերն, վոր կապ ընկավ կանչեց.— «Հիշեմ հացն ու դինին

տեր-կենդանին, հիշեմ Մարութա բարձր Աստվածածին, հիշեմ իմ թեվի Խաչ Պատերազմին»:

Ասաց, զարկեց, կտրեց իշխանի գցած կապը: Ինքն ու Քուռկիկ Ջալալին ազատվեցին:

Մհերն ել չկանգնեց, քշեց ձին դեպի Ազռավու քար: Հասավ Վանա մոտիկ մի սարի տակ: Այնտեղ մի մեծ, ազատվի պես սև քար կար: Մհերն ասաց.— «Թրովս զարկեմ ես քարին, թե կտրեց յես չեմ մեղավորցել, աշխարհն է մեղավորցել, թե չկտրվեց մեղավորցեր եմ»:

Ու թուրը զարկեց քարը միջից յերկու կես յեղավ, այս ու այն կողմի վրա գնաց: Բացվեց մի քարանձավ ու Մհերն իր ձիով մտավ քարանձավը: Ցերը վոր ներս մտավ ելի են սեվ քարը յեկավ միացավ իրար:

***

Ամեն տարի Համբարձման դիշերը մի ծեր հովիվ կերթա այդ քարի առաջ: Մհերի քարն իրարուց կը բացվի, հովիվը ներս կը մտնի ու կը տեսնի, վոր մի հսկա մարդ ենտեղ նստած է իր ձիուն ու թուրն ել պատրաստ պահած ունի ձեռքում:

Հովիվն հարցնում է:

— Մհե՛ր, դու յերբ պիտի դո՞ւրս գաս քարանձավից:

Մհերը պատասխանում է:

— Քանի աշխարհը չար է, քանի աշխարհը լի է անիրավությամբ յես աշխարհ չեմ մտնի: Աշխարհը պետք է հիմքից քանդվի մեկ ել չինվի: Ցերը ցորեն

յեղավ մի մասուրի չափ, գարին եղ մի ընկուզի չափ, յերբ վոր ցորենն ու գարին բերես, բռիս մեջ սեղմեմ ու վոչ թե արյուն դուրս տա, այլ կաթ,—են ժամանակ յես դուրս կուգամ ես տեղից:

Ու ամեն տարի հովիվը գնում է. նույն հարցն է տալիս և նույն պատասխանն է ստանում:

Ուրբաթե ուրբաթ եղ ով անցնում է այդ քարի կողքով լսում է Քուռկիկ Ջալալու խրխնջոցը:

ՎԵՐՋ

16–24 հունիսի
1939 թ. Յերևան

ՅՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԿ-ՈՐ
Ա. Ս. Մասեյանի
անվան գրադարան

Պատ. խմբագիր՝ Գ. Բորյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Ալիքունյան
Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան

Ելիտի լիազոր՝ Վ.— 2174. Հրատ №4979.
Ներ 622. Տիրաժ 5000.
62×94. Տպագր. 10 մամ.
մամ. 25600 նշան.
Ձևված է արտադրության 9 հուլիսի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 13 սեպտեմբերի 1939 թ.
Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

3

ՀՀ Ազգային գրադարան
NL0365648

55410

ЭП 804